

# ՄՅՎԱՆԻ ԵՍՈՅՎՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՑ ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱՐԱՆԵԶՈՒ ՄԱՍՈՒԼՈՒՄ 1908-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ





1130054 0701947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՅԱՄՆԻԿ ԵՍՈՅԱՆ

A 101318

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՄԻՐԻԱՅԻ  
ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՍՈՒԼՈՒՄ  
1908-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ


ՄԵՏՐՈՊ ԱՐՔ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԿԱՐ  
120



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
120

*Signature*

ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2015



ՀՏԴ 070:941(479.25)  
ԳՄԴ 76.12+ 63.3(22)  
Ե 597

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ**

**խմբագիր՝ պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ալբերտ Ա. Խառատյան**

### **ԵՍՈՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ**

Ե597 Հայկական հարցը Սիրիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին / Մ. Եսոյան. – Եր.՝ Պատմության ինստիտուտ, 2015.- 162 էջ:

Մենագրության մեջ պատմագիտական գրականության և Սիրիայի արաբական պարբերական մամուլի նյութերի հրճան վրա հստումնասիրված է Հայկական հարցի լուսաբանումը 1908-1914 թվականներին: Զննության են առնված 1908 թ. հեղաշրջումից հետո կայսրությունում տիրող իրավիճակի, 1908-1914 թթ. հայկական կոտորածների և դրան հաջորդած հայելի գաղթի, 1909 թ. Կիլիկիայի հայելի կոտորածների, 1910-1913 թթ. հայ-քրդական հարաբերությունների ու 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների հիմնահարցերը նշված մամուլում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 070:941(479.25)  
ԳՄԴ 76.12+ 63.3(22)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան պետությունն իր պատմության ողջ ընթացքում մեծապես ձգտում էր սեպ խրել կայսրության սահմաններում ապրող բոլոր ազգերի հարաբերությունների մեջ: Ղա հանգեցնում էր նրան, որ ազգերը նախ ձգտում էին ինքնավարության՝ ցանկանալով տապալել օտար լուծը, ապա՝ լիակատար անջատման և անկախության:

19-րդ դարում օսմանյան սուլթանների՝ հասարակական կյանքի բարելավմանն ուղղված որոշումներն ընդունվել էին հապճեպ՝ Եվրոպական պետությունների ճնշման տակ և չէին հասել իրենց նպատակին: Ավելին՝ Աբդուլ Համիդ երկրորդը՝ մտահոգ իր բռնապետության հարատևմամբ, քիչ թե շատ զարգացնում էր միայն ռազմական ոլորտը՝ զենքի միջոցով իր բռնապետությունը հզորացնելու համար: Սակայն օսմանյան սուլթանների վարած այս քաղաքականությունը հանգեցնում էր օսմանահպատակ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների զորեղացմանը: Թե՛ արաբական երկրներում (Եգիպտոս, Իրաք, Շամի երկիր, Արաբական թերակղզի, Եմեն), թե՛ Բալկանյան թերակղզում (Հունաստան, Ռումինիա, Սերբիա, Բուլղարիա) Ռուսաստանի և Եվրոպայի օգնությամբ կամ միայնակ, արաբները և բալկանյան ժողովուրդները կամ հասնում են լայն ինքնավարության՝ օսմանյան իշխանությունը դարձնելով ձևական, կամ հասնում են լիակատար ինքնիշխանության: Սակայն Եվրոպական պետություններին ձեռնտու չէր թույլ և հետամնաց Օսմանյան կայսրության փոխարեն Արևելքում նորահայտ զարգացող պետությունների հանդես գալը, ուստի նրանք շա-

հագրագրված էին պահպանել կայսրության տարածքային ամբողջականությունը, իսկ ժողովրդական լայն զանգվածների պահանջները բավարարել բարեփոխումների ծրագրերով:

Ֆրանսիական լուսավորական շարժման և հեղափոխության արդյունքում 19-րդ դարում արաբները գրական զարթոնքի ճամփան բռնեցին, որի արդյունքում արաբ ժողովուրդը վերգտավ ազգային ինքնագիտակցությունը և 1916 թ. ոտքի ելավ օսմանյան բռնապետության դեմ:

19-րդ դարում արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի զարթոնքը պարարտ հող նախապատրաստեց արաբական՝ մասնավորապես սիրիական մամուլի զարգացման համար:

Պետք է նշել, որ տարիներ շարունակ արաբական մամուլն էական զարգացում չէր ապրում և դուրսում էր տեղում: Օսմանյան հետամնաց վարչակարգը խոչընդոտում էր նրա զարգացումը: Ճիշտ է, սուլթան Աբդուլ Համիդ երկրորդն իր կառավարման սկզբնական շրջանում մամուլին ազատություն էր տվել, բայց դա երկար չէր տևել:

1908 թ. թուրքերը, արաբները, հայերը և օսմանահայատակ այլ ժողովուրդներ ոտքի են ելնում աբդուլհամիդյան բռնապետական վարչակարգի դեմ, տապալում՝ կարծելով, թե ընդմիջտ կվերանա բռնապետությունը: Սակայն շուտով հայերի ու արաբների դաշնակից երիտթուրքերը, իշխանության գալով, հրաժարվում են պանիսլամիզմից և առաջ քաշում պանթուրքիզմի ծրագիրը՝ դարձնելով այն իրենց ներքին և արտաքին քաղաքականության գաղափարական առանցքը: Թուրքացման պետական քաղաքականությանը դիմակայելու ընդհանուր խնդիրը նոր ժամանակների համար դարձավ այն կարևոր հենարանը, որի վրա կառուցվեցին հայ-սիրիական բարեկամական հարաբերությունները: Արաբների հայամետ դիրքորոշմանը նպաստել է Օսման-

յան կայսրության պանթուրքիզմի գաղափարախոսությունը, քանի որ վերջինս կայսրության ոչ թուրք տարրերի բռնի թրջացման նպատակ էր հետապնդում<sup>1</sup>:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ուսումնասիրվող ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում աշխատանքի բերումով գտնված դիվանագետների զեկուցագրերը, նամակագրությունը, միսիոներների զեկույցները և հուշերը, ինչպես նաև մի շարք երկրների պարբերականներն ու մամուլը:

1908-1914 թթ. լույն տեսած Սիրիայի արաբալեզու պարբերականները մեր կողմից ուսումնասիրվում են որպես պատմական աղբյուր, որն արժեքավոր տեղեկություններ է տալիս ժամանակի քաղաքական, հասարակական, տնտեսական իրավիճակի, օսմանյան իշխանությունների վարքագծի, ինչպես նաև հայերի և օսմանահպատակ մյուս ազգերի վիճակի մասին: Սիրիայում մեր կողմից հայտնաբերված արաբական աղբյուրները չնայած շատ չեն թվով, այնուամենայնիվ կարևոր նշանակություն ունեն և արժանի են լուրջ ուշադրության: Օգտագործված թերթերը գտնվում են Դամասկոսի Ասադի անվան գրադարանում:

Հայերի կոտորածների, Հայկական հարցի և, հատկապես, Սիրիայի արաբալեզու մամուլում դրանց լուսաբանման, արտացոլման և մեկնաբանման գիտական ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմագիտական, աղբյուրագիտական, այլև քաղաքական արդիական նշանակություն, քանի որ ինչպես երիտթուրքական պետական գործիչները, այնպես էլ նրանց հաջորդած և ներկայիս Թուրքիայի պաշտոնատար անձինք, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջանների թուրք պատմաբաններն իրենց գործե-

---

<sup>1</sup>.173. صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في ارمينيا الغربية، بيروت 1996، ص.173. Սալեհ, «Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում», Բեյրութ, 1994, էջ 173:

րում խեղաթյուրում են պատմական ճշմարտությունը, փորձում թաքցնել 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբի հայկական կոտորածները և առհասարակ, հայերի ցեղասպանության փաստը: Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլը կարևոր է ոչ միայն հայ ժողովրդի 20-րդ դարի սկզբի պատմությունը գիտականորեն ուսումնասիրելու և լուսաբանելու, այլև ցեղասպանության քաղաքական ակունքները բացահայտելու, երիտթուրքական իշխանությունների կողմից 1909 թ. Կիլիկիայի հայերի կազմակերպած զանգվածային կոտորածները դատապարտելու, ինչպես նաև երիտթուրքական կառավարության՝ օսմանահպատակ ժողովուրդներին իրար դեմ հրահրելու քաղաքականությունը մերկացնելու տեսակետից:

Աղբյուրագիտական տեսակետից մինչ այժմ չեն ուսումնասիրվել Հայկական հարցի վերաբերյալ Սիրիայում գտնվող որոշ փաստաթղթեր ու մամուլի վկայությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայկական հարցի ուսումնասիրման համար:

Մեր ուսումնասիրության ընթացքում փորձել ենք հայտնաբերել, ուսումնասիրել Սիրիայի արաբալեզու մամուլում Հայկական հարցի մասին տեղ գտած տեղեկությունները, որոնք հիմք կծառայեն նոր վերլուծությունների համար: Կարևոր խնդիր է նաև սիրիական արաբական տեսանկյունից մամուլի օգնությամբ պարզելու 1908-1914 թթ. հայկական կոտորածների պատճառները, կոտորածների ընթացքում սպանված հայերի թվաքանակն ու հայերի կրած նյութական վնասների չափը:

Սույն աշխատությունում ներկայացված նյութերը, հոդվածները հեռու են կողմնակալ լինելուց, դրանց մեջ չկա մոտեցման քաղաքականացում, չկան նաև սեփական շահերից բխող գնահատականներ: Այստեղ հարցը լուսաբանվել է բացառապես սիրիացի արաբի տեսանկյունից:

Ներկայացված հավաստի աղբյուրներն ու նյութերը տալիս են ճշմարտացի և իրական պատկերացումն այն մասին, թե ինչպիսին է եղել Սիրիայի արաբների վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ:

20-րդ դարի սկզբին Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի ուսումնասիրությունը և դրա հարուստ նյութերը նոր լույս են սփռում հայոց պատմության այդ շրջանում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Այդ ժամանակաշրջանում հրատարակված Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի՝ հայերին վերաբերող նյութերը յուրահատուկ սկզբնաղբյուր են, որոնք պարունակում են ականատեսների բազում արժեքավոր վկայություններ, արտասահմանյան թղթակիցների հաղորդումներ, հայ և օտարերկրացի քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների հոդվածներ, ելույթներ, վերլուծություններ, ինչպես նաև օսմանյան խորհրդարանի պատգամավորների ճառեր, ելույթներ, նամակներ:

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է 1908-1914 թվականները, թեպետ հետազոտության տրամաբանությամբ՝ ուսումնասիրության մեջ հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են գալիս ժամանակագրական շրջանակներից: Հակիրճ ներկայացնելով 19-րդ դարում տեղի ունեցած արաբական զարթոնքի, ուսումնասիրվող ժամանակահատվածում սիրիական մամուլի ընդհանուր կացությունը, այնուհետև ներկայացվում է Հայկական հարցի լուսաբանումը սիրիական արաբական մամուլում:

Աշխատության նպատակն է ուսումնասիրել 20-րդ դարի սկզբին հրատարակված Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի՝ հայերին վերաբերող նյութերը: Այդ նպատակով մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնել ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սիրիայի պարբերական մամուլի ընդհանուր կա-

ցությունը, ներկայացնել 1908-1914 թթ. հայկական կոտորածների և դրան հաջորդած հայերի գաղթի արձագանքը, 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների լուսաբանումը Սիրիայի արաբալեզու մամուլում՝ անդրադառնալով Կ. Պոլսի, Սսի հայ պատրիարքների կատարած քայլերին, ականատեսների վկայություններին, օտարերկրյա թղթակիցների հաղորդումներին, Սիրիայի արաբալեզու մամուլի վերլուծություններին, լուսաբանել Հայկական բարենորոգումների (1912-1914 թթ.) խնդիրը նշված մամուլում, ներկայացնել 1908 թ. հեղաշրջումից հետո կայսրությունում տիրող իրավիճակի լուսաբանումը «Ալ-Թակադդում» թերթում, մերկացնել երիթուրքական իշխանությունների՝ հայ-քրդական հարաբերությունները սրելու, երկու ազգերի միջև թշնամանք առաջացնելու քաղաքականությունն ու արժեքավորել օսմանյան խորհրդարանի հայ և թուրք պատգամավորների, Կ. Պոլսի հայ պատրիարքների որոշ ելույթներ, ճառեր, նամակներ:

Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսակետից մեթոդական իմաստով աշխատանքում խիստ կարևորվում է համալիր մոտեցումը ինչպես սկզբնաղբյուրներին, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրություններին: Կարևորություն է տրվում նաև սկզբնաղբյուրների և գիտական աշխատությունների համակցությանը, որի միջոցով պատմական դեպքերի գնահատականը դառնում է ավելի հավաստի և օբյեկտիվ: Եզրահանգումները կատարված են փաստական նյութերի հետազոտության հիման վրա:

Աշխատության գիտական նորոյթը կայանում է 1908-1914 թթ. հայկական գաղթի, Կիլիկիայի հայերի 1909 թ. կոտորածի, 1910-1913 թթ. հայ-քրդական հարաբերությունների, 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների՝ Սիրիայի արաբալեզու մամուլում անմիջական անդրադարձի մեջ: Մեզանում բացակայում է նշված մամուլում տվյալ թեմայի վերաբերյալ հանգամանալի և համա-

կողմանի հետազոտությունը, ինչպես նաև հետազոտվող թեմայի խորությամբ առաջադրված խնդրի բազմազանությունը: Այս աշխատության մեջ փորձ է արվում լրացնել այդ բացթողումը: Այն միաժամանակ և՛ աղբյուր է, և՛ ինքնակա հետազոտության առարկա՝ շնորհիվ փաստերը արձանագրվելու և դրանք մեկնաբանելու մամուլի առանձնահատկության: Բացի այդ՝ Սիրիայի արաբական մամուլի՝ կիլիկիահայության 1909 թ. կոտորածի մասին հաղորդած տեղեկությունները օգտակար կլինեն կոտորածի ընթացքում սպանված հայերի ընդհանուր թիվը ճշտելու, հայերի կրած նյութական վնասների հաշվառման գործում:

Խնդրո առարկա ժամանակահատվածում մենք ուսումնասիրել ենք հայերի մասին հիշատակումները «Ալ-Մուքթաբաս», «Ալ-Թակադդում», «Ալ-Շահբաս», «Ալ-Շամ», «Ալ-Ռումնա», «Ալ-Նիամա» պարբերականներում: Չի բացառվում, որ եղել են նաև սիրիական այլ թերթեր, որոնք նույնպես լուսաբանել են հայերի մասին կարևոր իրադարձություններ:

Հիրավի առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել 1908-1914 թթ. Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի էջերում տպագրված հայերին վերաբերող բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Սիրիական մամուլում տեղ գտած բազմաթիվ օտար սկզբնաղբյուրների, ինչպես նաև լրատվական նյութերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է ինչպես ողջ թեմայի, այպես էլ նրա առանձին կողմերի նորովի ուսումնասիրությանն ու նոր եզրահանգումներին:

Աշխատության մեջ ներկայացված նոր նյութերը և դրույթները կնպաստեն աբդուլհամիդյան վարչակարգի, երիտթուրքական իշխանությունների՝ արևմտահայության նկատմամբ վարած ցեղասպան քաղաքականության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելուն, կբացահայտեն Հայոց ցեղաս-

պանության շղթայի մաս կազմող 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների վերաբերյալ կարևոր փաստեր, երևան կհանեն երիտթուրքերի կառավարման շրջանում հայ-քրդական հարաբերությունների նոր մանրամասներ, 1894-1914 թթ. հայկական կոտորածների ու գաղթի նոր տեղեկություններ, ինչպես նաև կբացահայտվի երիտթուրքական իշխանությունների՝ 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների իրականացման գործում նրանց որդեգրած քաղաքականության պատկերը: Իրադարձությունների գիտական վերարտադրությունն այս իմաստով դառնում է կռվան և փաստարկ՝ հայերի զանգվածային կոտորածները քողարկող ու ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ, որի մեթոդներն ու նպատակադրումներն առ այսօր շարունակում են հարատևել նենգափոխման ու կեղծարարության նույն հենքի վրա: Սիրիայի արաբալեզու մամուլի անմիջական ուղակի տեղեկատվությունը հերքում է հայկական կոտորածների ու գաղթի պատմության թուրքական կեղծարարների մտավարժանքները:

Գիտականից բացի, աշխատությունն ունի նաև քաղաքական և գործնական նշանակություն: Հայկական հարցի լուսաբանումը Սիրիայի արաբալեզու մամուլում և աշխատության մեջ կատարված հետևություններն արդիական են և օգտակար: Աշխատությունում արված եզրակացություններն կարող են օգտագործվել Հայոց պատմությանը նվիրված դասընթացներում և դասագրքերի համապատասխան բաժիններում:

Հայ պատմագրության մեջ ահռելի աշխատանք է կատարվել Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում: Սակայն այս գրականության մեջ բացակայում են 1908-1914 թթ. Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի նյութերի խորը և համակողմանի ուսումնասիրությունները: Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ հայ պարբերական մամուլի պատմության մեջ,

կարելի է ասել, որ չի ուսումնասիրվել մեծ կարևորություն ունեցող Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլի էջերում Հայկական հարցի արտացոլման և լուսաբանման թեման: Հայկական հարցի վերաբերյալ նշված պարբերական մամուլում գոյություն ունեցող ստվար նյութերից միայն մի մասն է օգտագործվել Նորա Արիսյանի կողմից<sup>2</sup>: Սիրիական արաբական մամուլի բազմաթիվ նյութեր, որոնք անգնահատելի սկզբնաղբյուրներ են, դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից:

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել և առանցքային նշանակություն են ունեցել նախ և առաջ Սիրիայի արաբական հանրապետության երկու խոշոր քաղաքներում՝ Դամասկոսում և Հալեպում 1894-1914 թթ. հրատարակված սիրիական պարբերական մամուլի («Ալ-Թակադդում», «Ալ-Մուքթաբաս», «Ալ-Շամ», «Ալ-Ռումմա», «Ալ-Շահբա», «Ալ-Նիամա») նյութերը՝ (լրատվություն, թղթակցություններ, հոդվածներ, ակնարկներ և այլն) Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Մեծ չափերով օգտագործվել են պատմության մեջ անգնահատելի տեղ և նշանակություն ունեցող ականատես-ժամանակակիցների հուշերն ու ուսումնասիրությունները:

Խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը<sup>3</sup>: Մեծ արժեք են ներկայացնում նաև ՀՀ Ե. Չարենցի անվան Գրականության ու Արվեստ-

<sup>2</sup> Սիրիական մամուլում տվյալ թեմայի վերաբերյալ որոշ տեղեկություններ կան սիրիահայ Նորա Արիսյանի աշխատության մեջ, որտեղ հիմնականում խոսվում է հայկական կոտորածների վերաբերյալ Սիրիայի հասարակական վերաբերմունքի մասին: Մանրամասն տես Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության լուսաբանումը սիրիական մամուլում (1877-1930), Դամասկոս 2004: دمشق 2004. (1930-1877) نورا اريسيان، أصداء الإبادة الأرمنية في الصحافة السورية

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գգ. 14, 49:

տի թանգարանի Թ. Ազատյանի<sup>4</sup>, Գ. Ասլանյանի<sup>5</sup> ֆոնդերում զետեղված նյութերը:

Արաբական զարթոնքի, 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին սիրիական մամուլի կացության, սիրիական մամուլի զարգացման գործում հայերի դերի ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել արաբ բազմաթիվ հայտնի պատմաբանների աշխատությունները: Դրանցից կուզենայինք նշել Հ. Օսմանի<sup>6</sup>, Ֆ. Տարազիի<sup>7</sup>, Ս. Մուսլիի<sup>8</sup>, Ն. Յաֆիի և Խ. Մուլայի<sup>9</sup>, Ս. ալ-Մուդաուարի<sup>10</sup>, Ա. Խուդուրի<sup>11</sup>, Ս. Ալիան ալ-Մաշուտի<sup>12</sup>, Ի. Լոկայի<sup>13</sup>, Ժ. Իլիասի<sup>14</sup>, Ա. Մարուայի<sup>15</sup>, Ա. Աբու Ֆախրի<sup>16</sup>, Ս. Մալազիի<sup>17</sup>, Ժ. Դայայի<sup>18</sup>, Աբդ ալ-Քարիմ Ռաֆիկի<sup>19</sup>, Մուհամ-

<sup>4</sup> Թ. Ազատյանի ֆ., զգ. 6420, 7231, 7500:

<sup>5</sup> Գ. Ասլանյանի, 5279, 5280, 5281, 5282, 5283, 5285:

<sup>6</sup> 1997. هاشم عثمان , الصحافة السورية ماضيها وحاضرها 1877-1970م., دمشق 1997: Սիրիական մամուլի անցյալը և ներկան 1877-1970 թթ., Դամասկոս, 1997:

<sup>7</sup> 1913. فليب دي طرازي تاريخ الصحافة العربية الجزء الثاني, بيروت 1913: մամուլի պատմություն, երկրորդ մաս, Բեյրութ, 1913:

<sup>8</sup> 1997. منظر موصلي, الصحافة العربية ومؤسوها, دمشق 1997: Արաբական մամուլը և նրա հիմնադիրները, Դամասկոս, 1997:

<sup>9</sup> 1989. نعيم يافى, خليل الموى, تضال الامرن والعرب ضد الاستعمار العثماني, بيروت 1989: Խ. Մուլայի և հայերի պայքարը օսմանյան գաղութացման դեմ, Բեյրութ, 1989:

<sup>10</sup> 1982. مروان المدور الأرمين عبر التاريخ, بيروت 1982: Ալ-Մուդաուար Մրվան, Դայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982:

<sup>11</sup> 1972. الصحافة السورية, نشأتها تطورها واقعا الراهن, دمشق 1972: մամուլը. հիմնումը, զարգացումը և ժամանակակից փուլը, Դամասկոս, 1972:

<sup>12</sup> 1986. U. محمود عليان المشوط, تاريخ الصحافة السورية و العربية, دمشق 1986: Սիրիական և արաբական մամուլի պատմությունը, Դամասկոս, 1986:

<sup>13</sup> 1976. اسكندر لوقا, الحركة الادبية في دمشق 1800-1918, دمشق 1976: Դամասկոսում 1800-1918 թթ., Դամասկոս, 1976:

<sup>14</sup> 1983. تطور الصحافة السورية خلال مائة عام (1865-1965), الجزء الأول (1865-1918), بيروت 1983: Արաբական մամուլի զարգացումը հարյուր տարում (1865-1965), առաջին մաս (1865-1918), Բեյրութ, 1983:

<sup>15</sup> 1961. الصحافة العربية نشأتها وتطورها, بيروت 1961: հիմնումը և զարգացումը, Բեյրութ, 1961:

<sup>16</sup> 1985. عنان أبو فخر, الصحافة السورية بين النظرية والتطبيق, دمشق 1985: մամուլը թեորիայի և պրակտիկայի միջև, Դամասկոս, 1985:

<sup>17</sup> 1996. سهيل الملازي, الطباعة والصحافة في حلب, دمشق 1996: մամուլը Դալեպում, Դամասկոս, 1996:



նի<sup>31</sup>, Ռ. Գասպարյանի<sup>32</sup> և Հ. Սիմոնյանի<sup>33</sup> աշխատությունները: Վերոնշյալ ենթազվիսի շարադրմանը նպաստել են նաև Ա. Խառատյանի<sup>34</sup> և Ա. Համբարյանի<sup>35</sup>, ինչպես նաև «Հորիզոն»-ի<sup>36</sup>, «Ղաշինք»-ի<sup>37</sup>, «Բյուզանդիոն»-ի<sup>38</sup> և «Ազատամարտ»-ի<sup>39</sup> էջերում լույս տեսած հոդվածները: 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածի լուսաբանումը եզիպտական մամուլում ուսումնասիրման առումով մեծ արժեք է ներկայացնում դոկտոր Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամի<sup>40</sup> աշխատությունը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-քրդական հարաբերությունների, ինչպես նաև երիտթուրքական իշխանությունների՝ հայ-քրդական բախումներ հրահրելու քաղաքականության ուսումնասիրման առումով արժեքավոր են Վ. Բայբուրդյանի<sup>41</sup>, Ս. Պողոսյանի<sup>42</sup>, Ա. Համբարյանի<sup>43</sup>, Կ. Իզմիրլեանի<sup>44</sup> և Գ. Ալիևի<sup>45</sup>

<sup>30</sup> Պարթևյան Ս., Կիլիկիո արհավիրքը, Կ. Պոլիս, 1909:

<sup>31</sup> Առաքելյան Հ., Ձեթոն: Տեղեգրական, ազգագրական և վարչական պատմություն, Թիֆլիս, 1896:

<sup>32</sup> Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Եր., 2005:

<sup>33</sup> Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009:

<sup>34</sup> Խառատյան Ա., Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2009, № 1:

<sup>35</sup> Համբարյան Ա., Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1988, № 4:

<sup>36</sup> «Հորիզոն», 1910, 23 մարտի:

<sup>37</sup> «Ղաշինք», 1910, 10 ապրիլի:

<sup>38</sup> «Բյուզանդիոն», 1909, 10 մայիսի:

<sup>39</sup> «Ազատամարտ», 1909, 25 հուլիսի:

<sup>40</sup> محمد رفعت الامام, منليك اضنه ابريل 1909 وأثرها في مصر, اريك, عدد 7, نوفمبر, القاهرة 2010 Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, 1909 թ. ապրիլի կոտորածները և դրանց արձագանքը Եզիպտոսում, Արեգ, Կահիրե, 2010, նոյեմբեր, № 7:

<sup>41</sup> Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989:

<sup>42</sup> Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, Եր., 1991:

<sup>43</sup> Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Եր., 1999:

աշխատությունները, ինչպես նաև «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուն<sup>46</sup>:

Մենագրության՝ «Հայկական բարենորոգումների լուսաբանումը սիրիական «Ալ-Թակադդում» թերթում» ենթագլխի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես սիրիական «Ալ-Թակադդում» թերթի, այնպես էլ Եգիպտոսում հրատարակվող «Յուսաբեր»<sup>47</sup> թերթի տարբեր համարներում լույս տեսած հոդվածները: Վերոնշյալ խնդրի ուսումնասիրության առումով արժեքավոր են բազմաթիվ հայտնի հեղինակների աշխատությունները: Դրանցից կուզենայինք նշել Հ. Բոյաջյանի<sup>48</sup>, Զ. Կիրակոսյանի<sup>49</sup>, Ս. Պողոսյանի<sup>50</sup>, Ե. Օտյանի<sup>51</sup>, Բաբգէն վարդապետի<sup>52</sup>, Լ. Քոնթանսոնի<sup>53</sup> աշխատությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետ կապված տարաբնույթ հարցերի պարզաբանմանը նպաստել են նաև Ա. Նովիչևի<sup>54</sup>, Ա. Մ. Կոլյուբակինի<sup>55</sup> աշխատությունները:

---

<sup>44</sup> Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրուք, 1964:

<sup>45</sup> Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), М., 1972.

<sup>46</sup> «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 7, Քրդագիտություն, Եր., 1975:

<sup>47</sup> «Յուսաբեր», Կահիրե, 1913, № 121, 166:

<sup>48</sup> Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Եր., 2010:

<sup>49</sup> Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր., 1965:

<sup>50</sup> Պողոսյան Ս., Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Եր., 2004:

<sup>51</sup> Օտեան Ե., Պողոս Նուբար փաշա (կենսագրական նյութեր), Կ. Պոլիս, 1913:

<sup>52</sup> Բաբգէն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914:

<sup>53</sup> Քոնթանսոն Լ-տը, Հայկական հարցի վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913:

<sup>54</sup> Ноничев А., Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937.

<sup>55</sup> Коллюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Турции, т. 1, ч. 1, СПб, 1888.

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1877-1914 ԹԹ.)

### 1.1. Արաբական ազգային մշակութային կյանքի զարթոնքն ու Սիրիայի արաբական մամուլը

19-րդ դարը արաբների պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հարուստ պատմական իրադարձություններով, Եգիպտոսի՝ Մերձավոր Արևելքում ամենաուժեղ և զարգացած պետությունը դառնալու իրողությամբ, Լիբանանի ինքնավար կուսակալության հաստատման փաստով, հակաօսմանյան տրամադրությունների ուժեղացումով և ապստամբական շարժումների վերելքով, այլև ազգային մշակույթի և ինքնագիտակցության աննախընթաց զարգացումով:

19-րդ դարը արաբների պատմության մեջ մտել է նաև որպես արաբական Նահդայի՝ արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի արթնացման կամ զարթոնքի դարաշրջան: Նահդա արաբերեն բառը հենց այդպիսի բովանդակություն ունի՝ զարթոնք, վերածնունդ, բարձրացում:

Հենվելով հոգևոր մշակութային և պատմական հարուստ ժառանգության վրա՝ արաբները ձգտում էին զարկ տալ ազգային վերածննդին, իրենց ազգային առաջնորդների միջոցով տարածել լուսավորությունը, ժողովրդի մեջ արթնացնել ազգային ինքնագիտակցությունը և անջատել ու անկախացնել արաբական հայրենիքը: Այս նպատակն իրականացնելու համար բացվում են դպրոցներ, հրատարակվում թերթեր, նոր թափով սկսվում է լու-


սավորիչների աշխատությունների թարգմանությունը և հերոսական անցյալի նկարագրությունը, հիմնվում են գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ: Թուրքերն արաբական ազգային զարթոնքին բացասաբար են արծագանքում և ձգտելով կանխել այն՝ փակում են գաղտնի կազմակերպությունները, առաջնորդներին սպառնում անձի ու գույքի անվտանգության հարցերում, ահ ու սարսափ տարածում ժողովրդի մեջ<sup>56</sup>: Սակայն Օսմանյան իշխանությունների ձեռնարկած քայլերն ի զորու չէին կասեցնելու արաբական ազգային շարժման վերելքը:

Նահիդան նախապատրաստվել էր շնորհիվ մի քանի կարևոր գործոնների:

Առաջին, 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, թեկուզ և դանդաղ, բայց, այդուհանդերձ որոշ սոցիալ-տնտեսական տեղաշարժեր էին տեղի ունենում արաբական երկրներում, առաջին հերթին, Եգիպտոսում, ապա նաև Սիրիայում և Լիբանանում: Մուհամմադ Ալիի ռեֆորմները սկզբում Եգիպտոսում, ապա նաև Սիրիայում և Պաղեստինում, փոփոխությունները Լիբանանում, հող նախապատրաստեցին սոցիալ-քաղաքական նոր գաղափարների հրապարակ իջնելու համար: Սկսել էր ձևավորվել արաբական առևտրական՝ սոցիալական նոր խավ, որը նոր պահանջներ էր առաջադրում և նոր գաղափարների ու մշակույթի կարիք ուներ:

Իր դերը խաղաց նաև եվրոպական կրթություն ստացած նոր խավի ձևավորումը՝ շնորհիվ Մուհամմադ Ալիի քաղաքականության, որի շնորհիվ արաբ երիտասարդները եվրոպական երկրներում ուսումնառության էին ուղարկվում: Վերադառնալով հայրենիք՝ նրանք իրենց հետ բերում էին ոչ միայն ակադեմիական գիտելիքներ, այլև նոր, լուսավոր գաղափարներ ու մշակույթ՝ դառ-

<sup>56</sup> 1982 مرون المدور، الأرمين عبر التاريخ، بيروت، 1982: Մուհամմադ Ալ-Մուդաուար Մրվան, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982:



նալով նրանց տարածողները և ջերմեռանդ հետևորդները արաբական իրականության մեջ<sup>57</sup>: Նահդայի ձևավորման գործում իր դերը խաղաց նաև Եվրոպայի հետ հարաբերությունների սերտացումը, ինչը սկսվել էր դեռևս Լիբանանի կառավարիչ Ֆախր ադ-Դին 2-րդ Մաանիի ժամանակներից (17-րդ դար)՝ ծաղկման հասնելով 19-րդ դարում:

Արաբական նահդայի ձևավորման գործում կարևոր դեր խաղացին նաև եվրոպական կապիտալի ու միսիոներների ներթափանցումը Արաբական Արևելք<sup>58</sup>: Օգտվելով Օսմանյան կայսրության թուլությունից՝ եվրոպացիները նպատակ ունեին արաբաբնակ տարածքներն ընդգրկել իրենց ազդեցության ոլորտում: 1830-ական թթ. սկսած Արաբական Արևելքում՝ հատկապես Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում, իրենց մշակութային կենտրոններն են բացում անգլիացիները, իտալացիները, ֆրանսիացիները, ռուսները՝ նպաստելով արաբական նահդային<sup>59</sup>: Կրոնամշակութային այս օջախները կամուրջ են հանդիսանում Արևելքի և Արևմուտքի միջև՝ Արևելքում տարածելով եվրոպական լուսավորական մտքի նվաճումները: Բռնատիրական վարչակարգի պայմաններում Օսմանյան կայսրությունում պարարտ հող էր ստեղծվել եվրոպական լուսավորական գործիչների և հեղափոխականների գաղափարները հասարակ ժողովրդի մեջ սերմանելու և Եվրոպայի հետ սերտ շփումների համար:

Այն հանգամանքը, որ սիրիական առևտրական բուրժուազիան հիմնականում քրիստոնյա էր, ոչ միայն նպաստում էր քրիստոնեական բնակչության կապերի ամրապնդմանը Եվրո-

<sup>57</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 2, եր., 2004, էջ 341-350:

<sup>58</sup> Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975, с. 136-150.

<sup>59</sup> 3աֆի Նեյմ ալ-Կաֆի, خليل المولى, نضال الارمن والعرب ضد الاستعمار العثماني, بيروت, 1989, ص. 35-39  
Ն., Մուա Խ., Արաբների և հայերի պայքարը օսմանյան գաղութացման դեմ, Բեյրութ, 1989, էջ 35-39:

այսինքն, այլև Սիրիայի քրիստոնյաներին վերածում էր եվրոպական պետությունների աշխույժ հետևորդների, մեծացնում էր եվրոպայի քրիստոնյա մտավորականության հետ կապերը, որոնք շնորհիվ Սիրիա էին ներթափանցում Արևմուտքի առաջադեմ գաղափարները: Նկատելի դեր խաղացին նաև քրիստոնեական առաքելությունները Սիրիայում, որոնք աշխուժացրին իրենց գործունեությունը 19-րդ դարի կեսերին: Դիտարկվող շրջանում մեծ հաջողության հասան ամերիկացի բողոքականները, գլխավորապես նրա համար, որ ժամերգությունները կատարվում էին արաբերենով, ինչը թույլ տվեց արագորեն սերտ կապեր հաստատել տեղացի բնակչության հետ:

Միսիոներների կողմից բացված ուսումնական հաստատություններում տեղացիներին կրթում էին Սիրիայի քրիստոնյաների հովանավորներ Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հանդեպ համակրանքով: Սիրիայում տիրող դժգոհությունը օսմանյան վարչակարգի նկատմամբ հեշտացնում էր այդ գործը: Մարդիկ հաճախ գերադասում էին թուրքերենի փոխարեն անգլերեն կամ ֆրանսերեն սովորել:

Այսպիսով, լինելով Արևելքում գաղութարար պետությունների ազդեցության ուղեցույցները, միսիոներները նպաստում էին տեղացի քրիստոնյաների գրագիտությանը, եվրոպական լեզուների տարածմանը:

Այս հողի վրա արաբական մտավորականության մեջ ուժեղացավ նոր գաղափարների որոնումը, ձգտումը՝ ազատվել արաբական երկրներում տիրող հեղձուցիչ մթնոլորտից, ինչպես նաև մահմեդական կաշկանդող կապանքներից: Նահդան դարձավ այդ մտայնության արտահայտությունը և հայտնվեց որպես արաբական իրականությունը նոր գաղափարական հիմքերի վրա վերակառուցելու շարժում:

Արաբական ազգային վերածննդի գործում նշանակալի դեր խաղացին արաբական աշխարհի քրիստոնյաները, որոնք, ի տարբերություն արաբ-մահմեդականների, ավելի ազատ էին իրենց դատողությունների և հայացքների մեջ, ավելի լայնախոհ մոտեցում էին ցուցաբերում արաբների առջև կանգնած ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային հարցերում, այդ թվում և մի այնպիսի առանցքային հարցում, որպիսին թուրքական սուլթանի հետ արաբների կրոնական ընդհանրության հարցն էր: Արաբ-մահմեդականներն ավելի կաշկանդված էին իրենց հայացքների մեջ, քանի որ նրանք որոշ իմաստով հանդիսանում էին ավանդույթների և կրոնական դոգմաների պատանդը և ընդունում էին թուրքական սուլթանի հետ արաբների կրոնական ընդհանրությունը: Դրանում իր դերն էր խաղում, անշուշտ, երկու ժողովուրդների իսլամադավան լինելու հանգամանքը և թուրքական սուլթանի՝ մահմեդականների հոգևոր առաջնորդը կամ խալիֆան լինելու պարագան:

Քրիստոնյա նահոյայականներն ազատ էին նման կաշկանդումներից և բացեիբաց հանդես էին գալիս թուրքական սուլթանի հետ արաբների ընդհանրության անհիմն գաղափարի դեմ: Դա հնարավորություն ընձեռեց նրանց կատարելու հաջորդ սկզբունքային բնույթի քայլը՝ հանդես գալ թուրքական տիրապետության դեմ, անգամ առաջ քաշել հեղափոխության գաղափարը: Բացի այդ՝ քրիստոնյա նահոյայականները կապված էին եվրոպական իրականության հետ և սնվում էին եվրոպական առաջադիմական գաղափարներով, որտեղ կենտրոնական դերակատարում ունեին ազատության և բռնության դեմ պայքարի գաղափարները:

Նահոյայական շարժման բնորոշ գծերից մեկը կայանում էր նրանում, որ այն համախմբում էր բոլոր նրանց, ովքեր կիսում էին շարժման սկզբունքները, հիմնական գաղափարները և

իդեալները: Այդ պատճառով էլ վերջինիս դռները բաց էին բոլորի առջև, անկախ նրանց կրոնական և էթնիկական պատկանելությունից:

Նահդայական շարժման ամենաակտիվ մասնակիցներից էին արաբական երկրներում՝ հատկապես Լիբանանում և Սիրիայում հաստատված հայերը, որոնցից շատերը կանգնած են եղել նահդայի առաջացման ակունքներում, առաջնակարգ դեր են խաղացել նրա գաղափարական ուղղությունների ձևավորման և ղեկավարման բնագավառում<sup>60</sup>:

Այս ժամանակաշրջանում՝ 19-րդ դարում, արաբ ժողովրդի մեջ ազգային ինքնագիտակցությունն ի հայտ եկավ հետևյալ գաղափարների ամրապնդմամբ.

1. Արաբերեն լեզվի կարևորության գաղափարը: Սա հատկապես ընդգծվեց թուրքացման քաղաքականության ի հայտ գալով: Գրական արաբերենը գիտակցվեց որպես արաբների ազգային հիմնական հատկանիշներից մեկը: Ի հայտ եկավ հետևյալ նշանաբանը. «Լեզուն ազգն է, ազգը՝ լեզուն» առաջինի թուլացումը երկրորդի թուլացումն է, երկրորդի մահը առաջինի մահն է:

2. Արաբների պատմության ու անցյալի կարևորությունը: Ի պատասխան արաբների դեմ կատարվող բռնությունների՝ արաբ մտավորականները սկսեցին հայրենակիցներին հիշեցնել իրենց՝ անցյալում ունեցած հարուստ պատմության և քաղաքակրթության մասին՝ կանխելով նրանց ձուլումը և թուրքացումը ու արթնացնելով ազգային հպարտություն: Անգրագիտությունից ու հետամնացությունից ազատվելու համար անհրաժեշտ էր միավորվել մեկ միացյալ գաղափարի շուրջ: Միայն այդ ճանապարհով հնարավոր էր հասնել այն բարձրունքներին, որպիսիք արաբներն ունեցել էին անցյալում: Սեփական ժողովրդի մեջ արթնացնելով հարգանքը իրենց իսկ պատմության նկատմամբ՝ նրանք

<sup>60</sup> Ազգեան Յ., Արաբական գարթոնքը և հայ գործիչները, Գալէպ, 2008:

հույս ունեին վերածնել և պատմության փոշուց մաքրել արաբական հարուստ քաղաքակրթությունը<sup>61</sup>:

Այդպիսով, նահդան, լինելով արաբների ազգային ինքնագիտակցության արտահայտման նոր ձև, երկու կարևոր նպատակներ էր հետապնդում: Առաջին, սեր արթնացել իրենց պատմական, հոգևոր-մշակութային արժեքների՝ արաբական լեզվի, գրականության, գիտության, պատմության հերոսական էջերի և հայրենիքի նկատմամբ, խթանել արաբական հասարակությանը՝ ծանոթանալու եվրոպական մշակույթին և առաջավոր հասարակական մտքին և օգտագործել այն արաբական իրականության մեջ տիրապետող հետամնացության, խավարամոլության, թուրքական բռնատիրության դեմ ուղղված պայքարին, նպաստել լուսավորության տարածմանը, ֆեոդալական կապանքներից ազատագրվելու և արաբական երկրների անկախության նվաճմանը:

Պետք է նշել, որ եթե գրական-մշակութային ուղղվածությունը նահդայի ամենաուժեղ կողմն էր վերջինիս սկզբնավորման փուլում՝ 19-րդ դարի 40-60-ական թվականներին, ապա հետագայում՝ 70-ականների վերջերին և 80-ականների սկզբներին, նահդայական շարժման մեջ ուժեղանում է քաղաքական տեսանկյունը և առաջին պլանի վրա է մղվում քաղաքական պայքարի, հայրենիքի ազատության, անկախության խնդիրները<sup>62</sup>:

Նահդայական շարժման կարևոր կենտրոններ էին Եգիպտոսը, Սիրիան և Լիբանանը, որտեղ բարեփոխումների շնորհիվ ավելի շոշափելի տեղաշարժեր էին կատարվել: Նրանք մտավոր ավելի մեծ ներուժ ունեին, քան արաբական մյուս երկրները, ինչպես Իրաքը կամ Արաբիան: Այս ժամանակաշրջանում Սիրիայի ու Եգիպտոսի տնտեսական ու հասարակական կյանքում խորը փոփոխություններ էին տեղի ունենում: Այս երկրների

<sup>61</sup> خليل الموى, نعيم الياضي, 3աֆի Ն., Մուս իս., նշվ. աշխ., էջ 45-51:

<sup>62</sup> 3ովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 344:

գտնվելը Միջրկրական ծովի ափին, անմիջական շփումը եվրոպական երկրների հետ, ինչպես նաև Սիրիայի ու Եգիպտոսի ներառումը կապիտալիստական շուկա, հաղորդակցության ու տեղեկատվության միջոցների զարգացումը, արտադրության միջազգայնացումը խախտեցին նրանց մշակութային և տնտեսական փակվածությունը: Մեծացան գյուղատնտեսական արտադրության ապրանքների քանակը, զարգացան ապրանքադրամական հարաբերությունները: 19-րդ դարի կեսերին Սիրիան և Եգիպտոսը կանգնած էին կապիտալիստական զարգացման ճանապարհին: Պատահական չէ, որ հենց Սիրիան և Եգիպտոսը դարձան արաբական լուսավորչության առաջին օջախները: Լուսավորչականության հայրենիքը Սիրիան էր: Սա ուներ իր պատճառները. չնայած Մ. Ալիի ռեֆորմները և նրա հոգատարությունը լուսավորչականության հանդեպ նպաստում էին հասարակական գիտակցության նախապատրաստմանը նոր գաղափարների ընդունման համար, սակայն Եգիպտոսի հասարակությունը 19-րդ դարի կեսին դեռևս պատրաստ չէր դրան: Եգիպտական տնտեսության զարգացումը Մուհամմադ Ալիի կառավարման ժամանակահատվածում տեղի էր ունենում ֆեոդալական հիմքի վրա:

19-րդ դարի 60-70-ական թվականների տնտեսական վերելքը, որը տեղի ունեցավ եգիպտական բամբակի և շաքարի մեծացման շնորհիվ նպաստեց միայն շաքարի և բամբակագործության արտադրությունների ծաղկմանը, տրանսպորտի և կապի միջոցների զարգացմանը, բայց չհանգեցրեց երկրում ժամանակակից ինդուստրիայի առաջացմանը: Այս նույն ժամանակահատվածում՝ 19-րդ դարի կեսերին, Սիրիայում մեծ կշիռ է ձեռք բերում և տնտեսական մեծ ուժ դառնում տեղական առևտրական բուրժուազիան, հատկապես Լիբանանում, որը կապիտալի ներդրման կարևորագույն միջավայր էր իր գյուղատնտեսական ապրանքների գնման ու Եվրոպա արտահանման համար:

Եվ պատահական չէ, որ հենց Սիրիան ու Եգիպտոսը դարձան արաբական լուսավորականության առաջին օջախները<sup>63</sup>:

19-րդ դարի 70-80-ական թվականներին ձևավորվում է նահապետական շարժման այն թևը, որը, կարելի է ասել, հստակորեն կանգնում է հակաթուրքական դիրքերում, թուրքական տիրապետությունից ազատագրվելու մեջ տեսնելով արաբների վերածննդի, ազատության, տնտեսական վերելքի և մշակութային զարգացման հնարավորությունները և հեռանկարները:

Արաբական լուսավորական շարժման և գրական զարթոնքի ազդեցությամբ սիրիացիներն արաբական մամուլի հիմքն են դնում: Սակայն թերթերը մշտական չէին, կարող էին փակվել ու դարձյալ բացվել, վերաբացվել այլ անուններով և այլ վայրերում:

Մամուլի երևան գալը զուգորդվում էր Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում՝ առաջին հերթին Բեյրութում գրական և ազգային խմբակների բացմամբ: Դրանք մեծ դեր էին խաղում լուսավորական շարժման մեջ, քանի որ դրանց զուլխ էին կանգնում ազգային մտածողներ, գրականագետներ և այլ մտավորականներ՝ իրենց շուրջ հավաքելով հասարակ ժողովրդին: 1847 թ. Բեյրութում հիմնվեց «Գիտության տարածման և արվեստի զարգացման Սիրիական ընկերությունը», 1857 թ. դարձյալ Բեյրութում հիմնվեց «Սիրիական գիտական ընկերությունը», 1882 թ.՝ Արևելյան ակադեմիան և այլն, որոնք կարևոր դեր խաղացին Սիրիայում և Լիբանանում արաբական հասարակական մտքի զարգացման գործում: Այդ ընկերություններում քննարկվում էին ազգային մշակույթի, արաբերեն լեզվի գործառույթի, գրականության և մշակութային կյանքի այլ հարցեր:

Խմբակների մի մասը գաղտնի էր և կրում էր քաղաքական դրոշմ: Եթե հայկական խմբակների՝ Օսմանյան կայսրության դեմ ուղղված ձեռնարկումները նպատակ ունեին ռազմական ուժով

---

<sup>63</sup> Котлов Л. Н., *Մշվ. աշխ.*, էջ 145-146:

ազատագրել երկիրը, ապա արաբական խմբակները ծրագրել էին արաբների շրջանում գրական զարթոնքը տարածելով՝ կազմակերպել համաարաբական ապստամբություն թուրքերի դեմ:

1880 թ. Բեյրութում ստեղծվում է քաղաքական ծրագիր պարունակող առաջին խմբակը: Այն նպատակ ուներ.

ա) Սիրիայի և Լիբանանի միավորումը:

բ) Արաբերենի՝ որպես պետական լեզվի ճանաչումը:

գ) Արաբական գորքերի օգտագործումը միայն արաբական երկրների սահմանների պաշտպանության համար<sup>64</sup>:

1901 թ. Ստամբուլում հիմնվում է «Կահտանիա» գաղտնի քաղաքական խմբակը, որը ևս պայքարում էր արաբների անկախության համար, իսկ 1904 թ. Փարիզում հիմնվում է «Արաբական հայրենիքի միությունը», որի նպատակն օսմանյան լծից ազատագրումն էր<sup>65</sup>:

Նշված խմբակների որոշ մասը վերածվեց քաղաքական կուսակցությունների, որոնք առաջին աշխարհամարտի ընթացքում ղեկավարեցին արաբ ժողովրդի պայքարը թուրքական բռնակալության դեմ:

19-րդ դարում տեղի ունեցած արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի զարթոնքը պարարտ հող նախապատրաստեց արաբական՝ մասնավորապես սիրիական մամուլի զարգացման համար:

1864 թ. սիրիական վիլայեթների վարչական կանոնադրության, ապա 1865 թ. մամուլի կանոնադրության հաստատումը նոր խթան հաղորդեց Սիրիայում տպագրության զարգացմանը: 1865-1876 թթ. ընկած ժամանակահատվածում Սիրիայում հրատարակվեց կրոնական և քաղաքական ուղղվածության 10 ամսագիր ու շաբաթաթերթ, 6 օրաթերթ: 1871 թ. սկսած սիրական

<sup>64</sup> مروان المدور, Ալ-Մուդաուար Մրվան, մշվ. աշխ., էջ 49:

<sup>65</sup> Բացի վերոնշվածից կային նաև բազմաթիվ այլ քաղաքական խմբակներ: Տես՝ Յովհաննիսյան Ն., մշվ. աշխ., էջ 473-497:

մամուլի զարգացումը դանդաղեց, քանի որ օսմանյան իշխանությունները նոր հարկեր սահմանեցին մամուլի վրա ու սահմանափակվեցին լրագրողների իրավունքները: Նման պայմաններում որոշ սիրիացիներ փորձ արեցին մամուլի զարգացումը տեղափոխել այլ երկրներ, մասնավորապես, Լոնդոնում, Փարիզում 1870-ականներին հրատարակվեցին որոշ թերթեր, որոնց տպագրությունը սակայն երկար չտևեց: Հայտնի թերթերից էին «Նաֆիր Սուրիա» (1860 թ.), «Ալ-Ջունան» (1870 թ.), «Ալ-Ջաննա» և «Ալ-Ջունեյնա» (1871 թ.) և այլն: Լիբանանցի և Սիրիայի գրականագետները, լրագրողները և այլ մտավորականներ ի դեմս Բուբրուս ալ-Բուսթանիի, Իբրահիմ ալ-Յալիջիի, Ադիբ Իսհակի և այլոց, հաճախ ստիպված էին տեղափոխվել՝ լուսավորականության միտքը վառ պահելու և տարածելու համար<sup>66</sup>:

Պետք է նշել, որ տարիներ շարունակ արաբական մամուլն էական զարգացում չէր ապրում և դուրսում էր տեղում: Օսմանյան հետամնաց վարչակարգը խոչընդոտում էր նրա առաջխաղացումը: Նման վիճակում էր նաև արաբական հասարակական մշակույթը, որը դուրս չէր գալիս սահմանափակ թվով դպրոցների ու խմբակների շրջանակներից: Արաբական հասարակական միտքը և մշակութային առաջընթացը պայմանավորված էին արտասահմանով: Սիրիական մամուլը հաջողություն է ունեցել բազում դժվարին բնագավառներում (օրինակ օսմանյան բռնապետական իշխանության քննադատություն): Եղել է նաև իշխանամետ փուլ, երբ թերթի վարկանիշը օգտագործելով՝ իշխանությունը ժողովրդի մեջ տարածում էր իր որոշումները<sup>67</sup>: Այս թերթերը լուսաբանում էին նաև պաշտոնական լուրեր:

<sup>66</sup> خليل الموى، نعيم الياضي، موى، ص. 24، 25-26، 27-28، 29-30، 31-32، 33-34، 35-36، 37-38، 39-40، 41-42، 43-44، 45-46، 47-48، 49-50، 51-52، 53-54، 55-56، 57-58، 59-60، 61-62، 63-64، 65-66، 67-68، 69-70، 71-72، 73-74، 75-76، 77-78، 79-80، 81-82، 83-84، 85-86، 87-88، 89-90، 91-92، 93-94، 95-96، 97-98، 99-100، 101-102، 103-104، 105-106، 107-108، 109-110، 111-112، 113-114، 115-116، 117-118، 119-120، 121-122، 123-124، 125-126، 127-128، 129-130، 131-132، 133-134، 135-136، 137-138، 139-140، 141-142، 143-144، 145-146، 147-148، 149-150، 151-152، 153-154، 155-156، 157-158، 159-160، 161-162، 163-164، 165-166، 167-168، 169-170، 171-172، 173-174، 175-176، 177-178، 179-180، 181-182، 183-184، 185-186، 187-188، 189-190، 191-192، 193-194، 195-196، 197-198، 199-200، 201-202، 203-204، 205-206، 207-208، 209-210، 211-212، 213-214، 215-216، 217-218، 219-220، 221-222، 223-224، 225-226، 227-228، 229-230، 231-232، 233-234، 235-236، 237-238، 239-240، 241-242، 243-244، 245-246، 247-248، 249-250، 251-252، 253-254، 255-256، 257-258، 259-260، 261-262، 263-264، 265-266، 267-268، 269-270، 271-272، 273-274، 275-276، 277-278، 279-280، 281-282، 283-284، 285-286، 287-288، 289-290، 291-292، 293-294، 295-296، 297-298، 299-300، 301-302، 303-304، 305-306، 307-308، 309-310، 311-312، 313-314، 315-316، 317-318، 319-320، 321-322، 323-324، 325-326، 327-328، 329-330، 331-332، 333-334، 335-336، 337-338، 339-340، 341-342، 343-344، 345-346، 347-348، 349-350، 351-352، 353-354، 355-356، 357-358، 359-360، 361-362، 363-364، 365-366، 367-368، 369-370، 371-372، 373-374، 375-376، 377-378، 379-380، 381-382، 383-384، 385-386، 387-388، 389-390، 391-392، 393-394، 395-396، 397-398، 399-400، 401-402، 403-404، 405-406، 407-408، 409-410، 411-412، 413-414، 415-416، 417-418، 419-420، 421-422، 423-424، 425-426، 427-428، 429-430، 431-432، 433-434، 435-436، 437-438، 439-440، 441-442، 443-444، 445-446، 447-448، 449-450، 451-452، 453-454، 455-456، 457-458، 459-460، 461-462، 463-464، 465-466، 467-468، 469-470، 471-472، 473-474، 475-476، 477-478، 479-480، 481-482، 483-484، 485-486، 487-488، 489-490، 491-492، 493-494، 495-496، 497-498، 499-500، 501-502، 503-504، 505-506، 507-508، 509-510، 511-512، 513-514، 515-516، 517-518، 519-520، 521-522، 523-524، 525-526، 527-528، 529-530، 531-532، 533-534، 535-536، 537-538، 539-540، 541-542، 543-544، 545-546، 547-548، 549-550، 551-552، 553-554، 555-556، 557-558، 559-560، 561-562، 563-564، 565-566، 567-568، 569-570، 571-572، 573-574، 575-576، 577-578، 579-580، 581-582، 583-584، 585-586، 587-588، 589-590، 591-592، 593-594، 595-596، 597-598، 599-600، 601-602، 603-604، 605-606، 607-608، 609-610، 611-612، 613-614، 615-616، 617-618، 619-620، 621-622، 623-624، 625-626، 627-628، 629-630، 631-632، 633-634، 635-636، 637-638، 639-640، 641-642، 643-644، 645-646، 647-648، 649-650، 651-652، 653-654، 655-656، 657-658، 659-660، 661-662، 663-664، 665-666، 667-668، 669-670، 671-672، 673-674، 675-676، 677-678، 679-680، 681-682، 683-684، 685-686، 687-688، 689-690، 691-692، 693-694، 695-696، 697-698، 699-700، 701-702، 703-704، 705-706، 707-708، 709-710، 711-712، 713-714، 715-716، 717-718، 719-720، 721-722، 723-724، 725-726، 727-728، 729-730، 731-732، 733-734، 735-736، 737-738، 739-740، 741-742، 743-744، 745-746، 747-748، 749-750، 751-752، 753-754، 755-756، 757-758، 759-760، 761-762، 763-764، 765-766، 767-768، 769-770، 771-772، 773-774، 775-776، 777-778، 779-780، 781-782، 783-784، 785-786، 787-788، 789-790، 791-792، 793-794، 795-796، 797-798، 799-800، 801-802، 803-804، 805-806، 807-808، 809-810، 811-812، 813-814، 815-816، 817-818، 819-820، 821-822، 823-824، 825-826، 827-828، 829-830، 831-832، 833-834، 835-836، 837-838، 839-840، 841-842، 843-844، 845-846، 847-848، 849-850، 851-852، 853-854، 855-856، 857-858، 859-860، 861-862، 863-864، 865-866، 867-868، 869-870، 871-872، 873-874، 875-876، 877-878، 879-880، 881-882، 883-884، 885-886، 887-888، 889-890، 891-892، 893-894، 895-896، 897-898، 899-900، 901-902، 903-904، 905-906، 907-908، 909-910، 911-912، 913-914، 915-916، 917-918، 919-920، 921-922، 923-924، 925-926، 927-928، 929-930، 931-932، 933-934، 935-936، 937-938، 939-940، 941-942، 943-944، 945-946، 947-948، 949-950، 951-952، 953-954، 955-956، 957-958، 959-960، 961-962، 963-964، 965-966، 967-968، 969-970، 971-972، 973-974، 975-976، 977-978، 979-980، 981-982، 983-984، 985-986، 987-988، 989-990، 991-992، 993-994، 995-996، 997-998، 999-1000.

<sup>67</sup> انيب خضور، الصحافة السورية، نشأتها تطورها واقعها الراهن، دمشق، 1972، ص. 24. Սիրիական մամուլը. հիմնումը, զարգացումը և ժամանակակից փուլը, Դամասկոս, 1972, էջ 24:

Երբ հայացք ենք նետում սիրիական մամուլի վրա, տեսնում ենք, որ այն սկզբնավորվել է հենց այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունում պաշտոնապես հիմք է դրվել թերթերի հրատարակությանը: Սակայն արդուլիամիդյան շրջանում թերթերի տպագրությունը սահմանափակվել է: Առաջնությունը տրվում էր իշխանամետ թերթերին, որոնք կառավարության մշտական ուշադրության պայմաններում էին գործում: Իսկ ինչ վերաբերում է ազգասիրական, հայրենասիրական ու ազատասիրական թերթերին, ապա դրանք գործում էին կամ գաղտնի, կամ արտերկրում, կամ արդեն փակվել էին<sup>68</sup>:

Սիրիական թերթերը ներկայացնում էին ոչ միայն Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին իրավիճակը, այլև կայսրության բոլոր ժողովուրդների դեմ ուղղված թուրքացման քաղաքականությունը: Սիրիական թերթերում տպագրված հոդվածները գլխավորապես վերաբերում էին հետևյալ թեմաներին.

- Արդուլ Համիդ Երկրորդի և Երիտթուրքերի շրջանում ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության լուսաբանում:
- Արաբական մշակույթի զարգացումների լուսաբանում:
- Թուրքացման քաղաքականության քննադատություն և ազատասիրության դրվատում<sup>69</sup>:

Ճիշտ է, Արդուլ Համիդն իր կառավարման սկզբնական շրջանում մամուլին ազատություն էր տվել, բայց դա երկար չէր տևել: Դրան հաջորդել էր նրա կոշտ քաղաքականությունը: Սուլթան Արդուլ Համիդի օրոք Օսմանյան կայսրությունում գոյություն է ունեցել պարտադրված գրաքննության համակարգ, ըստ որի,

<sup>68</sup> Արդուլ Համիդ Երկրորդ Ա., մշվ. աշխ., էջ 25:

<sup>69</sup> 64. ص. 2004, دمشق (1930-1877), الصحافة السورية في الألبانة الأرمنية في الألبانة السورية (1877-1930) Ն., Հայոց ցեղասպանության լուսաբանումը սիրիական մամուլում (1877-1930 թթ.), Ղանասկոս, 2004, էջ 27:

արգելվում էր գբաղվել քաղաքական հարցերով, հրահանգվում էր պարտադիր կերպով գովաբանել սուլթանին և այլն:

Սիրիայում ուսումնասիրվող ժամանակաշրջանում լրագրողների ակտիվության գործում կարևոր դեր են ունեցել Հալեպի թերթերը: Դրանք՝ անկախ պարբերականությունից, համարվելով սիրիական արաբական մամուլի դպրոց, մեծ հետք են թողել ընդհանրապես սիրիական մամուլի զարգացման վրա:

1908 թ. առաջ տպագրված թերթերում չկար միասնական և ընդհանուր կարծիք: Բանն այն է, որ դրանք ունեին տարբեր հեռանկարներ և հրապարակումները մատնում էին իրական պատկերները ցուցադրելու՝ մամուլի զգուշավորության մասին<sup>70</sup>: 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո որոշ թերթեր կրկին վերահրատարակվելու իրավունք են ստանում, բացվում են նորերը: Նպատակ ունենալով կիրառել արաբների նյութական և մարդկային ուժն իրենց նպատակների համար՝ երիտթուրքերը վաղուց էին մշակել «թերթերին ազատություն» տալու քայլը: Երիտթուրքերի իշխանության գալուց հետո Օսմանյան կայսրությունում խոսքի ազատությունը զարգացում է ապրում. թերթերը սկսում են տպագրել ազատության և անկախության թեմաներին վերաբերող հոդվածներ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը նոր էջ բացեց նաև սիրիական մամուլում: Ոչ միայն ավելանում է թերթերի քանակը, այլև փոխվում է դրանց թեմա: Անցում է կատարվում ազատախոսությանը: Սակայն հոգևոր-մշակութային առաջընթացը երկար չի տևում: Դարձյալ հայացք է նետվում թուրքացման քաղաքականությանը, և դրվում է թուրանապաշտական գաղափարների հիմքը<sup>71</sup>: Երիտթուրքերը սկսեցին գործնականում կիրառել իրենց

<sup>70</sup> U. محمود عليان المشوط، تاريخ الصحافة السورية و العربية، دمشق، 1986، ص. 64. Ալիան ալ-Մաշուտ, Սիրիական և արաբական մամուլի պատմությունը, Դամասկոս, 1986, էջ 64:

<sup>71</sup> L. Լուկա Ի., اسكندر لوقا، الحركة الأدبية في دمشق 1800-1918، دمشق، 1976، ص. 185. Գրական շարժումը Դամասկոսում 1800-1918 թթ., Դամասկոս, 1976, էջ 185:

նպատակներն ու գաղափարախոսությունը, այն է՝ ոչնչացնել կամ թուրքացնել կայսրության ոչ թուրք տարրերին: 1908 թ. հեղաշրջումից մի քանի ամիս անց մի շարք սահմանափակումներ դրվեցին մամուլի գործունեության վրա, և 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման փորձն երիտթուրքերին հարմար առիթ ընձեռեց բազմաթիվ թերթերի գործունեությունը դադարեցնելու համար՝ վերջիններիս մեղադրելով հակահեղափոխական ճամբարի հետ կապի մեջ լինելու մեջ<sup>72</sup>: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նոր թափ են ստանում գաղափարական ճնշումները: Ավելին, երիտթուրքերը կաշառում են որոշ թերթերի և օգտագործում որպես քարոզչամիջոց<sup>73</sup>: Սիրիական թերթերի մյուս մասը ստանում է արևմտյան ուղղություն<sup>74</sup>:

Այս շրջանում թերթերի աշխատանքը վերահսկելու և լրագրողների աշխատանքը «սահմանափակելու» համար ընդունվեցին մի քանի որոշումներ. լրագրողներին արգելվեց հանդիպել նախարարների, վալիների, պաշտոնյաների հետ: Բացի այդ՝ ձևավորվեց հատուկ գրասենյակ՝ նախարարությունից և պետական կառույցներից տեղեկություններ ստանալու և հավաքելու համար: Եվ միայն դրանից հետո լուրերը տրամադրվում էին թերթերին՝ հեռացնելով այն տեղեկությունները, որոնք իշխանությունների կարծիքով, հրապարակման «պիտանի» չէին<sup>75</sup>: Այսպիսով, իշխանությունները տրամադրում էին տեղեկություններ՝ ամրագրելով դրանք հոգուտ իրենց շահերի: Մահմուդ Ալիան Մաշուտն իր գրքում նշում է, որ այդ գրասենյակի առաքելությունն էր հավաքել տպագրության պատրաստ կարևոր տեղե-

<sup>72</sup> Котлов Л. Н., Становление национально-освободительного движения в арабских странах и Азии (1908-1914 гг.), М., 1986, с. 30.

<sup>73</sup> خضور حسين, Խուսուր Ա., նշվ. աշխ., էջ 94:

<sup>74</sup> Խույն տեղում, էջ 116:

<sup>75</sup> الياس جوزيف, تطور الصحافة السورية خلال مائة عام (1865-1965), الجزء الاول (1865-1918), بيروت 1983, ص. 125. Սիրիական մամուլի զարգացումը հարյուր տարում (1865-1965), առաջին մաս (1865-1918), Բեյրութ, 1983, էջ 125:

կությունները: Եվ դա նշանակում է, որ այս նորությունները տրամադրվում էին մամուլին միայն հատուկ գրասենյակի կողմից դրանց համապատասխան ձև և փոփոխություններ կատարելուց հետո: Մաշուտն իր գրքում նաև գրում է, որ երբ իթթիհադականները ցույց տվեցին «իրենց ատամները» իրենց թշնամիներին, մերժեցին համագործակցությունը արաբական տարրի հետ, ինչպես և վիժեցրեցին բարեփոխումների գործը, այդ ժամանակ արաբները ևս հանդես եկան արագ և բացահայտ անկախություն կոչելով<sup>76</sup>:

Ինչ վերաբերում է արաբ լրագրողներին, ապա նրանք ուղղորդվում կամ առաջնորդվում էին հասարակական կարծիքով: Արաբ ժողովրդին նրանք ներկայացնում էին երկրի սոցիալական և քաղաքական իրավիճակը<sup>77</sup>: Ջանգվածային լրատվամիջոցները նպաստում էին ոչ միայն ժողովրդի կարծիքի արտահայտմանը, այլև կատարված դեպքերի և իրադարձություններ մասին տեղեկատվության տարածմանը<sup>78</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հալեպի բոլոր թերթերը, նույնիսկ քաղաքական ուղղվածություն չունեցողները, այդ ժամանակաշրջանում զբաղվում էին քաղաքական հոդվածների հրապարակումով: Նրանց մեծամասնությունը գործում էր ի նպաստ ազգային շահերի<sup>79</sup>: Ինչ վերաբերում է Դամասկոսի մամուլին, ապա այն շոշափում էր ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված թեմաներ, որոնք հրապարակվում էին սահմանադրական շրջանում: Այդ շրջանում դամասկոսյան լուսավորիչների բազմաքանակ մտքերի արտահայտումը զետեղ-

<sup>76</sup> U. محمود عليان المشوط. Ալիան ալ-Մաշուտ, նշվ. աշխ., էջ 71:

<sup>77</sup> 429. ص. الصحافة العربية نشأتها وتطورها، بيروت 1961، ص 429: հիմնումը և զարգացումը, Բեյրութ, 1961, էջ 429:

<sup>78</sup> 57-52. ص. عذنان أبو فخر، الصحافة السورية بين النظرية والتطبيق، دمشق 1985، ص. 57-52: իրական մամուլը տեսության և արևմտիկայի միջև, Դամասկոս, 1985, էջ 52-57:

<sup>79</sup> 65. ص. مهيل الملازي، الطباعة والصحافة في حلب، دمشق 1996، ص. 65: Մալազի Ս., Հրատարակությունը և մամուլը Հալեպում, Դամասկոս, 1996, էջ 65:

ված էր գրքերում, որոնք մեծ բաժին ունեին մամուլի կայացման գործում: Մամուլի միջոցով մարդիկ ժանոթանում էին սուլթան Աբդուլ Համիդի դաժան ու բիրտ գործողություններին<sup>80</sup>: Սակայն, թերթերն աստիճանաբար ընկնում են թուրքական իշխանությունների վարած քաղաքականության ազդեցություն տակ, որին հակառակվում էր ազգային ոգին և անկախության ձգտումը:

## 1.2. Հայերի դրության, գաղթի, կոտորածների լուսաբանումը

Կոնկրետ ժամանակահատվածի դեպքերի ու իրադարձությունների լավագույնս արտացոլման գործում մամուլն արժեքավոր աղբյուրներից է: Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի գաղթի, վիճակի, հայկական ջարդերի ու կոտորածների լուսաբանմանն է անդրադարձել նաև սիրիական մամուլը:

Սիրիական թերթերն առհասարակ մեծ ազդեցություն են ունեցել արաբական ժամանակակից լուսավորական մտքի վրա<sup>81</sup>: Դրանք, անկասկած, ոչ միայն անդրադարձել են ժամանակակից իրադարձություններին, այլև խորապես ուսումնասիրել են իրականությունը և դարձել արժեքավոր փաստաթուղթ:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերում սիրիական մամուլն անդրադարձել է ցեղասպանության հետ կապված պատմական բոլոր շրջաններին, որն ապրել է հայ ժողովուրդը՝ հարձակումներ, ջարդ, բռնագաղթ, հայրենագրկում, օտար երկրներում գաղթօջախների ձևավորում: Դրանով այն դարձել է այդ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության անհերքելի ապացույց, որը արտացոլում է իրականությունը՝ որպես պատմական փաստաթուղթ: Դրանում իր ուրույն տեղն ունի Սիրիայի

<sup>80</sup> اسکندر لوق، Լուկա Ի., նշվ. աշխ., էջ 167:

<sup>81</sup> Երևան տեղում, էջ 70:

տարբեր քաղաքներում հաստատված հայության կյանքի նկարագրումը:

1877-1914 թթ. սիրիական մամուլը ներկայացրել է Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի, ջարդերի և գաղթերի պատկերը, անդրադարձել օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների ելույթների, նամակների լուսաբանմանը: Սիրիական թերթերում հայերի հետ առնչվող նյութերի անդրադարձը տեղի է ունեցել հետևյալ կերպ. 1. նյութեր, 2. հեռագրեր, 3. մեկնաբանություններ: Շատ են հոդվածները հայ-արաբական հարաբերությունների մասին: Եվ դա կատարվել է, չնայած բոլոր դժվարություններին, բռնապետական պայմաններում: Արտահայտելով հայրենիքի հետ կապված արդարացի պահանջները՝ մամուլը լուսաբանել է այն գրավոր և բանավոր<sup>82</sup>:

Որոշ դեպքերում իրականության լուսաբանումը կարող էր ճակատագրական լինել թերթի համար: Մասնավորապես, 1877 թ. փակվեց Հալեպի «Ալ-Շահբա» թերթը, երբ գրեց, որ թուրք պաշտոնյաներն արգելում են հայերին ծառայել թուրքական բանակում՝ այդ թույլատրելով միայն անունը և կրոնը փոխելու դեպքում<sup>83</sup>:

Հայերը Սիրիայի պատմության բոլոր փուլերում կարևոր տեղ են ունեցել: Դա վերաբերում է նաև մամուլի զարգացման պատմության ասպարեզում: «Եվ Հալեպը մոր նման իր գիրկն առավ հայ բազմաթիվ տպագրողների և լրագրողների, բարենպաստ պայմաններ ստեղծեց նրա զարգացման համար, ապահովեց նրա խաղաղ զարգացումը»<sup>84</sup>, - իր գրքում նշում է արաբ հայտնի մտավորական Սահել Մալազին:

<sup>82</sup> هاشم عثمان، الصحافة السورية ماضيها وحاضرتها 1877-1970م، دمشق 1997، ص. 6.

<sup>83</sup> Սիրիական մամուլի անցյալը և ներկան 1877-1970 թթ., Դամասկոս, 1997, էջ 6:

<sup>84</sup> مهدي الملازي، مآلها، ص. 288.

Շատ են տպագրվել թերթեր, որոնց հրատարակության մեջ մեծ ավանդ են ունեցել հայերը: Դա ևս մեկ անգամ հաստատում է հայ-արաբական հարաբերությունների սերտացումը նշված ժամանակահատվածում: Դրանք են՝ «Ֆուռաթ» (Եփրատ), «Լիսան ալ-ահլի» (Ժողովրդական լեզու), «Փորձանք», «Հայ ծայն», «Սի-հաֆա Սուրիա» («Սիրիական մամուլ») և այլ հալեայան թերթեր<sup>85</sup>:

Արաբական առաջին լուսավորական պարբերականներից էր «Միռաթ-ալ-ահուալը» («Իրադարձությունների հայելի»), որը լույս էր տեսել 1854 թ. Ստամբուլում, որը հրատարակում էր հալեացի հայ Ռիզկալլա Հասունը: Այն բնույթով տեղեկատվական էր<sup>86</sup>: «Դա առաջին տեղեկատվական թերթն էր արաբական իրականության մեջ, որը հիմնվել և հրատարակվում էր ոչ թե արաբի, այլ հայի կողմից»<sup>87</sup>: Այս առումով հիշատակման է արժանի Ե. Նաջարյանի կարծիքը Հասունի արժանիքների մասին, ով հրապարակախոսական իր վարպետությամբ դարձավ արաբական մամուլի պատմության կենտրոնական դեմքերից մեկը. «Ասպարեզ էր իջնում Ռ. Հասունի «Միռաթ ալ-Ահուալ» շաբաթաթերթը, որը արաբական ոչ պաշտոնական ազատ քաղաքական առաջին պարբերականն էր»<sup>88</sup>:

Սահել Մալազին իր գրքում արաբախոս ընթերցողներին նաև տեղեկացնում է, որ 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո հայ ժողովրդի մի ստվար զանգված լքում է հայրենիքը: Դա ահռելի չափեր է ընդունում 1915 թ. ցեղասպանությունից հետո. «Հայերը գաղթականի կարգավիճակով հայտնվում են հին գաղթօջախներում, ինչպիսին Հալեպն էր, հիմնում են նորերը: Հալեպը թուրքական սահմանից դեպի հարավ ընկած առաջին

<sup>85</sup> نورا اريسيلن, Արիսյան Ն., նշվ. աշխ., էջ 30:

<sup>86</sup> 105. تاريخ الصحافة العربية, الجزء الثاني, بيروت 1913, ص. 105: Արաբական մամուլի պատմություն, Երկրորդ մաս, Բեյրութ, 1913, էջ 105:

<sup>87</sup> 48. منظر موصلی، الصحافة العربية ومؤسساتها، دمشق 1997، ص. 48: Արաբական մամուլը և նրա հիմնադիրները, Դամասկոս, 1997, էջ 48:

<sup>88</sup> Նաջարյան Ե., Արաբական մշակութային գարթոնքը, Եր., 1988, էջ 165:

հանգրվանն էր: Նրա հասարակական, բարիդրացիական մթնոլորտը հայերին կարողանում է սթափեցնել և վերածննդի հնարավորություն տալ մշակույթի ասպարեզում: Սակայն կորուստը մնում էր ցավալի, ինչն արտահայտված է ժամանակի «Փորձանք», «Աղբյուր» և այլ թերթերում»<sup>89</sup>: Ակնհայտ է, որ հայերը իրենց զգալի ներդրումն են ունեցել արաբական մամուլի և Հալեպի թերթերի զարգացման գործում մինչև Ֆեյսալի՝ թագավորական իշխանության գալը՝ 1918-1921 թթ.: Այդ ժամանակ արաբական թերթերը յուրօրինակ վերելք են ապրում՝ հանդես գալով միավորման և անկախության կոչերով: Սահել Մալազին իր գրքում Հալեպում հրատարակվող արաբական թերթերի կողքին ներկայացնում է նաև Հալեպի բուն հայկական թերթերը:

1867 թ. սկսվեց «Ֆուռաթ» պաշտոնական թերթի հրատարակումը: Այն հրատարակվում էր երկու լեզուներով՝ արաբերեն և թուրքերեն, իսկ 1869 թ. մոտ տարի ու կես հրատարակվել է նաև հայերեն լեզվով: Դրա հողվածների մեջ առկա են հայերին վերաբերող շատ գրառումներ<sup>90</sup>:

1877 թ. արաբ հայտնի մտավորական Աբդ առ-Ռահման ալ-Քաուաքիբին, ով դեմոկրատական ուղղության ջատագովներից էր, Հալեպում հիմնում է «Ալ-Շահբա» թերթը<sup>91</sup>: Նրանում տպագրվում էին հողվածներ, օրենքներ, լուրեր, թարգմանություններ:

Թերթի երկրորդ համարի հրատարակումից անմիջապես հետո օսմանյան կառավարությունն անմիջապես փակեց այն երկու ամսով՝ հետևյալ փոքր լուրի պատճառով. «Այնթափի բնակիչներից վեց հայ եկել են Հալեպ՝ կամավորական ռազմական խմբում ծառայելու, բայց նրանցից պահանջել են իսլամական անուններով ներկայանալ»<sup>92</sup>: Այս մասին արաբ հայտնի մտավորական

<sup>89</sup> سهيل الملازي Մալազի Ս., նշվ. աշխ., էջ 92:

<sup>90</sup> هاشم عثمان Օսման Յ., նշվ. աշխ., էջ 3:

<sup>91</sup> Շահբան Գալեպի հին անվանումն է:

<sup>92</sup> «الشهية» «Ալ-Շահբա», Գալեպ, 1877, № 2:

ժան Ղայան գրել է, որ Քաուաքիբին տպագրեց սուլթանի խոսքը լրագրի երկրորդ համարի առաջին էջի վրա, իսկ չորրորդ էջի վրա տպագրեց կասիդայի մի տուն, որում պաշտոնակատարները մերժում էին Հալեպում վեց խումբ քրիստոնյա հայերին կամավոր ծառայության ընդունել, քանի որ մուսուլման քիմ դարձել<sup>93</sup>: Քաուաքիբին հրատարակել էր առաջին էջում սուլթանի խոսքը զուտ քողարկելու համար 4-րդ էջի այդ տեղեկությունը: Լրագրողները օգտագործում էին նման միջոցներ իրենց գլխավոր գաղափարները քողարկելու և գործող իշխանության դեմ պայքարի համար, որին բնորոշ էր կաշառակերությունը, ինչից տուժում էին նաև հայերն այդ պայմաններում:

Քաուաքիբին իր մտքերն արտահայտում էր ազատության գովաբանման և պաշտպանության տեսանկյունից: Վառ գույներով նկարագրված է 1877 թ. նոյեմբերի 6-ին Կարսի ազատագրումը. «Ռուսաստանը վերցրեց Կարսը և 10000 զերի՝ տալով 30000 սպանված և գերազանցելով այն գինը, որն արժեր ինքնին»<sup>94</sup>, - հաղորդում է հեղինակը:

1879 թ. «Ալ-Շահբա» թերթը սկսեց վերահրատարակվել «Ալ-հիթիալ» («Չափավորություն») վերնագրով, որը քայլում էր «Ալ-Շահբայի» ճանապարհով և պահանջում էր Օսմանյան կայսրությունից բարեփոխումներ իրականացնել<sup>95</sup>: Այս ժամանակաշրջանում սիրիական թերթերը կարճ կյանք էին ունենում և շատ դանդաղ զարգանում: Նրանք հրատարակվում էին երկու լեզուներով՝ թուրքերեն և արաբերեն:

Այս շրջանում Սիրիայում հրատարակվող հայտնի թերթերից էր «Ալ-Շամ» թերթը (Ղամասկոս), որը 1896 թ. արաբ մտավորական Մուստաֆա Վասեֆը հրատարակում է թուրքական սուլթա-

<sup>93</sup> .153. ص. بيروت 1984, صحافة الكواكبي, جان داية, 1984, ص. 153. Բեյրութ, 1984, էջ 153:

<sup>94</sup> «Ալ-Շահբա», 1878, № 7:

<sup>95</sup> 10-րդ համարից հետո թերթը փակվեց:



տո տարածում ստացավ ու հայտնի դարձավ իթթիհադականների հանդեպ թշնամանքով, հատկապես, երբ նրանք դավաճանեցին արաբներին: Այնուամենայնիվ, Մուհամմադ Քուրդ Ալիի ընկերությունը Ջեմալ փաշայի և իթթիհադականների հետ պատճառ հանդիսացավ, որ որոշ հողվածներ գովաբանեն իթթիհադականներին:

Ուսումնասիրելով «Ալ-Մուքթաբաս»-ի համարները՝ տեսնում ենք, որ թերթը խրախուսում էր խաղաղությունն ու համաձայնությունն Օսմանյան կայսրության տարբեր տարրերի միջև և ամեն հարմար առիթի ժամանակ կոչ էր անում հայերին, արաբներին և թուրքերին ապրել փոխհամաձայնության մեջ: Այս թերթը պարբերաբար նշում էր, որ թուրքերը, արաբները, հայերը և հույները, ինչպես նաև կայսրության բոլոր մյուս տարրերը մի երկրի, մի ընտանիքի անդամներ են<sup>102</sup>:

«Ալ-Մուքթաբաս»-ի «Չկա կյանք արաբների համար, բացի թուրքերի հետ միավորումից» վերնագրով հողվածում հողվածագիրը մեկնաբանում է այն իշխող կարծիքը, որը տարածվել էր Օսմանյան կայսրության թուրք ազգության շրջանակներում: «Թուրքերը օսմանյան ոգին են իրենց գիտելիքների և քաղաքականության համար, հայերը (կենտրոն) լյարդն են իրենց արդյունաբերության և ձգտման համար, հույները սիրտն են իրենց բարձր կարևորության և խոհեմ մտքերի համար, բուլղարացիները՝ իրենց տոկունության և ջանասիրության համար, ալբանացիները իրենց ուժի և կայունության համար գլուխն են, հրեաները օսմանյան առևտրականներն են իրենց փողի և առևտրի համար: Այդ դեպքում ովքե՞ր են արաբները»<sup>103</sup>: Հողվածի հեղինակը այստեղ ուսումնասիրում է նաև փոքրամասնությունների դերը Օսմանյան կայսրությունում՝ հատկապես հայերի դերակատարու-

<sup>102</sup> "المقتبس" «Ալ-Մուքթաբաս», Դամասկոս, 1909, № 66:

<sup>103</sup> Նույն տեղում, № 118:

թյունը: Եվ հայերը (թերթի ուսումնասիրությունից ելնելով) համարվում են ամենաջանասեր ազգությունը: Հոդվածագիրը քաջալերում է արաբներին, որ գրավեն իրենց կարևոր դերը կայսրությունում, որովհետև անհնար է նրանց անջատումը կայսրությունից: Այդ պատճառով ավելի նախընտրելի լուծումը արաբների համար միավորումն էր թուրքերի հետ, որովհետև անհնար էր նրանց գոյությունը առանց թուրքերի: Իսկ «Ալ-Մուքթաբաս»-ի մեկ այլ՝ «Թուրքեր և արաբներ» վերնագրով հոդվածում նշվում էր, որ երկրի տարբեր տարրերն ու ազգությունները սկսել են համախմբել իրենց միությունները՝ պաշտպանելու համար իրենց ուղնահարված իրավունքները<sup>104</sup>:

Այս թերթը քննադատում էր դեսպոտիզմը, որը մերժում էր տարբեր տարրերի հավասարությունը և արաբ ազգությամբ պաշտոնյաների բազմացումը: Ուսումնասիրելու համար արաբների դիրքորոշումը հայերի հիմնախնդրի վերաբերյալ՝ անհրաժեշտ է ուսումնասիրել արաբների ու թուրքերի հարաբերությունների առանձնահատկությունը: Թերթը պարբերաբար լուսաբանում էր այդ հարաբերությունների իրական պատկերը: Մասնավորապես, թերթի 43-րդ համարում լույս տեսած Սալլահ ադ-Դին ալ Կասամի՝ «Արաբների հարցը և դրա ծագումը» վերնագրով հոդվածում հեղինակը պնդում էր, որ արաբների հարցը իր ծագումով նոր չէր և անդրադառնում էր անցյալին, երբ թուրքը հեզնանքով էր դիտվում արաբների կողմից: Կասամին առաջ է քաշում այն հարցը, թե ինչու թուրքերը հայերին ու ալբանացիներին այնպես չեն վերաբերվում, ինչպես արաբների հետ: Եվ նա ինքը պատասխանում է, որ թուրք ազգությունը ուղքի է կանգնել արաբ ազգի հուշարձանների վրա, ստեղծել ու ամրապնդել է իր հիմքերը նրա փլատակների վրա<sup>105</sup>:

<sup>104</sup> Նույն տեղում, № 18:

<sup>105</sup> Նույն տեղում, № 43:

Արաբ մտավորական Աբդ ալ Քարիմ Ռաֆիկը իր գրքում նշում է, որ տարածայնությունները արաբների և թուրքերի միջև երևան եկան նոր խորհրդարանական ընտրությունների ժամանակ, որոնք տեղի ունեցան սահմանադրության ընդունումից հետո: «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության քաղաքականության մեջ փոփոխությունների պատճառ հանդիսացավ այն, որ կուսակցության անդամները էնվեր փաշայի գլխավորությամբ տարվեցին թուրանական գաղափարախոսությամբ՝ նախընտրելով Թուրքիայի ազգային քաղաքականությունը, որը հաստատում էր թուրքերի՝ թուրանական գաղափարախոսության արմատների «հիմքը» լինելը: Հեղինակի կարծիքով՝ թուրանական գաղափարախոսությունը հակասում էր Օսմանիզմին, որի նպատակը կայսրությունում ապրող տարբեր ազգերի միավորումն էր մեկ պետության սահմաններում հավասարության սկզբունքով<sup>106</sup>:

«Ալ-Մուքթաբաս»-ի՝ հայերին վերաբերող հոդվածների թիվը հասնում է մոտ 200-ի<sup>107</sup>: Թերթը պատմում է հայերի՝ սիրիական անապատ գաղթի, ինչպես նաև Սիրիայում հայերի հաստատման մասին: Հայերին վերաբերող հոդվածները կարելի է բաժանել 3 խմբի՝ 1. հայերի գաղթը, 2. հայկական կոտորածները, 3. հայերի հաստատվելը Սիրիայում: Դրանք հաճախ լույս էին տեսնում հետևյալ անուններով՝ «Հատուկ նամակներ», «Տեղական լուրեր», «Լուրեր Թուրքիայից»: 1908 թ. դեկտեմբերի 20-ին հրատարակված թերթի չորրորդ համարում խոսվում էր սուլթանի՝ հայ-թուրքական լարված հարաբերությունների մտահոգության մասին, ինչպես նաև ներկայացվում են հայ պատգամավորներ Գ. Չոհրասպի և Վարդգեսի՝ օսմանյան պետությանն ուղղած նամակ-

<sup>106</sup> 534. ص. مشق 1993, العرب والعثمانيون 1516-1916, عبد الكريم رافق, Ռաֆիկ Աբդ ալ-Քարիմ, Արաբները և Օսմանցիները 1516-1916 թթ., Դամասկոս, 1993, էջ 534:

<sup>107</sup> Դրանց մեծ մասը վերաբերում է հայերի 1915 թ. ցեղասպանության ու դրան հաջորդած ժամանակաշրջանին, որոնք ներառված չեն մեր աշխատության մեջ:

ները<sup>108</sup>: Իսկ 111-րդ համարում տեղեկություն էր հայտնվում հայկական գաղթի վերաբերյալ. «Հալեպից քրիստոնյանները նստում էին գնացքները և տեղափոխվում Լիբանան՝ վախճ սրտներում»<sup>109</sup>:

«Ալ-Մուքթաբասը» իր համարներում շատ է անդրադարձել օսմանյան խորհրդարանի պատգամավորների ելույթներին, նամակներին: Թերթի լրագրողները նմանեցնում էին արաբ պատգամավորներին արձանների, իսկ հայ պատգամավոր Ջոհրապ Էֆենդուն ներկայացնում էին որպես հանճարեղ մարդու, ով իր խրոխտ ու բամբ ծայնով լցնում էր ունկնդիրների սրտերը, իսկ Վարդգեսն իր ուժեղ ծայնով լարվածության մեջ էր պահում բոլորին: Նրանք փոքր թվով արաբ պատգամավորների հետ ձեռք էին բերել խորհրդարանի վստահությունը և զարդարում էին խորհրդարանը: «Նրանց նմանները բարձրացնում են հայրենիքի պատիվը, և ժողովրդի համար հնարավոր է դառնում քայլել դեպի վերածնունդ»<sup>110</sup>, - նշում է լրագրողը: Իսկ լրագրող Յեյդ Խեյրին իր՝ «Պատգամավորների խումբ» հոդվածում նշում է, որ պատգամավորների խորհուրդը պետք է վերացնի իր թույլ տարրերին, և իր անդամների մեծամասնությունը պետք է կազմեն արդուկհամիրյան վարչակարգի հակառակորդները, որպեսզի ստեղծվի պատգամավորական ամուր խորհրդարան<sup>111</sup>:

Իր հաջորդ համարներում «Ալ-Մուքթաբասը» շարունակում է նորություններ տրամադրել հայ պատգամավորների մասին: 1911 թ. թերթի 700-րդ համարում ներկայացվում է օսմանյան խորհրդարանի նիստերից մեկի ժամանակ սիոնիստների շարժման վերաբերյալ կառավարության դիրքորոշումը քննարկելիս հայ պատգամավոր Վարդգեսի ելույթը. «Ես առաջարկում եմ սիոնիստների հարցի շուրջ վերջնական սահմաններ դնելու հա-

<sup>108</sup> «Ալ-Մուքթաբաս», 1908, № 4:

<sup>109</sup> Նույն տեղում, 1909, № 111:

<sup>110</sup> Նույն տեղում, № 204:

<sup>111</sup> Նույն տեղում:

մար կոմիտե ստեղծել, և ես մինչ օրս ոչինչ չեմ խոսել հայերի մասին՝ հայ լինելով հանդերձ, մինչդեռ հայտնի է, որ սահմանադրության ընդունումից հետո հայերը ապրում են հանգիստ շրջան, սակայն նաև այս ժամանակաշրջանում նրանք տվել նոր սպանվածներ»<sup>112</sup>: Սիոնիստական շարժման վերաբերյալ ուշադրության է արժանի նաև արաբ մտավորական Նասուհ Բաբիլի հոդվածը, որում հաղորդվում է, որ Օսմանյան կայսրության մայրամուտը լավ մտածված, խոր արմատներ ունեցող դավադրություն է, որը կազմակերպել են աշխարհի սիոնիստները, իսկ որոշ քանակի արաբ պատգամավորներ տեղյակ էին նրանց ծրագրի մասին և արաբական լրագրության մեջ պաշտպանում էին սիոնիստների քաղաքականությունը<sup>113</sup>:

«Ալ-Մուքթաբաս» իր համարներում անդրադառնում է նաև Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածների լուսաբանմանը: Մասնավորապես, 1909 թ. օգոստոսի 3-ին «Ներքին իրադարձություններ» վերնագրով լույս է տեսնում Ադանայի կոտորածի մասին հոդվածը, որում թերթը տեղեկություններ է հայտնում Ադանայի կոտորածի վերաբերյալ ռազմական խորհրդի կողմից կայացված որոշման մասին: Նրանում ասվում է, որ խառնաշփոթի հիմնական պատճառներից մեկը իշխանությունն էր, որը, տեղեկանալով առաջին բախումների մասին, համապատասխան միջոցառումներ չձեռնարկեց: Իսկ այն բանից հետո, երբ սահմանադրության ընդունումից հետո անցավ ուրախությունների առաջին ալիքը, Եվրոպայի հայ հեղափոխական խմբակները հայերի մեջ արթնացրեցին անկախության գաղափարը: Ներկայացվում է մահմեդական իշխանավորների (այս դեպքում թուրքերի) «տգիտությունը»՝ լուսաբանելով Ադանայի հայ աշխատավորական խավի վիճակը և նրա՝ զինված բախումների կենտրոն դառնալը:

<sup>112</sup> «Ալ-Մուքթաբաս», 1911, № 700:

<sup>113</sup> 14. ص. 1987, لندن في القرن العشرين, وسياحة سورية في القرن العشرين, لندن 1987, ص. 14. Սիրիայի մամուլը և քաղաքականությունը 20-րդ դարում, Լոնդոն, 1987, էջ 14:

Հողվածը հաստատում է, որ իշխանությունը ամեն ինչ անում էր հայերի և մահմեդականների (արաբների) միջև նախանձ ու ատելություն սերմանելու համար: Այնուհետև հողվածագիրը հայտնում է, որ իշխանությունները ստահող լուրեր էին տարածում, թե իբր գինված հայերը մտադրվել են ոչնչացնել մահմեդականներին, որի արդյունքում էլ վերջիններս դիմեցին ինքնապաշտպանության: «Կոտորածը սկսվեց, երբ լուր տարածվեց, որ հայը սպանել է մահմեդականի: Դրանից հետո մահմեդականները սկսեցին հարձակվել քաղաքի՝ հայերով բնակեցված շրջանների վրա՝ կողոպտելով ու թալանելով դրանք: Իսկ ինչ արեց իշխանությունն այս իրադարձությունների ուղղությամբ: Նա ձերբակալեց մեծ թվով հայերի՝ նետելով նրանց բանտերը և համարելով նրանց այս անկարգությունների մեղավոր»<sup>114</sup>, - ցավով նշում է հողվածագիրը: Հողվածի վերջում հաղորդվում է, որ Ադանայի բնակիչները այն բանից հետո, երբ հայերի մեծ մասը սպանվեց, որոշեցին հեռագիր ուղարկել կառավարությանը՝ պահանջելով համաներում շնորհել ձերբակալված հայերին<sup>115</sup>:

1911 թ. հոկտեմբերի 10-ին «Ալ-Մուքթաբասը» իրատարակեց մի հողված «Սիրիայի բնակիչները» վերնագրով, որում տեղեկություններ կային նաև հայերի թվաքանակի վերաբերյալ: Օրինակ, նշվում էր, որ Անատոլիայում հայերի թիվը մոտավորապես 1.265.000 է, իսկ 1906-1907 թթ. մարդահամարի տվյալներով հայերի թիվը Սիրիայում և Լիբանանում կազմում է 23815 մարդ, իսկ կաթոլիկ հայերինը՝ 19459<sup>116</sup>: Մեկ այլ հողվածում թերթը հաղորդում է. «Արաբներն Օսմանյան կայսրության խոշոր ժողովուրդն էին, որոնցով էր պայմանավորված օսմանյան պետության հզո-

<sup>114</sup> «Ալ-Մուքթաբաս», 1909, № 194:

<sup>115</sup> Նույն տեղում:

<sup>116</sup> Նույն տեղում, 1911, № 799:

րությունը թե նյութական, թե մարդկային տեսանկյունից<sup>117</sup>, իսկ քրիստոնյաները՝ ի դեմս հույների և հայերի, փոքրամասնություն էին, բայց ունեին ձայնի իրավունք»<sup>118</sup>: Իսկ 1913 թ. հուլիսի 8-ին հրատարակված «Իշխանությունը և բնակիչները» վերնագրով հոդվածում թերթը հայերի մասին գրում է, որ Սիրիայի քաղաքներում բնակվող հայերը խոսում էին հայերեն, և սկզբնական շրջանում առկա են եղել հայերի և արաբների միջև լեզվական դժվարություններ: Սակայն այս իրավիճակը երկար չտևեց: Երկու ժողովուրդները կարողացան հաղթահարել այս խոչընդոտը և ձևավորվեցին բնական հարաբերություններ նրանց միջև<sup>119</sup>:

«Ալ-Մուքթաբաս» թերթն իր համարներում առանձնահատուկ տեղ է հատկացնում հայկական բարենորոգումների թեմայի լուսաբանմանը: Մասնավորապես, 1913 թ. օգոստոսի 28-ին լույս տեսած համարում թերթը նշում էր, որ Բ. Դուռը բանակցություններ է վարում հայերի ներկայացուցիչների հետ՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում բարենորոգումների շուրջ, և հույս է հայտնում հայ ներկայացուցիչների հետ համաձայնության գալու վերաբերյալ<sup>120</sup>: Իսկ մեկ այլ՝ «Բարենորոգումները և հայերը» վերնագրով հոդվածում հաղորդում է, որ հայերը ջանասեր են, հմուտ առևտրում և տնտեսության մեջ, հետո ավելացնում, որ օսմանյան կառավարությունը ցանկանում է բարենորոգումներ իրականացնել հայկական վեց վիլայեթներում. «Օսմանյան կառավարությունը դեռևս հնուց նախաձեռնում է հայերի համար բարենորոգումներ, որի մասին խոսվել է Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածում, ըստ որի, որքան հնարավոր է արագ պետք է հայե-

<sup>117</sup> Օսմանյան կայսրության բնակչությունը XX դ. սկզբին 21-22 միլիոն էր, որից 7.5 մլն. թուրքեր էին, 10.5 մլն. Արաբներ էին, իսկ մնացած 4 միլիոնը՝ հույներ, հայեր, ալբանացիներ, քրդեր և այլ ազգեր: Տես՝ Antonius G., The Arab Awakening, The History of the Arab National Movement, N.Y., 1947, p. 104.

<sup>118</sup> «Ալ-Մուքթաբաս», 1911, № 804:

<sup>119</sup> Նույն տեղում, 1913, № 1273:

<sup>120</sup> Նույն տեղում, № 1281:

րին պաշտպանել չերքեզներից ու քրդերից, և բարենորոգումներ իրականացնել, մինչդեռ դրա փոխարեն տուժեցին հայերը: Հայերից ոմանք հավատացին խոստումներին, և առատ արյուն թափվեց»<sup>121</sup>: Իսկ վերջում Քուրդ Ալին նշում էր, որ կառավարությունը պիտի ավելի ազնիվ գտնվի, քանի որ «դաժանության քաղաքականությունը շատ կործանիչ է»: Այդ խոսքի յուրահատկությունն այն էր, որ արաբները նախընտրում էին նուրբ, արդար քաղաքականություն, ինչը կապված էր հայերի հիմնախնդիրների հետ:

Մուհամմադ Քուրդ Ալին հայերի մասին իր հոդվածներում անդրադառնում է նաև հայ-քրդական հարաբերությունների լուսաբանմանը: Մասնավորապես, «Քրդերը և հայերը» վերնագրով հոդվածում խոսվում է քրդերի և հայերի միջև պատմության ընթացքում գոյություն ունեցող հարաբերությունների մասին. «Շատ ցավալի է, որ հնարավոր չեղավ հասնել հայերի և քրդերի համերաշխությանը օսմանյան իշխանության պառակտիչ քաղաքականության պատճառով, անվտանգությունը վերացավ, տնտեսությունը չզարգացավ, չկային կյանքի բարվոք պայմաններ, ոչ մի բարեփոխում չեղավ»<sup>122</sup>: Հոդվածագիրը հաղորդում է, որ քրդերն Արևելյան Անատոլիայում աղքատության մեջ են ապրում, մինչդեռ նրանք երկրի ամենախելացի, ամենաջանասեր տարրերից էին<sup>123</sup>: Իսկ հայերի մասին խոսելիս Քուրդ Ալին նշում էր, որ հայերը, անկասկած, սուլթանության տարրերից ամենաբանիմացն են տնտեսության, գիտությունների բնագավառներում. «Հայերը մեծ օգուտ են քաղում՝ մեկնելով Եվրոպա և առևտրական, ուսումնական կապեր հաստատելով արևմուտքի հետ»<sup>124</sup>: Նա նաև նշում է իր հոդվածում առևտրի, տնտեսության ձգնաժամի պատճառները, ինչը «այն կառավարության պատճառով է, որը շարունա-

<sup>121</sup> Նույն տեղում, № 1295:

<sup>122</sup> Նույն տեղում, № 1298:

<sup>123</sup> Նույն տեղում:

<sup>124</sup> Նույն տեղում, № 1298:

կում էր տգիտությունը որպես ուժ ընդունել, երկպառակությունը տարբեր տարրերի միջև՝ որպես զենք»<sup>125</sup>: Քրդերին տված այս գնահատականից կարող ենք եզրակացնել, որ Մուհամմադ Քուրդ Ալին քրդերին ավելի ցածր էր գնահատում հայերից, քանի որ քրդերը չգիտեին առևտուր անել, անասնապահությամբ, արդյունաբերությամբ զբաղվել, միայն ապրում էին իրենց զենքի հաշվին, իսկ հայերը գործում և քաղում էին աշխատանքի պտուղները:

Հաջորդ ժամանակաշրջանում՝ 1914 թ. սկսած «Ալ-Մուքթաբաս» թերթն իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է Օսմանյան կայսրության ընդարձակման և հզորացման թեմաների լուսաբանման վրա, իսկ «Անատոլիայի նկարագրական ակնարկ» հոդվածում պատմական տեղեկություններ է տալիս նրա բնության, արդյունաբերության մասին: Հոդվածի վերջում հեղինակը գրում է. «Ես Անատոլիայում չեմ տեսել արաբ-թուրք առանձնացումը, այլ տեսել եմ իմ եղբայր թուրքերը ինչպես են սրբացնում արաբի որդուն»<sup>126</sup>: Նրա շարադրանքից ակնհայտ է, որ Ալին փորձում էր չեզոք լինել այդ նուրբ հարցում, քանի որ նա ներկայացնում էր Ղանասկուսի իթթիհադականների խումբը:

«Ալ-Մուքթաբաս» թերթը շարունակում է իր աշխատանքը նաև առաջին աշխարհամարտի տարիներին՝ հրատարակվելով մինչև 1928 թ.: Բացի առօրյա թեմաներից և իրադարձություններից, այն հաճախ անդրադարձ էր կատարում նախապատերազմյան վիճակին, նկարագրում Մուշում և Սասունում, Ջեյթունում և Ադանայում, Իզմիրում և այլուր տեղի ունեցող դեպքերը: «Ալ-Մուքթաբաս» թերթը տեղեկություններ է հայտնում նաև հայ-թուրքական և հայ-արաբական հարաբերությունների մասին:

1907 թ. Քուրդ Ալին տպագրեց նաև «Ալ-Մուքթաբաս» ամսագիրը Եգիպտոսում՝ որպես գրական, գիտական, հասարակական

<sup>125</sup> «Ալ-Մուքթաբաս», № 1298:

<sup>126</sup> Նույն տեղում, 1914, № 1403:

ամսագիր, իսկ երեք տարի անց տպագրման վայրը տեղափոխվեց Ղանասկոս: Ամսագիրը տպագրում էր փիլիսոփայական, դաստիարակչական, պատմական հոդվածներ ու թարգմանություններ: Ամսագրի՝ 1909 թ. հրատարակված երրորդ գլխում («Օսմանյան լրագրություն») համեմատություն է անցկացվում հայկական, թուրքական և արաբական քաղաքականության միջև, որում գրված է. «Սիրիայում, Իրաքում, Ալժիրում, բացի որոշ դեպքերից, հանցանքներ չէին լինում, և դրանց մասին չէր խոսվում թերթերում և լրագրերում, իսկ թերթերը անամոթ սուլթանի գլխավոր թշնամին էին»<sup>127</sup>: Ինչպես նաև հեղինակը նշում էր, որ թուրքական լրագրությունն իր ուժը ստանում էր գործածվող լեզվից:

20-րդ դարի սկզբին Ղանասկոսում հրատարակվող հայտնի լրագրերից էր նաև «Ալ-Նիամա» (Բարեկեցություն) լրագիրը: Հիմնվել է 1909 թ. Ղանասկոսում Անթակիայի ուղղափառ պատրիարքության կողմից: Այն իր բնույթով կրոնական էր, տպագրում էր կրոնական, գրական, գիտական, պատմական հոդվածներ, ինչպես նաև ներքին ու արտաքին նորություններ: Դրանց հեղինակները քահանաներն ու կրոնավորներն էին: Լրագիրը կոչ էր անում օսմանյան պետության բոլոր ազգերին համախմբվել՝ խաղաղության մեջ ապրելու համար<sup>128</sup>:

1909 թ.-ից Ղանասկոսում սկսվեց հրատարակվել ամենօրյա «Ալ-Ռումա» (Ազգ) թերթը, որի խմբագիրը հայտնի մտավորական, լրագրող Ահմադ Քուրդ Ալին էր: Այն հրատարակում էր քաղաքական, հասարակական, տնտեսական բնույթի հոդվածներ: Ճիշտ է, թերթը շատ չէր անդրադառնում հայկական իրադարձություններին, սակայն նրա որոշ համարներում արժեքավոր տեղեկություններ կան հայերի մասին: 1909 թ. դեկտեմբերի 16-ին լույս տեսած 12-րդ համարում հոդվածագիրը տեղեկացնում է.

<sup>127</sup> نورا اريسين، Արիայան Ն., նշվ. աշխ., էջ 53:

<sup>128</sup> هاشم عثمان، Օսման Գ., նշվ. աշխ., էջ 34:

«Աղանայից հայտնեցին մայրաքաղաքի թերթերին, որ հայերը մեծ հակվածություն ունեն զինվորական կորպուս մտնելու: Կիպրոս ու այլ վայրեր գաղթած հայերը սկսել են վերադառնալ Օսմանյան կայսրություն՝ ստանձնելու այս պարտավորությունները: Բացի այդ՝ հայերը սպասում են հրամանի գնալու այնտեղ, ուր կցանկանա կառավարությունը»<sup>129</sup>: Այստեղ ակնհայտ է, որ այս տեղեկությանը նախորդել էր Թուրքիայից եկած հակասական լուրը: «Ալ-Ռումմա» թերթը նաև մանրամասն տեղեկություններ է հայտնում օսմանյան խորհրդարանի պատգամավորների գործունեության վերաբերյալ, ներկայացնում նրանց ելույթները: Մասնավորապես, «Ներքին իրադարձություններ» վերնագրով հոդվածում լուսաբանվում է լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայ պատգամավոր Վարդգեսի կարծիքը Գրիգոր Զոհրապի վերաբերյալ<sup>130</sup>: Իսկ 49-րդ համարում մանրամասն ներկայացվում է լրագրողների հանդիպումը Վարդգեսի հետ, որն իր դժգոհություն էր արտահայտում Հաքի փաշայի՝ փոքրամասնությունների նկատմամբ վարած ներքին քաղաքականությունից. «Եթե Հաքի փաշան չվարեր կրոնական խտրականության քաղաքականություն, ապա մենք կանցնեինք նրա կողմը ու կհետևեինք նրան առանց նայելու մեր՝ մյուս կուսակցությունների հետ կայացրած որոշումներին»<sup>131</sup>: Ակնհայտ է, որ սիրիացի լրագրողները հետաքրքրվել էին հայ պատգամավորների ելույթներով, նամակներով և համարձակ հրապարակել դրանք սիրիական մամուլում:

«Ալ-Ռումմա» թերթը տարածում էր նաև իշխանամետ լուրեր: Օրինակ՝ 1910 թ. հունվարի 30-ին հրատարակված համարը տեղեկացնում էր, որ իշխանությունները հասկացել են իրենց սխալները և սկսել են շտկել դրանք. «Կառավարությունը հատկացրել

<sup>129</sup> "أزمة" «Ալ-Ռումմա», Դամասկոս, 1909, № 12:

<sup>130</sup> «Ալ-Ռումմա», 1910, № 29:

<sup>131</sup> Նույն տեղում, № 49:

է 15 հազար լիրա՝ Ադանայում այրված հայկական եկեղեցիներն ու դպրոցները կառուցելու կամ նորոգելու համար»<sup>132</sup>:

Մենք, իրոք, մեծ նշանակություն ենք տալիս Սիրիայի արաբալեզու մամուլին, որն օսմանյան բռնապետության պայմաններում բազմաթիվ տեղեկություններ է հայտնել հայերի մասին: Սիրիայի արաբալեզու մամուլը 1877-1914 թթ. արժեքավոր տեղեկություններ է հայտնում հայկական կոտորածների ու գաղթի մասին: Այն կարևոր աղբյուր է հայերի ցեղասպանության, ջարդերի և գաղթերի վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք, լրագրողները Հայոց ցեղասպանության և գաղթի մասին տեղեկությունները հաղորդել են արժանահավատորեն:

Սիրիայի արաբալեզու մամուլի՝ հայերի մասին հիշատակումները մեկ անգամ ևս ընդգծել են Հայկական հարցի կարևորությունը դրա էջերում:

---

<sup>132</sup> Նույն տեղում, № 47:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ԱԼ-ԹԱԿԱԴԴՈՒՄ» ԹԵՐԹՈՒՄ (1908-1914 ԹԹ.)

### 2.1 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության իրավիճակի ու խորհրդարանական ընտրությունների մասին անդրադարձը

20-րդ դարի սկզբին Հալեպում տպագրվող ամենահայտնի թերթերից էր «Ալ-Թակադդում»-ը (Առաջընթաց), որը սկսել է հրատարակվել 1908 թ. օգոստոսից, որպես քաղաքական շաբաթաթերթ, որի գլխավոր խմբագիրը Շուքրի Քանիդրն էր: Թերթը մինչև 7-րդ համարը կոչվել է «Ալ-հաուադիս ալ-դախսիլիս» (ներքին իրադարձություններ), քանի որ հրատարակում էր Օսմանյան կայսրության ներքին գործերին վերաբերող տեղեկություններ: Արդեն 8-րդ համարից՝ 1908 թ. հոկտեմբերի 15-ից վերանվանվել է «Ալ-Թակադդում»: Այն զովերգում էր ազատությունը, քննադատում բռնապետությունը, անօրինականությունը: Թերթը լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, իսկ 1913 թ.-ից՝ շաբաթական երեք անգամ: Այսպես շարունակվեց մինչև 1914 թ. կեսերը՝ առաջին աշխարհամարտի սկիզբը, որից հետո փակվեց և վերաբացվեց միայն 1919 թ. հունվարի 16-ին: Տպագրվել է մինչև 1940-ական թթ.: Նրանում հրատարակվող տեղեկությունների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների՝ այդ թվում հայերի մասին հիշատակումները: Այս թերթի մասին արաբ հայտնի պատմաբան Ժուզեֆ Իլիասն ասել է, որ այն ընդգծվում է իր նյութերի ճշգրտությամբ և բազմազանությամբ: Իր տեղեկությունների հա-

րստությամբ այն գերազանցում էր սիրիական բոլոր թերթերին: Նմանապես ազդեցիկ էր Ղամասկոսում հրատարակվող «Ալ-Մուքթաբաս» թերթը: «Այս երկու թերթերն աչքի էին ընկնում մանրագնին ուսումնասիրություններով, և դրանք հավուր պատշաճի ներկայացնելու կարողությամբ»<sup>133</sup>, - նշում է ժուզեֆ Իլիասը:

«Ալ-Թակադդում» թերթի՝ հայերին վերաբերող հոդվածների թիվը հասնում է մի քանի հարյուրի, որոնց մեծ մասը վերաբերում է հետևյալ թեմաներին՝ 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածը, 1910-1913 թթ. հայ-քրդական հարաբերություններն ու 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների լուսաբանումը: Բացի վերոնշվածի լուսաբանումից, «Ալ-Թակադդում» թերթն իր՝ 1908-1914 թթ. լույս տեսած համարներում նաև հրատարակում է հայերին վերաբերող մի քանի այլ, առանձին իրողությունների վերաբերյալ հոդվածներ:

«Ալ-Թակադդում» թերթը կարևոր նշանակություն է տվել նաև մերկացնող երգիծական հրապարակումներին: Մասնավորապես, «Խաբելու վարպետությունը» վերնագրով հոդվածում լուսաբանվում է աբդուլհամիդյան կառավարման շրջանում հայկական կոտորածների վերաբերյալ կատարված այդ բնույթի մի դեպքի մասին: Այստեղ մեծ վեզիրի թարգմանիչ Իայո ադ Ղին Բիքը հաղորդում է, որ մի օր Կ. Պոլսում Անգլիայի դեսպանը գալիս է մեծ վեզիր Խալիլ Ռիֆաթի պալատ՝ պահանջելով Բ. Ղենից վերջ տալ հայկական կոտորածներին՝ ասելով, որ բանակը ավելի շատ հայ է կոտորում, քան տեղացիները: Վեզիրը, տեղեկանալով դեսպանի ժամանման մասին, դանդաղ քայլելով մոտենում է վերջինիս՝ ձևացնելով, որ շատ հոգնած է: Մինչ դեսպանը խոսում էր հայկական կոտորածների մասին, քունը հաղթեց վեզիրին: Ուշքի գալով՝ ներողություն խնդրեց դեսպանից. «Ծերութ-

<sup>133</sup> جوزيف الينس Իլիաս Ժ., նշվ. աշխ., էջ 143:

յունն իրենն անում է»<sup>134</sup>, - այնուհետև խնդրեց դեսպանին շարունակել իր խոսքը: Եվ երբ դեսպանը սկսեց նորից խոսել, վեզիրի քունը կրկին հաղթեց նրան: Կրկին ուշքի գալով՝ վեզիրը ներողություն խնդրեց՝ ասելով. «Երեկ ամբողջ օրը մի վայրկյան անգամ չեմ քնել»<sup>135</sup>: Դեսպանը կրկին սկսեց շարունակել իր խոսքը, սակայն վեզիրը նորից քնեց, և այս վիճակը շարունակվեց մոտ ժամ ու կես, մինչև որ դեսպանը ծանծրացավ ու լքեց վեզիրի պալատը: Հեռանալով պալատից՝ դեսպանն ասաց վեզիրի թարգմանչին. «Խեղճը շատ հիվանդ է և ծերացել է արդեն»<sup>136</sup>: Դրանից հետո, երբ թարգմանիչը վերադառնում է մեծ վեզիրի մոտ, վերջինս ծիծաղելով ասում է. «Սուլթանն հրամայել է ինձ, որ երբ դեսպանը գա, ստանա ոչ ճիշտ պատասխան, և նման կերպ վարվելը միակ ճանապարհն էր նրանից ազատվելու համար»<sup>137</sup>: Այս հոդվածը ևս մեկ անգամ ապացուցում է, որ արքունիկամիդյան վարչակարգը պետական մակարդակով իրականացրել է հայկական կոտորածները, իսկ մեծ տերությունները մատների արանքով են նայել այդ ամենին:

«Ալ-Թակադդում» թերթն իր համարներում մեծ տեղ է հատկացրել 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի մասին օսմանյան խորհրդարանի պատգամավորների ելույթների լուսաբանմանը: Մասնավորապես, «Կարևոր ճառ պատգամավորների խորհրդում» վերնագրով հոդվածում ներկայացվում է Ամասիայի շրջանից ընտրված պատգամավոր Իսմայիլ Հաքքը բեյի՝ խորհրդարանի նիստի ժամանակ արտասանած ճառը, որը փաստորեն կառավարության դեմ ուղղված ազդեցիկ խոսք է: Այստեղ պատգամավորը քննադատում է երիտթուրքական կառավարության

<sup>134</sup> «انتم» «Ալ-Թակադդում», Հալեպ, 1909, № 18:

<sup>135</sup> Նույն տեղում:

<sup>136</sup> Նույն տեղում:

<sup>137</sup> Նույն տեղում:

վարած քաղաքականությունը: Իսմայիլ Հաքքը բեյը նշում է, որ երկու տարի առաջ՝ սահմանադրության ընդունման ժամանակ, Օսմանյան կայսրության բոլոր ազգերը գոհ էին և ուրախությամբ միմյանց շնորհավորում էին. «Եվ միթե այսօր էլ են նրանք այդպես մտածում»<sup>138</sup>, - իր գործընկերներին շրջվելով՝ հարցնում է պատգամավորը: Այնուհետև անդրադառնում է մամուլի առկա վիճակին՝ նշելով, որ ոչ ոք չի կարող ազատ իր ծայնը բարձրացնել: Պատգամավորը հայտնում է, որ թերթերը համայնքի ներկայացուցիչներն են. «Եթե նրանց ազատ դրսևորվելու հնարավորություն տրամադրենք, ապա մեր ընտանիքներն ու մեր ամբողջ ազգն ավելի ամուր կլինեն: Իսկ դրա փոխարեն մենք մեր ձեռքերով բարձրացրել ենք կացինը և ջարդում ու փշրում ենք ամեն ինչ՝ անմխիթաբար պայմաններ ստեղծելով թերթերի գործունեության համար»<sup>139</sup>, - զայրացած ասում է Իսմայիլ բեյը: Իր ճառի վերջում պատգամավորը նշում է օսմանյան կառավարության վարած քաղաքականության սխալները. «Մեկ խոսքով ձեզ ասեմ՝ այսօրվա մեր վարած քաղաքականությունն ունի ոչ հեռանակարային բնույթ: Մենք շարունակում ենք սխալ գործել և օտարերկրացիները շարունակում են սաստկացնել մեր սխալը՝ ավելի վատթարացնելով իրավիճակը: Երանի այս խոսքերը «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության իմ խմբավորման ներկայացուցիչներին զայրացնեն և ստիպեն նրանց արագ քայլեր ձեռնարկել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման համար»<sup>140</sup>, - եզրափակելով իր ճառը՝ ասում է Իսմայիլ Հաքքը բեյը:

«Ալ-Թակադդում» թերթն իր համարներում անդրադարձել է նաև երիտթուրքական հեղափոխության վերաբերյալ օտար մտավորականների կարծիքների լուսաբանմանը: Մասնավորապես, «Օսմանյան ազգությունները» հոդվածում ներկայացվում է

<sup>138</sup> Նույն տեղում, 1910, № 160:

<sup>139</sup> Նույն տեղում:

<sup>140</sup> Նույն տեղում:

Ֆրանսիացի մի գրողի կարծիքը 1908 թ. երիտթուրքական հեղափոխության վերաբերյալ: Գրողը հաղորդում է, որ օսմանյան մեծ հեղափոխության մեջ կարևոր դերակատարում ունեցել են օսմանահպատակ գրեթե բոլոր ժողովուրդները՝ այդ թվում նաև հայերը: Նրանք մեծ ազդեցություն են ունեցել օսմանյան կառավարության փոփոխման և սահմանադրության հռչակման մեջ: Պետության կայունության համար ազգային միասնության առաջին ջատագովներից էր Միդիատ փաշան: Նրա գաղափարներն արագորեն տարածվում են մարդկանց շրջանում, այն է՝ տարբերություն չդնել մահմեդականների, հայերի, հույների և հրեաների միջև, քանի որ նրանք բոլորն օսմանցի են: Այսպիսով, սահմանադրության ընդունումից հետո պետք է անհետանար փոխադարձ ատելությունն օսմանյան ազգերի միջև, նրանք բոլորը պետք է դառնային եղբայրներ, որոնց համար միակ բացարձակ արժեքը պետք է լիներ միացյալ հայրենիքը: «Նման դատարկ հույս տաժողներն ավելի էին մթագնում պետության հաջողությունների ու զարգացման ուղին: Այսպիսի գաղափարներ տարածելով՝ երիտթուրքերը փորձում էին հասնել օսմանյան ազգերի միասնության՝ հետին մտքերում ունենալով թաքնված ատելություն, որը հրահրվելու էր մահմեդականների և քրիստոնյանների, թուրքերի և արաբների մեջ»<sup>141</sup>, - հաղորդում է հեղինակը: Սակայն կրոնական առաջնորդները և ազգային ներկայացուցիչները միմյանց նայում էին թշնամու աչքով՝ փոխադարձ ատելությամբ՝ ցանկացած հարմար առիթի դեպքում պատրաստ լինելով վեճի բռնկվել: Եթե նրանց մեջ իշխեր բանականությունը, մի պահ կանգ առնեին ու «փոխադարձաբար նիզակներ» չնետեին միմյանց վրա, չէին առաջանա հուզումներ և խմորումներ, այլ դա միայն օգուտ կբերեր անդունդի եզրին կանգնած օսմանյան պետությանը: «Մինչև ապրիլի 13-ին կայացած զինվորական հեղափոխությունը, որի նպատակը սահմա-

---

<sup>141</sup> «Ալ-Թակադդում», № 115:

նադրական կառավարության ստեղծումն էր, տեղի էին ունենում սահմանադրությանը հակասող դեպքեր, ինչպիսիք էին Ադանայի ու Անտիոքի կոտորածները: Սահմանադրականների գլխավորությամբ բախումներ էին ծավալվում քրիստոնյաների և մուսուլմանների միջև Կ. Պոլսում, Ադանայում և այլուր: Ու այդ ամենը տեղի էր ունենում Աբդուլ Համիդի հրամանով»<sup>142</sup>, - եզրակացնում է հոդվածագիրը: Իրականում այս շրջանում տեղի ունեցած կոտորածներ կազմակերպողներն ու սանձազերծողները երիտթուրքական իշխանություններն էին:

Հոդվածի վերջում հեղինակը հայտնում է, որ երիտթուրքական նախահեղափոխական խոստումները կարճ ժամանակ անց հոդս ցնդեցին. «Առաջինը, որ պետք է կատարի օսմանյան կառավարությունը, այն է՝ պետք է վերացնի կրոնական մոլեռանդության հիմքերը և ոչ մահմեդականներին տա զենք կրելու իրավունք՝ հայրենիքը և ընտանիքը սիրով պաշտպանելու և այդ գաղափարները սերնդեսերունդ փոխանցելու համար: Հակառակ դեպքում նա ազգերին թշնամի և օտար կիսամարի իրենց իսկ հայրենիքի մեջ»<sup>143</sup>, - ամփոփում է հոդվածագիրը:

Մեկ այլ՝ «խռովությունները, հեղաշրջումները Թուրքիայում» վերնագրով հոդվածում թերթը տեղեկացնում է, որ սահմանադրության հռչակումից հետո Օսմանյան կայսրությունը զերծ չէր մնում ներքին խռովություններից ու հեղաշրջումներից: Նման առիթներից օգտվում էին պետության ներքին և արտաքին թշնամիները՝ ձգտելով սևացնել նրա վարկը և դնել նրա ճակատագիրը օտար երկրների առջև: «Եթե արդարացիորեն դիտարկենք այդ հուզումների պատճառները, ապա կտեսնենք, որ դրանք բոլորը բորբոքվել են սահմանադրության հռչակումից մինչ այսօր: Դրանց պատճառները նման են և ակնհայտ է, որ դրանք ոչ թե

---

<sup>142</sup> Նույն տեղում:

<sup>143</sup> Նույն տեղում:

ասհմանադրության կողմնակիցների ծեռքի գործն են, այլ հետևանք են այն բացասական երևույթների, որոնք իրականացրել էր նախորդ բռնապետական կառավարությունը՝ ժառանգաբար փոխանցելով ներկայիս կառավարությանը»<sup>144</sup>, - եզրակացնում է թերթը:

Ալբանական, հայկական խռովությունները, որոնց նպատակն ալբանացիների և հայերի՝ կայսրության մյուս ազգերի շարքում իրենց իրավունքներով ու պարտականություններով հաստատված տեղն ունենալն էր, Աբդուլ Համիդի բիրտ քաղաքականության հետևանքն էր: «Եվ այսպես է դրուզների այժմյան վիճակը, որոնց խռովության պատճառները նման են ալբանացիների բողոքի պատճառներին: Եվ եթե նայենք արաբական երկրների հեղափոխություններին, ապա կտեսնենք, որ դրա պատճառներն արաբ ժողովրդի անգրագիտությունն ու ծայրահեղ աղքատությունն են, որի մեջ ընկղմված էր այս կողմի ժողովուրդը հեռավոր ժամանակներից ի վեր: Բացի այդ՝ ակնհայտ է, որ բոլոր իրադարձությունների գլխավոր մեղավորը կառավարությունն էր, որն ամեն կերպ խոչընդոտում էր Օսմանյան կայսրության ճնշված տարրերին մուտք գործել պետության ներքին կառավարման ոլորտ»<sup>145</sup>, - ավելացնում է հոդվածագիրը:

Հոդվածագիրն Օսմանյան կայսրության ներքին խռովությունների պատճառների շարքին դասում է մեծ տերությունների քաղաքականությունը, որոնք բորբոքում էին խռովության հուրը: «Մեծ տերություններն Օսմանյան կայսրությանը դիտում էին որպես հիվանդ մարդու, ով իր վերջին շունչն է փչելու: Անհրաժեշտ էր հնարավորինս օգտվել նրա ժառանգությունից»<sup>146</sup>, - նշում է հոդվածագիրը:

---

<sup>144</sup> «Ալ-Թակադդում», № 128:

<sup>145</sup> Նույն տեղում:

<sup>146</sup> Նույն տեղում:

Այնուամենայնիվ, թերթը խռովությունների գլխավոր պատճառը համարում է նախորդ կառավարության վարած ներքին քաղաքականությունը: Իսկ սահմանադրական կառավարության վերաբերյալ թերթը նշում է, որ այն աչքի չէր ընկնում խռովությունների արագ կանխման քայլերով. «Բոլոր հեղափոխությունները և խռովությունները պայթում էին հանկարծակի, և կառավարությունն արագ չէր արձագանքում ու համապատասխան միջոցներ չէր ձեռնարկում: Կառավարությունը հաճախ վալիներին ու նահանգապետերին վստահում էր ապստամբությունների ճնշումը, որոնք հաճախ վերածվում էին ջարդերի, ինչպես եղավ Ադանայում: Դրանով նահանգապետերն ավելի էին ամրապնդում իրենց իշխանությունը և հաստատվում իրենց պաշտոնում»<sup>147</sup>, - ամփոփում է հոդվածագիրը:

Պետք է նշել, որ, իրոք, Օսմանյան կայսրության վիճակը սկսեց վատթարանալ կայսրության ազգերի քաղաքական ակտիվացմանը զուգահեռ: Մակեդոնական շարժումը, ալբանական խնդիրը, Եմենի ապստամբությունը, Հայկական հարցը և կայսրության մյուս ազգային խնդիրների արձարձումը, ինչպես նաև առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը վերջինիս փլուզման պատճառ հանդիսացան: Օսմանյան կայսրության ներքին խռովությունների գործում իրենց «ներդրումն» ունեին մեծ տերությունները, որոնք ծգտում էին ազդեցության ոլորտների բաժանել Օսմանյան կայսրությունը ու իրենց շահերի իրականացման համար հանդես էին գալիս օսմանահպատակ ազգերի իրավունքների պաշտպանի դերում: Սակայն եվրոպական պետություններին ձեռնտու չէր թույլ և հետամնաց Օսմանյան կայսրության փոխարեն Արևելքում նորահայտ զարգացող պետությունների հանդես գալը, ուստի նրանք շահարգված էին պահպանել կայսրության տարածքային ամ-

<sup>147</sup> Նույն տեղում:

բողջականությունը, իսկ ժողովրդական լայն զանգվածների պահանջները բավարարել բարեփոխումների ծրագրերով: Ծայրահեղ դեպքերում նրանք կամ պայքարում էին օսմանահպատակ ըմբոստ ազգերի դեմ՝ կանգնելով թուրքերի կողքին, կամ գրավում այդ պետության մասերը: Այդ ճանապարհով նրանք գրավում են Օսմանյան կայսրության տարածքները կամ միանգամից (Ալժիր 1830 թ., Թունիս 1881 թ., Եգիպտոս 1882 թ., Ծոցի երկրներ 1890-ական թթ.) կամ ազդեցության ոլորտում ներառելով, ապա գրավելով (Սիրիա, Իրաք և այլն): Այնուհանդերձ, Օսմանյան կայսրության ներքին ապստամբությունների պատճառն օսմանյան իշխանությունների՝ և արդուլիհամիդյան վարչակարգի, և երիտթուրքական կառավարության վարած ներքին՝ հպատակ ազգերի ազտագրական շարժումների ճնշման, ազգերի իրավունքների ոտնահարման քաղաքականությունն էր:

1908 թ. հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրություն տիրող իրավիճակի մերկացմանն է ուղղված 1912 թ. հոկտեմբերին «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած թուրք գրող Ալի Բենալ բեյի<sup>148</sup> «Ինչ էինք և ինչ ենք դարձել» վերնագրով հոդվածը: Այստեղ թուրք գրողը հաղորդում է, որ երբ ինքը չորս տարի առաջ վերադարձել էր հայրենիք հեղափոխությունից հետո, տեսել էր մեծ առաջընթաց, որը մինչ այդ Օսմանյան ազգը չէր տեսել. «Ամենուրեք մարդիկ անհոգ ապրում էին, իշխում էր ուրախությունն ու համերաշխությունը: Ալբանացիները, հույները, հայերը, արաբները, թուրքերը՝ մի խոսքով օսմանյան ազգը, մեկ ընտանիք էր դարձել և անհոգ ապրում էր: Օսմանյան ազգն աստիճանաբար համտեսում էր ազատության բերկրանքը, որը չէր զգացել շատ դարերի ընթացքում: «Ինչ երջանիկ և գեղեցիկ օրեր

---

<sup>148</sup> Ալի Բենալ Բիքը եղել է «Իքդամ» թերթի խմբագիրը: Իր հայացքների համար արքայազն էր 19-րդ դարի վերջին և իթթիհադականների իշխանության գալուց հետո համաներման արդյունքում ազատ է արձակվել:

էին»<sup>149</sup>,- հիացմունքով ասում է թուրք գրողը: Ղրանից հետո հեղինակը պատմում է, որ այդ ժամանակվանից անցել է երեք տարի ու կես, և պատկերը կտրուկ փոխվել է. ամենուր տիրում են հիասթափություն, քաոս, անկարգություններ: «Թշնամու խանչալները աշխատում են կայսրության մարմինների վրա, և արդեն նրանց մի մասը մտել է Թարաբլուս և զավթել է Ռոդոսը և մյուս կղզիները: Ալբանական ազգը, որ դարեր շարունակ հանդես է եկել օսմանացիների դաշնակցի դերում, ապստամբություն է բարձրացրել: Արաբական երկրներում նույնպես տիրում են խառնաշփոթ, խժոժություններ, ապստամբություններ»<sup>150</sup>,- ցավով ու ափսոսանքով ավելացնում է գրողը: Օսմանյան ազգի մարդկային և նյութական կորուստները հասել էին ահռելի չափերի, սպանվածների ու կախաղան բարձրացվածների թիվը անհաշիվ է: Ըստ թուրք գրողի, այս ամենի մեղավորն օսմանյան կառավարության վարած քաղաքականությունն ու Եվրոպան են. «Օսմանյան պետությունն իր թշնամիներից պաշտպանվելու համար պետք է փոփոխություն մտցներ երկրի արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Սպանդի, ահ ու սարսափի քաղաքականությունը պետք է փոխվեր ազատության քաղաքականությամբ: Մարդիկ այս երեք ու կես տարիների ընթացքում ապրել են անարդարության պայմաններում: Ոչ արժանի մարդիկ հասել են բարձր պաշտոնների և բարձր աշխատավարձ են ստանում, մինչդեռ երկիրը ընդհանուր առմամբ հետընթաց է ապրել՝ ազգին հասցնելով ծայրահեղ աղքատության»<sup>151</sup>: Հոդվածի վերջում Ալի Քեմալը հաղորդում է, որ երբ օսմանացիները տեսան երկրում տիրող անարդարությունները, սկսեցին բողոքել, իսկ «Իթթիհադ վե Թերաքքը» միությունը սկսեց ճնշում գործադրել՝ ձերբակալելով նրանց ղեկավարներին. «Ու այստեղ բոլորը հասկա-

<sup>149</sup> «Ալ-Թակադդում», 1912, № 331:

<sup>150</sup> Նույն տեղում:

<sup>151</sup> Նույն տեղում:

զատությունը վերափոխվել է բռնապետության»,- իր խոսքն եզրափակելով՝ ասում է թուրք գրողը: Այսպիսով, թուրք գրող Ալի Բեմալի այս հոդվածն մեկ անգամ ևս մերկացնում է 1908 թ. հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում տիրող իթթիհադական բռնապետական համակարգը, ինչպես նաև քննադատության է ենթարկում օսմանյան կառավարության վարած քաղաքականությունը՝ այն համարելով Օսմանյան կայսրությունում առկա ապստամբությունների և քառսի գլխավոր պատճառներից մեկը:

Այսպիսով, «Ալ-Թակադդում» թերթն արաբախոս ընթերցողներին հաղորդում էր, որ երիտթուրքերի նախահեղափոխական խոստումները դատարկ ու սին էին: Շատ շուտով բացահայտվում է նրանց իրական դեմքը: Թերթի հոդվածներից կարող ենք եզրակացնել, որ ինչպես օտար, այնպես էլ թուրք մտավորականները, օսմանյան խորհրդարանի թուրք պատգամավորները ևս ընդունել են, որ երիտթուրքական վարչակարգը աբդուլհամիդյան բռնակալական վարչակարգի հետևորդն է ու ոչնչով չի տարբերվում նախորդ վարչակարգից:

«Ալ-Թակադդում» թերթն անդրադառնում է նաև Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների լուսաբանմանը: Չնայած բարենպաստ պայմաններին, իթթիհադականները կայացած երկու խորհրդարանական ընտրություններում իրենց կողմնակիցների մեծամասնությունն ապահովելու համար դիմում էին նաև տարատեսակ ընտրախախտումների, ինչպես նաև վարչական ճնշումների, որոնց նույնպես անդրադարձել է «Ալ-Թակադդում» թերթը: Մասնավորապես թերթի 10-րդ համարում հոդվածագիրը հաղորդում է, որ երիտթուրքերին առավելապես անհանգստացնում էր ընտրությունների ընթացքն արաբական վիլայեթներում. «Նրանց առաջնահերթ նպատակը խորհրդարան թուրք պատգամավորների մեծ թվի ներ-

գրավմամբ այնտեղ թուրքական տարրի գերակայության ապահովումն էր, ինչը մեծապես կնպաստեր երկրի թուրքացման ծրագրի իրականացմանը»<sup>152</sup>: Մինչդեռ կայսրությունում արաբ ազգաբնակչությունն ամենից մեծաքանակն էր, և օրինական ընտրությունների դեպքում արաբները կգբաղեցնեին խորհրդարանի պատգամավորական տեղերի զգալի մասը, ինչը, փաստորեն, մեծապես կխոչընդոտեր երիտթուրքերի պանթուրքական նպատակների իրականացմանը: Փորձելով սահմանափակել արաբների մասնակցությունը ընտրություններին՝ երիտթուրքական իշխանությունները դիմեցին ամենատարբեր միջոցների. «Վերջիններս նախ պահպանեցին սահմանադրության մեջ ամրագրված այն դրույթը, որի համաձայն, Օսմանյան կայսրության խորհրդարանի պատգամավոր կարող էին ընտրվել միայն նրանք, ովքեր տիրապետում էին թուրքերեն լեզվին<sup>153</sup>, ինչը մեծ չափով կղժվարեցներ արաբական, ինչպես նաև մյուս վիլայեթներից ընտրվողների հնարավորությունները»<sup>154</sup>: Պետք է նշել, որ բոլոր ընտրացուցակները կազմված էին թուրքերեն լեզվով: Կայսրության որոշ շրջաններում թուրքերենին տիրապետողների շրջանակը սահմանափակվում էր պետական հաստատություններում ծառայող պաշտոնյաներով և հին վարչակարգի այն ներկայացուցիչներով, որոնք հեռու էին արաբական ազգայնական շարժումից և բնականաբար, առավել ընդունելի էին երիտթուրքերի կողմից<sup>155</sup>: «Այնուհետև իշխանություններն ուղղակի աշխատանքից ազատեցին ներքին և արտաքին գործերի նախարարությունների արաբ պաշտոնյաներին»<sup>156</sup>:

<sup>152</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 10:

<sup>153</sup> Алиев Г. З., նշվ. աշխ., էջ 128:

<sup>154</sup> «Ալ-Թակադդում», № 10:

<sup>155</sup> Котлов Л., նշվ. աշխ., էջ 174:

<sup>156</sup> «Ալ-Թակադդում», № 10:

Օսմանյան հպատակների իրավունքների այսպիսի կոպիտ խախտումների դեմ բազմաթիվ դժգոհությունները, ինչպես և պետք էր սպասել, իշխանությունների կողմից մնում էին անպատասխան:

«Ալ-Թակադդում» թերթն իր համարներում մեծ տեղ է հատկացրել Կ.Պոլսի հայոց պատրիարքի՝ խորհրդարանական ընտրությունների անցկացման վերաբերյալ բողոքողերծների լուսաբանմանը: Մասնավորապես, «Հայոց պատրիարքի ուղերձն արդարադատության նախարարին» վերնագրով հոդվածում ներկայացված է այդ ուղերձը արդարադատության նախարարին՝ խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ: Օսմանյան պետության հիմանական օրենքի համաձայն, օսմանյան պետության ազգերը հավասար իրավունքներ ունեին, և յուրաքանչյուրը իրավունք ուներ քաղաքացիական պաշտոն ստանձնել: Սակայն այս առնչությամբ կային որոշ արգելքներ: Սահմանադրության համաձայն, օսմանյան պետության յուրաքանչյուր քաղաքացի կարծիք հայտնելու և ընտրելու իրավունք ուներ, ինչից, սակայն, ազգային փոքրամասնությունները՝ այդ թվում նաև հայ ազգը, չէին կարողանում օգտվել: «Ինչպես վկայում են բազմաթիվ վստահելի աղբյուրներ և փաստաթղթեր, հայերի թիվը Օսմանյան կայսրությունում անցնում էր երկու միլիոնը, և սրանից պետք է ենթադրել, որ հայերը պետք է ունենային քսանից ավելի պատգամավոր (յուրաքանչյուր 50.000 բնակչի դիմաց մեկ պատգամավոր): Սակայն երիտթուրքերի կառավարման տարիներին տեղի ունեցած ընտրություններում մենք՝ հայերս, ունեցել ենք այդ թվի կիսով չափ պատգամավորներ»<sup>157</sup>, - ցավով նշում է հայ պատրիարքը: Իրականում, ըստ «Թակադդում» թերթի, այդ ընտրությունների մոդելը դժվարացնում էր ազգությամբ հայ պատգա-

---

<sup>157</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 468:

մավորների ընտրվելը, որը պայմանավորված էր մի քանի գործոններով՝

- Ատելության, թշնամական վերաբերմունքով, որը դրսևորվել է հայերի նկատմամբ նախորդ ռեժիմի կառավարման տարիներին:
- Վիլայեթների կազմավորման քաղաքական պայմաններով:
- Ընտրական շրջանների ձևավորումով<sup>158</sup>:

Այս բոլորը թույլ չտվեցին հայերին մեծամասնություն կազմել հայաբնակ գյուղերում և բնակավայրերում՝ նրանց տարանջատված բնակվելու պատճառով: Հայոց պատրիարքը կոչ էր անում վերացնել խոչընդոտող գործոնները, և հայ պատգամավորներին թույլատրել ընտրվել իրենց ժողովրդի կողմից: «Այս ընտրական համակարգը գործում է նաև ուրիշ շատ բազմազգ պետություններում, և այն համահունչ է սահմանադրությանը: Ես հավատում եմ, որ դուք կընդունեք այս օրենքը հայ պատգամավորների հետ կապված՝ հաշվի առնելով հայերի թվաքանակը կայսրությունում, ու համապատասխան հրամաններ կարծակեք»<sup>159</sup>:

Ի պատասխան հայոց պատրիարքի՝ արդարադատության նախարարին հղած ուղերձի (հայ պատգամավորների ընտրվելու կարգի մեջ փոփոխությունների մասին)՝ Օսմանյան կայսրության արդարադատության նախարարը հայտարարում է, թե Ազգային ժողովը այս կամ այն ազգը չի ներկայացնում, այլ ներկայացնում է ամբողջ օսմանյան ազգը, և ընտրված յուրաքանչյուր պատգամավոր «ամբողջ Ազգին փոխանորդը կը նկատուի»<sup>160</sup>: Բացի այդ՝ արդարադատության նախարարը նշեց, որ պատրիարքի գործը չէ նման պահանջ ներկայացնելը (իմա քաղաքական և քա-

<sup>158</sup> Նույն տեղում:

<sup>159</sup> Նույն տեղում:

<sup>160</sup> ԴՂ ԳԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ, Սայթաքումը, Օսմանյան երեսփոխանական ընտրութեանց առթիվ հայ քաղ. կուսակցութեանց դիրքը, Կ. Պոլիս, 1914, էջ 6:

ղաքացիական - Մ.Ե.), և հայ պատգամավորները, որոնց ընտրում են հայերը, չեն կարող ներկայացնել բոլոր օսմանացիներին, և սա սահմանադրության խախտում է, ու պահանջեց նման կարգի հարցերով այլևս իրեն չդիմել<sup>161</sup>: Ինչպես հայտնի է, պատրիարքարանի պարտականություններից է կառավարությանը ներկայացնել ազգի պահանջները, ցանկությունները, այլ կերպ պատրիարքը միջնորդի դեր էր կատարում կառավարության և հայ ազգի միջև: Եվ եթե հայերի կողմից ընտրված պատգամավորը կարող էր ներկայացնել միայն հայերին և ոչ թե բոլոր օսմանացիներին, ապա Կ. Պոլսի բնակիչների կողմից ընտրված պատգամավորը ներկայացնում էր միայն այդ քաղաքի բնակիչներին, կամ արաբական երկրներում ընտրված պատգամավորները՝ միայն արաբներին: Ի դեպ, օսմանյան կառավարողները, սկսած 1860-ական թթ. ազգային վարչությունները կանոնադրելու ժամանակներից, և երիտթուրքերը ներառյալ, կտրուկ ժխտել են հպատակ ազգերի բողոքելու սահմանադրական իրավունքը, որ նրանք արտահայտում էին իրենց կրոնապետերի միջոցով:

Արդարադատության նախարարի պատասխանից հետո 1913 թ. դեկտեմբերին Կ. Պոլսում գումարված միջկուսակցային Համերաշխական ժողովը կուսակցական մարմիններին հորդորեց ձեռնապահ մնալ<sup>162</sup>: Այս որոշումից հետո Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի քաղաքական շրջանակներում որոշակի քառս տիրեց: Հենց այս շրջանում էր, որ թերթերը ավետում էին, որ հայկական բարենորոգումների հարցը վերջնական լուծում է ստացել: Այս լուրը մեծ ոգևորություն առաջացրեց արևմտահայերի շրջանում: Միջկուսակցական Համերաշխական ժողովը, նկատի ունենալով այս նոր լուրը, համաձայնեց վերսկսել բանակցությունները կառավարության հետ հետևյալ պայմանով՝ հայերը

<sup>161</sup> ՀՀ ԳԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ, Սայթաքունը, Օսմանյան երեսփոխանական ընտրութեանց առթիվ հայ քաղ. կուսակցութեանց դիրքը, Կ. Պոլիս, 1914, էջ 6:

<sup>162</sup> Նույն տեղում, էջ 11:

օսմանյան խորհրդարանում պետք է քսան պատգամավոր ունենան «Հայերու ցանկով և Հայոց ուզած վայրերէն»<sup>163</sup>: Այդ նպատակով հայկական պատվիրակությունը մեկնում է ներքին գործերի նախարար Թալեաթի և Միդհատ Շյուքրիի հետ բանակցելու: Հայերի ներկայացրած պահանջներին ի պատասխան, Միդհատ Շյուքրին հայտարարում է, որ հազիվ 11 հայ պատգամավորի ընտրություն կլինի ապահովել, այդ թվում նրանց թվում հաշվելով արդեն ընտրված երեք իթթիհադական հայերի<sup>164</sup>: Միդհատ Շյուքրիի այս պատասխանից հետո միջկուսակցային Համերաշխական ժողովը 1914 թ. փետրվարի 9-ին որոշեց, որ հայ կուսակցությունները ընտրության մեջ ձեռնպահ կմնան, և հորդորեց պատրիարքին նույն կերպ վարվել: Հաջորդ օրը տեղի ունեցած ընտրական հանձնաժողովի նիստին ներկայացավ պատգամավոր Վարդգեսը և հայտնեց, որ Թալեաթը հայտարարել է, թե պիտի «16 հայ երեսփոխաններու ընտրութիւնը ապահովէ»<sup>165</sup>: Այս իրադարձությունից հետո տեղի ունեցան նոր միջկուսակցական բանակցություններ, որոնց արդյունքում կայացած միջկուսակցային Համերաշխական ժողովը որոշեց, որ հայ կուսակցությունները թեկնածուներ չեն առաջադրի հայկական նվազագույն առաջարկները չբավարարվելու դեպքում: Ինչպես նաև անհատ կուսակցականներ չէին կարող առաջադրվել, իսկ առաջադրվելու դեպքում պիտի հեռացվեին կուսակցությունից: Բացի այդ՝ հայ կուսակցությունները ներքին կռիվներից և անհամաձայնություններից խուսափելու համար, իրենց համաձայնությունը տվեցին, որ պատրիարքարանը մասնակցի ընտրություններին<sup>166</sup>: Սակայն կարճ ժամանակ անց Վանի և Կարինի նահանգների գավառական առաջնորդարանները հաստատում են իրենց կու-

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>164</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>165</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 23:

սակցական թեկնածուներին պաշտպանելու մոտեցումը: Այս լուրը, ինչպես նաև Կ. Պոլսի պատրիարքի կողմից առանց ազգային մարմիններին տեղյակ պահելու իթթիհադականներին հայ թեկնածուներ Ջոհրային և Հալաճեանին ներկայացնելը նոր միջկուսակցային բուռն քննարկումների առիթ հանդիսացավ: Կուսակցությունները մեկը մյուսին սկսեցին մեղադրել համատեղ ընդունած որոշումից հրաժարվելու մասին: Դաշնակցականները հայտարարում էին, որ կուսակցության ապակենտրոնացման սկզբունքից ելնելով, չեն կարող Վանի և Կարինի պահանջներն ու որոշումները փոխել<sup>167</sup>: Միջկուսակցական Համերաշխական ժողովից հետո, Սոցիալ Դեմոկրատական և Ռամկավար ներկայացուցիչները հայտարարեցին, որ ներքին համերաշխության պահպանման համար ժողովը հանգեց կուսակցական թեկնածու տալու որոշմանը և ընդունեցին աթոռների հետևյալ բաժանումը՝ Դաշնակցությունը՝ երեք, Ս. Դ. Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները երկուական աթոռ<sup>168</sup>:

«Ալ-Թակադդում»-ի մեկ այլ հոդվածում ներկայացվում է հայոց պատրիարքի՝ մեծ վեզիրին ուղղած բողոք-ուղերժը: Այստեղ պատրիարքը տեղեկացնում էր, որ արդարադատության նախարարը պատասխանել էր իր խնդրանքին այնպիսի գրությամբ, որը չէր օգտագործվում պաշտոնական գրագրությունում. «Հայերի պահանջը բավարարելու համար պետք չէ փոփոխություն մտցնել սահամանադրության մեջ, այլ անհրաժեշտ է ուղղակի

---

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 25-27:

<sup>168</sup> Վանի, Կարինի, Մուշի տարածքներում պատրիարքարանի՝ իթթիհադականներին հայ կուսակցությունների համաձայնությամբ ներկայացրած հայ պատգամավորների թեկնածուներն էին Կարդգես Սերանգուլյանը և Համբարձում Պոյաճյանը՝ Կարինից, Գարեգին Փաստրմաճյանը և Վահան Մալեգյանը (Ռամկավար)՝ Վանից, Գեղամ Տեր -Կարապետյանը՝ Մուշից: Տես՝ ՀՀ ԳԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ, Սայթաբումը, Օսմանյան երեսփոխանական ընտրութեանց առթիվ հայ քաղ. կուսակցութեանց դիրքը, Կ. Պոլիս, 1914, էջ 37-40:

վերանայել ընտրական համակարգի հիմնական դրույթները, որոնք կապահովեն փոքրամասնությունների իրավունքները, և սա կառավարության համար դյուրին գործ է: Եվ ես ակնկալում եմ, որ մեծ վեզիրը անպատասխան չի թողնի մեր խնդրանքը»<sup>169</sup>: Սակայն այս բողոք-ուղերձը նույնպես որևէ բան չփոխեց. ընտրական համակարգի որևէ հիմնական դրույթ չվերանայվեց, և փոքրամասնությունների իրավունքները շարունակվեցին ոտնահարված մնալ:

Խորհրդարանական ընտրություններն առաջին միջոցառումն էր, որի ընթացքում ի հայտ եկան երիտթուրքական կառավարության հռչակած սկզբունքների և իրական քաղաքականության հակասությունները, ինչը որոշակիորեն սթափեցրեց «հեղափոխական» ոգևորյալները՝ տոգորված Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին՝ այդ թվում հայերին:

Այսպիսով, «Ալ-Թակադդում» թերթը, ի թիվս արաբ և օտար այլ աղբյուրների, մերկացնում է 1908 թ. Օսմանյան կայսրությունում անցկացված խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերի իրականացրած տարատեսակ ընտրախախտումները, ինչպես նաև անդրադառնում է հայ պատրիարքի՝ խորհրդարանական ընտրությունների անցկացման վերաբերյալ բողոք-ուղերձների լուսաբանմանը:

## 2.2. Հայկական բարենորոգումների լուսաբանումը (1912-1914 թթ.)

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազում թուրքիայի կրած ծանր պարտությունը մեծ հույսեր ներշնչեց արևմտահայությանն օսմանյան լուծը թոթափելու տեսանկյունից: Պատերազ-

<sup>169</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 470:

մի ավարտն արձանագրող Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որը մտցվել էր Ռուսաստանի պահանջով, վերաբերում էր արևմտահայությանը: Սակայն Բալկաններում և Փոքր Ասիայում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը մեծ դժգոհություն առաջ բերեց մյուս տերությունների կառավարող շրջաններում, որոնք պահանջեցին վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: 1878 թ. ամռանը Բեռլինում գումարվում է տերությունների և Թուրքիայի ներկայացուցիչների վեհաժողով, որի արդյունքում հուլիսի 13-ին ստորագրվում է նոր պայմանագիր, որի 61-րդ հոդվածում նշված էր, որ Բ. Դուռը պետք է հայաբնակ մարզերում իրականացնի բարեփոխումներ: Սակայն այդ բարեփոխումները չիրականացվեցին և մնացին թղթի վրա: Դրանից հետո Աբդուլ Համիդի կառավարման շրջանում հայերի նկատմամբ իրականացվում էր հայահալած քաղաքականություն, և միայն 1894 թ. Սասունում կազմակերպված կոտորածից հետո համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ Կ. Պոլսի ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպանները 1895 թ. մայիսի 11-ին թուրքական կառավարությանը ներկայացրեցին բարենորոգումների ծրագիր<sup>170</sup>: Սակայն Աբդուլ Համիդը, օգտվելով տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններից, չիրականացրեց այդ բարենորոգումները:

1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերի վարած հայահալած քաղաքականությունը նախադրյալներ ստեղծեց Հայկական հարցի վերաբացման համար, որին նպաստեց նաև 1912 թ.

---

<sup>170</sup> Ըստ այս ծրագրի, հայկական վեց վիլայեթներում (Երզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) պետք է կատարվեին վարչական և դատական բարեփոխություններ՝ ապահովելու համար արևմտահայերի կյանքի ու գույքի անվտանգությունն ու նրանց պաշտպանելու քրդական կամայականություններից: Տես՝ ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, թիվ 4, ՀՀ ՂԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ, Ատոմ, Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, էջ 96-106, Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Եր., 2010, էջ 15:

Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ արևմտահայությունն իր կացության բարելավման խնդրանքներով նորից որոշում է դիմել մեծ տերությունների, առաջին հերթին Ռուսաստանի աջակցությանը<sup>171</sup>, որը նույնպես հետաքրքրված էր նրանց կացության բարելավմամբ: Այս հարցում Ռուսաստանն ուներ իր պետական շահերը. Արևմտյան Հայաստանում ռուսական դիրքերի ամրապնդումից հետո վերջինս ռազմական հենակետ էր դիտվում դեպի հարավ (Պարսից ծոց) հետագա առաջխաղացման համար:

«Ալ-Թակադդում»-ը անդրադարձել է նաև այս խնդրի լուսաբանմանը: Հայկական բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ առաջին՝ «Արևելյան Անատոլիայի վիլայեթները» վերնագրով հոդվածը լույս է տեսնում 1912 թ. 262-րդ համարում, որում խոսվում է Արևմտյան Հայաստանի գավառներում տիրող ազգային ու սոցիալ-քաղաքական ծանր իրավիճակի մասին: Այնուհետև հոդվածագիրը տեղեկացնում է, որ հայազգի երկու պատգամավորները նամակ են ուղարկել կառավարությանը, որը պարունակում էր բարենորոգումների իրականացման համար անհրաժեշտ տասը կետ, որոնք պետք է իրականացվեին էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքրի, Սեբաստիայի և Խարբերդի վիլայեթներում: 1910 թ. օսմանյան կայսրության հայկական շրջաններում կյանքն օրըստօրե անհանդուրժելի էր դառնում, ուստի օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները 1911 թ. վերջին վարչապետ Սայիդ փաշային համեստ պարունակությամբ ծանուցագիր ներկայացրեցին<sup>172</sup>, որի հիմնան վրա կառավարության կողմից ստեղծվեց հանձնաժողով՝ կազմված ռազմական (պաշտպանության), ներքին գործերի, արդարադատու-

<sup>171</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Եր., 1996, էջ 364:

<sup>172</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, թ. 2:

թյան, գյուղատնտեսության նախարարներից՝ քննարկելու հայ պատգամավորների պահանջը բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ: «Հանձնաժողովն երկարատև ուսումնասիրությունից հետո հավանություն տվեց բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ներկայացված ութ կետերին, իսկ մնացած երկու կետի վերաբերյալ որոշվեց քննարկումը թողնել հարմար ժամանակի»<sup>173</sup>, - հաղորդում է հոդվածագիրը: Այդ ութ կետերն են՝

1. Իրականացնել բավականաչափ զինվորական խմբերի կազմավորումը, որոնք պետք է ապահովեն վերոնշյալ վիլայեթների անվտանգությունն ու խաղաղությունը:
2. Ժանդարմերիայի անդամներ նշանակել կիրթ մարդկանց:
3. Գյուղի պաշտպաններին թույլ տալ զենք կրել:
4. Արագացնել կառավարության՝ իրենց պաշտոնական դիրքը չարաշահած անդամների դատական գործը:
5. Միջոցառումներ իրականացնել հարկահավաքության գործը հեշտացնելու ուղղությամբ:
6. Լուծում տալ տարածքային խնդիրներին:
7. Տրամադրել այն գումարները, որոնք կառավարությունը որոշել էր տալ Ադանայի կոտորածից տուժածներին:
8. Այդ վիլայեթների բնակիչների զինվորական ծառայությունը կազմակերպել տեղերում<sup>174</sup>:

Օսմանյան կառավարության կողմից կազմված բարենորոգումների այս ծրագրի առնչությամբ Կ. Պոլսի Ազգային ժողովի 1912 թ. մարտի 2-ի նիստում ատենապետ Մանուկ Ազատյանը տեղեկացրեց, որ 1911 թ. նոյեմբերի 28-ին օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներն Արևմտյան Հայաստանի բանրենորոգումների մասին հիշատակագիր են հղել վարչապետ Սայիդ փաշային, որից հետո վերջինիս հրամանով 1911 թ. դեկտեմբերի

<sup>173</sup> «Ալ-Թակադդում», 1912, № 262:

<sup>174</sup> Նույն տեղում:

10-ին կազմված հանձնաժողովը (պաշտպանության նախարար Մահմուդ Շեվքեթ փաշա, ներքին գործերի նախարար Ջեմալ բեյ, Արդարադատության նախարար Էվգաֆի բեյ) հայկական բարենորոգումների վերաբերյալ ինը հոդվածից բաղկացած ծրագիր պատրաստեց: Սակայն Հաջի Ադիլ բեյի՝ ներքին գործերի նախարարությունում ընդգրկվելուց հետո հայկական բարենորոգումների անցկացումը հետաձգվեց և նախապատվությունը տրվեց Մակեդոնիայում և Ալբանիայում բարենորոգումներ անցկացնելուն, ուր անձամբ մեկնեց Հաջի Ադիլ բեյը: Իսկ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների անցկացումը որոշվեց իրականացել 1912 թ. գարնանը<sup>175</sup>:

1912-1913 թթ. Օսմանյան Թուրքիայում բարենորոգումների իրականացումն օրակարգի հարց էր դարձել եվրոպական մասում տիրույթները կորցնելու պատճառով: Այս խնդրի լուսաբանման մասին է «Ալ-Թակադդում»-ի՝ «Հետաձգման քաղաքականությունը» վերնագրով հոդվածը, որում խոսվում է Օսմանյան կայսրության մտավորականների ու գրողների միջև՝ հիմնական օրենքի հաստատման շուրջ առկա տարաձայնությունների մասին: Նշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում, համաձայն հոդվածագրի, բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ երկու տեսակետ կար: Առաջին տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ Օսմանյան կայսրությունը վերջին տարիներին ոչ մի առաջընթաց չի ապրել, ուստի անհրաժեշտ էր անհապաղ բարենորոգումներ անցկացնել կայսրության վիլայեթներում: Մյուս տեսակետի կողմնակիցները հանդես էին գալիս գործող վիճակի պահպանման օգտին: Նրանք գտնում էին, որ սկզբից անհրաժեշտ է վերացնել կայսրությունում առկա ձգնաժամերը, հետո նոր մտածել բարենորոգումներ անցկացնելու մասին: Դժբախտաբար Օսմանյան կայսրությունում գերակայում էին

<sup>175</sup> ՀՀ ԳԱԹ, Առենագրություն Ազգային ժողովոյ, 9 մարտ 1912, Կ. Պոլիս, 1912:

երկրորդ տեսակետի կողմնակիցները, այն է՝ պահպանել առկա իրավիճակը՝ թողնելով բարենորոգումների անցկացումը մի պատեհ օրվա: Եվրոպական երկրներն իրենց հերթին պահանջում էին կայսրությունից բարենորոգումներ անցկացնել, քանի որ բարենորոգումների իրականացումը կվերացներ ճգնաժամերը և բուլոր խնդիրները: Ցավոք սրտի, վիճակը երկրում գնալով բարդանում էր, պատերազմները հաջորդում էին պատերազմներին, հեղափոխությունները՝ հեղափոխություններին, քառսային իրավիճակ էր տիրում երկրի ներսում և դրանից դուրս. «Մի խոսքով, կայսրությունը գտնվում էր ճգնաժամային վիճակում, այնուհանդերձ երկրորդ տեսակետի կողմնակիցները շարունակում էին հավատալ սպասելու անհրաժեշտությանը: Ոչ մեկը դասեր չէր քաղել անցյալից, օրինակ՝ ալբանական հարցից: Եթե կառավարությունը ժամանակին բարենորոգումներ անցկացներ, երկիրը այդքան վնաս չէր կրի: Ուստի անհրաժեշտ է բարենորոգումների իրականացումը, քանի որ միայն այս ճանապարհով կարելի է դուրս գալ այս վիճակից»<sup>176</sup>, - եզրակացնում է թերթը:

Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում Թուրքիայի ու Եվրոպայի խոշոր տերությունների դիրքորոշման լուսաբանմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի՝ 1913 թ. հունվարին հրատարակված հոդվածը: Այստեղ թերթը հաղորդում է, որ Թուրքիան Եվրոպայում իր տիրույթները կորցնելուց հետո պետք է ամեն ինչ աներ Ասիայում գոնե անկորուստ մնալու համար, և դա պետք է կատարվեր միայն երկրի ներսում բարենորոգումներ անցկացնելու ճանապարհով: Բացի այդ՝ Թուրքիան պետք է անհապաղ կարգավորեր արաբական երկրների խնդիրները՝ առաջին հերթին Լիբանանի հարցը, որը կարծես լուծման փուլում էր: Ֆրանսիայի դիրքորոշման կապակցությամբ հոդվածում նշվում է, որ վերջինս հանդես էր գալիս այս երկրի

<sup>176</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 361:

(Լիբանան - Մ.Ե.), ինչպես նաև Հայաստանի պաշտպանի դիրքում՝ պահանջելով բարենորոգումներ անցկացնել վերոնշյալ երկրներում: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա հեղինակը դժվարանում էր գնահատական տալ նրա քաղաքականությանը Հայաստանում՝ արդյոք այդ պետությունը հայերի կողմից է, թե ոչ: «Ինչևէ, ամեն դեպքում օսմանյան կառավարությունը պետք է արագացնի Հայաստանում բարենորոգումների անցկացումը, քանի որ հակառակ պարագայում վախ կա, որ Ռուսաստանը կարող է հարձակվել Անատոլիայի վրա: Իսկ ինչ վերաբերում է Ավստրիային, ապա վերջինս կանգնած է Թուրքիայի կողքին և կողմ է, որ բարենորոգումներ անցկացվեն կայսրության ողջ տարածքում»<sup>177</sup>, - եզրակացնում է թերթը:

Իսկ 1913 թ. հունվարին լույս տեսած մեկ այլ՝ «Բուլղարիան պաշտպանում է հայերին» վերնագրով հոդվածում ներկայացված է Բուլղարիայի «Ազատություն» կուսակցության ղեկավարներից մեկի՝ Բուլղարիայի ազգային ժողովի նախագահ Դանիֆի հոդվածները Հայկական հարցի մասին: Դրանցում Բուլղարիայի ազգային ժողովի նախագահը տեղեկացնում է, որ քանի որ իրենք խեղճերի, թույլերի պաշտպաններն են, նրանց փրկիչը, ապա իրենց պարտականությունն է օգնություն ցույց տալ իրենց եղբայր հայերին, քանի որ վերջիններս ամենաշատն են տառապանք ու վիշտ կրել Օսմանյան կայսրության լծի տակ: «Մենք պետք է պաշտպանենք հայերին և պահանջենք մեծ տերություններից Բեռլինի վեհաժողովում որոշված բարենորոգումներն իրականացնել: Հայաստանը պետք է առնվազն անկախություն ստանա Լեռնալիբանանի նման, քանի որ Ռուսաստանը համաձայն է մեզ հետ: Եթե հայ ազգը ծանր ճակատագիր չունենար, ապա նրանք ավելի կբազմանային Աստվածաշնչում հռչակված Արարատ լեռան շուրջ, և ամբողջ մարդկությունը մեծ օգուտ

---

<sup>177</sup> Նույն տեղում:

կստանար մտավոր ուժի տեսանկյունից»<sup>178</sup>, - գրում է Ղանիֆը: Այնուհետև հողվածում նշվում է, որ հայերը պահանջում են Բեռլինի վեհաժողովի 61-րդ հողվածի իրականացումը, սակայն ոչինչ չեն ստացել: Նրանց օգնության կանչերը մնում են անպատասխան: «Ուստի Բուլղարիան, Բալկանյան պետությունները իրենց ներքին խնդիրները լուծելուց հետո, բոլոր ջանքերը կգործադրեն 61-րդ հողվածի իրականացման համար: Ինչպես կարելի է թույլ տալ, որ փառավոր պատմություն ունեցող հայ ժողովուրդը չունենա ազատ ու անկախ ապրելու իրավունք»<sup>179</sup>, - ավելացնում է Բուլղարիայի ազգային ժողովի նախագահը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ նշված ժամանակաշրջանում բոլոր մեծ տերությունները, ինչպես նաև Թուրքիան գիտակցում էին անհապաղ բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցում առավել շահագրգռված էր Ռուսաստանը, որն ուներ իր շահերը: Սակայն Ռուսաստանի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականությունը հանդիպում էր մյուս տերությունների առարկություններին, որոնք այդ շրջանում Օսմանյան կայսրությունում ևս ունեին իրենց շահերը: Հատկապես սուր էին ռուս-գերմանական հակասությունները: 19-րդ դարի վերջերից Գերմանիայում ձևավորվել էր դեպի Արևելք «գրոհելու» արտաքին-քաղաքական պաշտոնական կուրսը, և այս պլաններում առանձնահատուկ նշանակություն էր տրվում Թուրքիային, որն աստիճանաբար ենթարկվում էր Գերմանիայի ռազմական ու տնտեսական ազդեցությանը: Օսմանյան կայսրությունում ունենալով հսկայական շահեր՝ գերմանական իշխանությունները ձգտում էին պահպանել նրա տարածքային ամբողջականությունը:

<sup>178</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 360:

<sup>179</sup> Նույն տեղում:

նը<sup>180</sup>: Օսմանյան կայսրության նկատմամբ Ռուսաստանի ու Գերմանիայի ձեռնարկները մեծ անհանգստություն էին առաջացնում անգլիական ղեկավար շրջաններում, որը պայմանավորված էր վերջինիս գաղութային տիրապետության անվտանգության ապահովմամբ: Այդ նպատակով անգլիական իշխանությունները հանդես էին գալիս ավանդական ստատուս-քվոյի քաղաքականությամբ՝ պաշտպանելով Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունը: Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման օգտին էր հանդես գալիս նաև Ֆրանսիան: Ֆրանսիական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ Օսմանյան կայսրության փլուզման դեպքում կամրապնդվեին Ռուսաստանի ու Գերմանիայի դիրքերը՝ մեծ վնաս հասցնելով Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի ունեցած շահերին: Մինևույն ժամանակ Ֆրանսիան թուրքիայում ուներ մեծ տնտեսական շահեր ու հսկայական գումարներ էր ներդրել այնտեղ, որոնք չէր ցանկանում կորցնել: Իսկ ինչ վերաբերում է Ավստրո-Հունգարիային ու Իտալիային, որոնք գրեթե կենսական շահեր չունեին Արևմտյան Հայաստանում, ապա նրանք մտահոգված էին Հայկական հարցով: Այդ տերությունների ղեկավար շրջաններն իրենց դաշնակից Գերմանիայի նման հանդես էին գալիս Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիության պահպանման օգտին:

Հայկական հարցը միջազգային քննարկման առարկա դարձնելու առաքելությունն իր վրա է վերցնում Ամենայն Հայոց Գևորգ Ե. Կաթողիկոսը: Տերություններին ուղղվելիք դիմումները մեկ ուղղությամբ կենտրոնացնելու համար նա որոշում է իր անունից գործող պատվիրակ ունենալ Եվրոպայում: Այդ պատասխանատու պաշտոնը տրվում է եգիպտահայ ականավոր հասա-

<sup>180</sup> Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր., 1965, էջ 126-127:

րակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային, որի նշանակումը բացառիկ դրական արձագանք գտավ հայ ազգային շրջաններում և մամուլում<sup>181</sup>: 1913 թ. հունվարի 4-ին Պողոս Նուբարի գլխավորությամբ ստեղծվում է Ազգային պատվիրակություն, որն առանց ժամանակ կորցնելու մեկնում է Եվրոպա: Հայկական պահանջները ներկայացնելու համար անհրաժեշտ էր ունենալ բարենորոգումների ծրագիր, և Պ. Նուբարն եկավ այն համոզման, որ տվյալ պայմաններում տերություններին պետք է ներկայացնել բարենորոգումների այնպիսի պահանջներ, որոնք չեն հակասի նրանց շահերին: Պողոս Նուբարը կազմում է նախագիծ, ըստ որի, Թուրքիայի հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Սեբաստիա, Խարբերդ, Դիրարբեքիր) կազմըվելիք մեկ նահանգում պետք է իրականացվեին բարեփոխումներ ֆինանսական, տնտեսական, արդարադատության բնագավառներում<sup>182</sup>: Հետագայում նրանում որոշակի փոփոխություններ են կատարվում կապված Կ. Պոլսի պատրիարքության առարկությունների հետ:

Ռուսական կողմը նպատակահարմար չգտավ այն ներկայացնել Լոնդոնի խաղաղության կոնֆերանսում, և միայն որոշ ժամանակ հետո հաշվի առնելով Բալկանյան պատերազմի ավարտն ու հաշտության պայմանագրի կնքումը՝ Ռուսաստանը ձեռնամուխ եղավ զբաղվել հայկական բարենորոգումների խնդրով:

«Ալ-Թակադդում» թերթն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հողվածներում առանձնահատուկ տեղ է հատկացնում այս առնչությամբ տարբեր ծրագրերի լուսաբանմանը: Մասնավորապես, 1914 թ. լույս տեսած «Անատոլիայի բարենորոգումները» վերնագրով հողվածում տե-

<sup>181</sup> «Հուսաբեր», Կահիրե, 1913, № 121:

<sup>182</sup> Բոյաջյան Գ., նշվ. աշխ., էջ 51-52:

ղեկացվում է, որ Պողոս Նուբար փաշան Բալկաններում պատերազմ սկսվելուց հետո մեկնում է Եվրոպա՝ ջանքեր գործադրելու հայկական բարենորոգումների անցկացման շուրջ՝ ըստ իր և հայ կաթողիկոսի միջև առկա համաձայնության: Այդ նույն ժամանակ Բ. Ղուբը, որը նույնպես զբաղված էր այդ խնդրով, առաջարկեց բարոնորոգումների նախագիծ: Ըստ այս նախագծի Կանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբերդի վիլայեթներից կազմվելու էր մեկ ընդհանուր նահանգ օսմանցի նահանգապետի ղեկավարությամբ<sup>183</sup>: Նրան օգնելու էր եվրոպացի խորհրդականը: Դրանից բացի, կազմվելու էր նահանգային խորհուրդ նահանգապետի գլխավորությամբ՝ բաղկացած վեց անդամներից՝ երեքը մուսուլման, երկուսը՝ հայ և մեկ քուրդ: «Սակայն այս ծրագիրը ուշադրության չարժանացավ, և շուտով կազմվեց նոր հանձնաժողովներքին գործերի նախարար Հաջի Ադիլ բեյի ղեկավարությամբ՝ կազմելու բարենորոգումների մեկ այլ նախագիծ: Այս հանձնաժողովը գտնում էր, որ բարենորոգումները կայսրության ողջ տարածքում պետք է իրականացվեն նույն մոդելով»<sup>184</sup>, - հաղորդում է թերթը: Այս պատճառով մտցվեց վիլայեթների կանոնադրություն, և վիլայեթների խորհուրդներին տրամադրվեց լիակատար իշխանություն՝ հիմնական օրենքի շրջանակներում: Միաժամանակ Օսմանյան կայսրության կազմում ընդգրկված երկրները բաժանվեցին տարբեր հետազոտական շրջանների, և տարածվեց նահանգապետերի պաշտոնների և իրավունքի մասին կանոնադրությունը: Այս հանձնաժողովը գտնում էր, որ նահանգապետերի պաշտոնը հնարավոր էր, որ զբաղեցնեին օտարերկրացիները:

Այս նույն ժամանակահատվածում Կ.Պոլսում մեծ տերությունների դեսպանատների թարգմանիչներից բաղկացած հանձ-

<sup>183</sup> «Ալ-Թակադդում», 1914, № 481

<sup>184</sup> Նույն տեղում:

նաժողով կազմվեց՝ ուսումնասիրություններ կատարելու այս ուղղությամբ: Եվ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանատան թարգման Ա. Մանդելշտամը ներկայացրեց բարենորոգումների մի նախագիծ, ըստ որի, բարենորոգումները պետք է անցկացվեին վերոնշյալ վիլայեթներից բացի նաև Երզրումի և Սվասի (Սեբաստիա) վիլայեթներում, որոնցում վարչական իշխանությունը պետք է փոխանցվեր մութասարիֆներին, շրջանների, գավառների ղեկավարներին: «Այն բանից հետո, երբ այս ծրագիրը հավանության չարժանացավ դաշնակից երկրների կողմից, հարցի լուծումը փոխանցվեց Ռուսաստանի և Գերմանիայի կառավարություններին: Վերջիններիս կողմից ներկայացվեց բարենորոգումների նոր ծրագիր, ըստ որի, վերոհիշյալ վեց վիլայեթները բաժանվում էին երկու նահանգների՝ օտարերկրացի ընդհանուր քննիչների ղեկավարությամբ»<sup>185</sup>, - տեղեկացնում է հոդվածագիրը: Այս ծրագիրը ոչ պաշտոնական ձևով հաղորդվեց Բ. Ղազանը 1913 թ. սեպտեմբերին, որը, սակայն, արժանացավ վերջինիս դժգոհությանը: Ղազանից հետո Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանները Բ. Ղազանը ներկայացրեցին նոր ծրագիր, ըստ որի, ընդհանուր քննիչները պետք է լինեին օսմանահպատակ քրիստոնյա, որոնց հետևելու էին օտարերկրացի երկու խորհրդականները՝ մեկը ազգությամբ ռուս, մյուսը՝ գերմանացի: «Բոլորը համաձայնության եկան այս ծրագրի բազմաթիվ կետերի շուրջ, և միայն երկու կետ մնաց չհամաձայնեցված: Առաջինն այն էր, թե արդյոք օտարերկրացի խորհրդականները ընտրվելու են նախօրոք Բ. Ղազան կողմից մեծ տերությունների վերահսկողության ներքո: Եվ երկրորդը՝ թե ով պետք է սահմանի գլխավոր նահանգապետի և օտարերկրացի խորհրդականների պարտականու-

---

<sup>185</sup> «Ալ-Թակադդում», № 481:

թյուններ՝ Բ. Ղուբը, թե մեծ տերությունները»<sup>186</sup>, - ավելացնում է հոդվածագիրը:

Այս հոդվածում իրադարձությունների հերթականության որոշակի խախտումներ են նկատվում, քանի որ Ա. Մանդելշտամը բարենորոգումների ռուսական ծրագիրը հունիսի սկզբներին ներկայացնում է մեծ տերությունների դեսպանատների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի քննարկմանը, որն այս խնդիրն ուսումնասիրելու համար 1913 թ. հունիսի 3-20-ը ընկած ժամանակահատվածում 8 նիստ գումարեց Կ. Պոլսի Ենի-Քյոյ թաղամասում գտնվող Ավստրիական դեսպանատանը<sup>187</sup>, մինչդեռ թուրքական ծրագիրը հրապարակ է հանվում 1913 թ. հուլիսի 1-ին<sup>188</sup>: Բացի այդ՝ հոդվածում թուրքական ծրագրի վերաբերյալ նշվում է, որ հայկական վիլայեթները պետք է կազմեն մեկ նահանգ օսմանցի ընդհանուր քննիչի ղեկավարությամբ, սակայն ինչպես հայտնի է, Թուրքիան ի սկզբանե դեմ է եղել հայկական վիլայեթներից բաղկացած մեկ նահանգ ստեղծվելուն: Որոշակի թյուրիմացություն կա նաև Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանների կողմից ներկայացված ծրագրի շուրջ, քանի որ ռուս-գերմանական նախագծի մերժումից հետո Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանները չեն ներկայացնում նոր ծրագիր, փոխարենը Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմը ներկայացնում է թուրքական հակաառաջարկությունը<sup>189</sup>: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե նախագիծն արժանացավ մեծ մասի հավանությանը, խոսքը այստեղ երևի վերաբերում է 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրին, քանի որ թուրքական հակաառաջարկը չէր կարող բավարարել հայկական պահանջները:

---

<sup>186</sup> Նույն տեղում:

<sup>187</sup> Պողոսյան Ա., Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Եր., 2004, էջ 61:

<sup>188</sup> Բոյաջյան Հ., նշվ. աշխ., էջ 111:

<sup>189</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, թ. 11:

Թուրքական առաջարկություններին հակառաջարկի նախագիծ մշակվեց Ազգային պատվիրակության կողմից, որով նահանգի իշխանության իրական ղեկավարումը գտնվելու էր Եվրոպացի խորհրդականների ձեռքում, ինչպես նաև բարենորոգումների անցկացումն ապահովելու համար սահմանվելու էր Եվրոպական վերահսկողություն: Այն ներկայացվեց Կ. Պոլսի Ռուսաստանի դեսպանին, որ խոստացավ ամենինչ անել այն բոլորի կողմից ընդունելի դարձնելու համար<sup>190</sup>:

«Ալ-Թակադդում»-ի 481-րդ համարում հրապարակված մեկ այլ հոդվածում տեղեկացվում է, որ օսմանյան քաղաքական շրջանակները բացահայտ հայտարարել են, որ Բ. Դուռը շատ է հետաքրքրված արևելյան վիլայեթներում (իմա-Արևմտյան Հայաստանում) բարենորոգումներ անցկացնելու հարցում, և օսմանյան կառավարությունն ամեն ինչ կանի այս հարցում հայերին վստահեցնելու իր բարի մտադրությունների մասին: «Սակայն հայերի և օսմանյան կառավարության միջև առկա է փոխադարձ անվստահություն, և հայերը բացահայտ հայտարարում են, որ բարենորոգումները անարդյունք կլինեն, եթե դրանք չընթանան մանրամասն ուսումնասիրության և վերահսկողության ներքո»<sup>191</sup>, - եզրակացնում է թերթը: «Ալ-Թակադդում» թերթը նաև տեղեկացնում է, որ Բ. Դուռը արշավ էր սկսել Փարիզում գտնվող հայկական Ազգային պատվիրակության նկատմամբ, որպեսզի վերջինս հրաժարվի դիմել մեծ տերություններին՝ հավաստիացնելով, որ Բ. Դուռը ամեն ինչ կանի նշված վիլայեթներում վարչական իշխանությունը բարելավելու ուղղությամբ: Բ. Դուռը նույնիսկ հայկական Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին հրավիրել է Կ. Պոլիս այս նպատակով, սակայն վերջինս մինչ այդ պատասխան չէր տվել, քանի որ Պողոս Նու-

<sup>190</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, ք. 13:

<sup>191</sup> «Ալ-Թակադդում», № 481:

բար փաշան անհրաժեշտ էր համարում եվրոպական վերահսկողությունը՝ ապահովելու բարենորոգումների անցկացումը: «Պողոս Նուբարի պատասխանի ուշացումը պայմանավորված էր նրանով, որ չնայած օսմանյան կառավարությունը խոստացել էր Կ. Պոլսի հայ պատրիարքությանը՝ օսմանյան խորհրդարանի ընտրություններն անցկացնել հարաբերական ներկայացուցչական հիմքի վրա և տալ հայերին ազատություն իրենց թեկնածուների ընտրության հարցում, սակայն դեռևս կողմերը համաձայնության չէին եկել: Օսմանյան կառավարությունը շարունակում էր ոչ պաշտոնական ձևով հասկացնել պատրիարքարանին, որ բավարարվի տված խոստումով, իսկ վերջինս պահանջում էր իրականացնել խոստումը»<sup>192</sup>, - նշում է հոդվածագիրը:

Իրականում թուրքիան չէր ցանկանում հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնել, և հենց սկզբից Պողոս Նուբարի առաքելությանը խոչընդոտելու համար Բ. Դուռը ցանկանում էր Պողոս Նուբարի հետ անմիջական բանակցությունների մեջ մտնել և բազմիցս նրան հրավիրել է Կ. Պոլիս<sup>193</sup>, սակայն Պողոս Նուբարը, քաջ գիտակցելով դրա բացասական հետևանքները, հրաժարվել է մեկնելուց: Դրանից հետո թուրքական իշխանությունները փորձեր են արել հայերին ներկայացնել որպես թուրք ազգի թշնամիներ. թուրքական թերթերում պարբերաբար տպագրվել են հոդվածներ, որտեղ քննադատվում էր նրա ծավալած աշխատանքը, սխալ մեկնաբանվում կատարած դիմումները<sup>194</sup>:

Թուրքական կառավարության՝ բարենորոգումներ անցկացնելու հարցում դիմադրության հիմնական թիրախը տերությունների կողմից ընդհանուր քննիչների թեկնածուների առաջադրման

---

<sup>192</sup> Նույն տեղում:

<sup>193</sup> «Յուսաբեր», 1913, № 166:

<sup>194</sup> ՀՀ ԳԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ, Օտեան Ե., Պողոս Նուբար փաշա /կենսագրական նյութեր/, Կ. Պոլիս, 1913, էջ 74: Պօղոսեան Ա., նշվ. աշխ., էջ 44:

պահանջն էր, որի գործադրմամբ, ըստ նրա, սկիզբ կդրվեր Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթների բաժանմանը: Այս խնդրի մերկացմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի «Օսմանյան գործերը» վերնագրով հոդվածը, որում ներկայացված է Կ. Պոլսում «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակից Քուանար Ուստրուի՝ թերթին ուղարկված թղթակցությունը: Քուանար Ուստրուն վերոնշյալ նյութի սկզբում ներկայացնում է այդ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու կապակցությամբ «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակիցը նշում է, որ Բ. Դուռը համառորեն հրաժարվում էր եվրոպացիների վերահսկողությունից՝ պատճառաբանելով, որ եթե թույլ տա նրանց վերահսկողությունը արևելյան վիլայեթներում, ապա այն կարժանանա տեղի բնակիչների բոյկոտին<sup>195</sup>: Մեծ տերությունների կողմից արևելյան վիլայեթներում վարչական իշխանությունն իրականացնելու համար նշանակված պաշտոնյաների գործունեությունը ցանկալի արդյունք չի բերի բարենորոգումների հարցում: Բացի այդ՝ հոդվածում հաստուկ հետաքրքրություն էր ցուցաբերվում հողերի վերադարձման խնդրին, որոնք խլվել էին այն հայերի ձեռքից, որոնք ապաստան էին գտել օտար երկրներում՝ փախչելով կոտորածներից: «Սակայն օսմանյան կառավարությունն Արևելյան Անատոլիայի երկու նահանգներում կնշանակի օտարերկրացի ընդհանուր քննիչների և նրանց կտրամադրի լիակատար իշխանություն: Բարեփոխումներ է իրականացվելու նաև հայաբնակ վիլայեթների ժանդարմերիայում, որոնց ղեկավարությունը հանձնարարվելու է գեներալ Յոհանին և նրա ընկերոջը»<sup>196</sup>, - տեղեկացնում է Քուանար Ուստրուն:

---

<sup>195</sup> «Ալ-Թակադդում», № 481:

<sup>196</sup> Նույն տեղում:

Հողվածում նշված թուրքական՝ հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու «ցանկությունը» պայմանավորված էր հունվարի 26-ի համաձայնագրով, ինչպես նաև Բալկանյան պատերազմի հետևանքով Թուրքիայի համար ստեղծված անբարենպաստ պայմաններով:

Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը հայկական բարենորոգումների առնչությամբ ստիպում է Պողոս Նուբար փաշային առաջ քաշել Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու գաղափարը<sup>197</sup>: Նման պայմաններում Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու հարցում Պ. Նուբարը կարևորում էր Եվրոպայի հայասիրական կոմիտեների գործունեությունը: Այս նպատակով գործողությունների միասնական պլան մշակելու համար որոշում է կայացվում գումարել հայասիրական կոնֆերանս, որի նախաձեռնությունն իրենց վրա են վերցնում Ֆրանսիական Ասիայի կոմիտեի ներկայացուցիչները<sup>198</sup>: Այս խնդրին «Ալ-Թակադդում»-ը նույնպես անդրադարձել է «Փարիզում հայկական կոնֆերանսը» վերնագրով հողվածում, որում տեղեկացվում է, որ ֆրանսիական բանակի նախկին զլխավոր գորահրամանատար գեներալ ղը Լակրուան և «Դեհու Լագի Ֆրանսեզ» միության ղեկավարը հայտնել են, որ արդեն Լոնդոնի, Պետերբուրգի, Բեռլինի, Վիեննայի և այլ քաղաքների հայասեր խմբերը համաձայնության են եկել ու հայասիրական կոնֆերանս գումարել Փարիզում նոյեմբերի չորրորդ շաբաթում, և Եվրոպայում հայկական Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան ներկայացրել է Եվրոպայում կատարած առաքելության մասին մանրամասնություններ: «Կոնֆերանսի վերջնական ամփոփիչ հռչակագիրը ուղարկվել է մեծ տե-

<sup>197</sup> Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 67:

<sup>198</sup> Ֆրանսիական Ասիայի կոմիտեն ստեղծվել էր 19-րդ դարի վերջերին Փարիզում՝ Ֆրանսիայի ռազմական նախարար Էտյենի նախաձեռնությամբ: Այն նպատակ ուներ ֆրանսիացիներին ծանոթացնել Ասիայում տիրող կացությանը:

րություններին, որում կոչ է արվել մեծ տերություններին ստիպել Օսմանյան կայսրությանը՝ արագացնել բարենորոգումների անցկացումը, քանի որ այն բխում է իր իսկ շահերից»<sup>199</sup>, - հաղորդում է թերթը: Այստեղ խոսքը 1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսի մասին է, որը գումարվել էր տերությունների կողմից Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու համար: Իր ելույթի ժամանակ Պողոս Նուբարը կոչ է անում ներկաներին դիմումներ գրել իրենց կառավարություններին<sup>200</sup> Թուրքիայի հետ կնքվելիք փոխառությունը պայմանավորել բարենորոգումների իրականացմամբ<sup>201</sup>: Հայասիրական կոնֆերանսը լայն արծագանք գտավ տարբեր երկրներում: Չնայած մեծ տերությունները ֆինանսական ճնշում չգործադրեցին Թուրքիայի վրա, այնուամենայնիվ այն ավելի համախմբեց Եվրոպայի հայասիրական ուժերին և նպաստեց միասնական գործողության ծավալմանն ինչպես միմյանց, այնպես էլ Ազգային պատվիրակության միջև, որն էլ իր հերթին հեշտացրեց Պողոս Նուբարի առաքելությանը:

1913 թ. դեկտեմբերի կեսերից հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական բանակցությունները մտնում են վճռական փուլ: Հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական քննարկումներին զուգահեռ ոչ պաշտոնական հանդիպումներ էին տեղի ունենում Օսմանյան կայսրության ներքին

---

<sup>199</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 468:

<sup>200</sup> Բաբգէն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուպար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 18-31:

<sup>201</sup> Ղեռնս 19-րդ դարի կեսերից թուրքական իշխանությունները, երկրի տնտեսական ծանր կացությունը բարելավելու համար, ստիպված էին փոխառություններ վերցնել եվրոպական պետություններից: Այդ իրավիճակը շարունակվում է նաև 20-րդ դարի սկզբներին, որի հետևանքով 1908-1914 թթ. երիտթուրքերի կնքած փոխառությունների գումարը կազմում էր մոտ 50 մլն լիրա: Ի վիճակի չլինելով մարել այդ վիթխարի պարտքը՝ թուրքական իշխանությունները որպես փոխհատուցում պարտատերերին տալիս են տարբեր կոնցեսիաներ: Steu` Новичев А., Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937, с. 203.

գործերի նախարար Թալեաթ փաշայի և Գ. Ջոհրապի, Պ. Հալաճեանի ու օսմանյան խորհրդարանի մյուս հայ պատգամավորների միջև, որոնց ընթացքում Թալեաթն առաջարկում էր հայկական բարենորոգումների հարցը լուծել ներքին քննարկումների միջոցով՝ հայկական բարենորոգումների խնդիրը որակելով որպես կայսրության ներքին հարց<sup>202</sup>: Այս ոչ պաշտոնական բանակցությունների ընթացքում Թալեաթը հավաստիացնում էր, թե օսմանյան կառավարությունը կանցկացնի հայկական վիլայեթներում բարենորոգումներ: Վերջինիս առաջարկած բարենորոգումների ծրագրի նախագիծը տարբերվում էր Ազգային պատվիրակության ծրագրից<sup>203</sup>: Կարելի է ենթադրել, որ թուրքական իշխանություններն այս ոչ պաշտոնական բանակցությունների միջոցով փորձում էին հայերին ստիպել բանակցություններ վարել իրենց հետ՝ դրանով իսկ կանխելով մեծ տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին: Եվ ի վերջո երկարատև բանակցություններից հետո Թուրքիայում ռուսական գործերի հավատարմատար Կ. Գուլկևիչը և մեծ վեզիր Սայիդ Հալիմը 1914 թ. հունվարի 26-ին ստորագրում են հայկական բարենորոգումների վերաբերյալ համաձայնագիր: Ըստ համաձայնագրի, Արևմտահայաստանը՝ Արևելյան Անատոլիան, բաժանվելու էր երկու սեկտորների: Յուրաքանչյուր սեկտորի ղեկավար նշանակվելու էր օտարերկրացի ընդհանուր քննիչ, որի իրավունքների մեջ էին մտնելու վերահսկողությունը վարչության, ոստիկանության ու ժանդարմերիայի վրա<sup>204</sup>: Այս խնդրի մասին է «Ալ-Թակադդում»-ի՝ «Անատոլիայում բարենորոգումների հարցի ավարտը» վերնագրով հոդվածը: Նրանում հոդվածագիրը նախևառաջ ներկայացնում է «Վան» թերթից մեջբերված մի տեղեկություն

<sup>202</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, թ. 13:

<sup>203</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 49, թ. 14:

<sup>204</sup> Մանրամասն տես՝ Բոյաջյան Բ., նշվ. աշխ., էջ 151-152: Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 77-78:

բռնապետության տարիներին հայերի կրած տառապանքի մասին: Ապա հաղորդվում է, որ հայերը շատ են օգնություն խնդրել, սակայն դրանք մնացել են անարձագանք. «Նույնիսկ հայոց Հ. Արշարունի պատրիարքը ստիպված է եղել հրաժարական տալ, իսկ էջմիածնի կաթողիկոսը դիմել է Եվրոպային օգնություն ստանալու ակնկալիքով»<sup>205</sup>: Բացի այդ՝ հողվածում խոսվում է Ռուսաստանի կողմից Թուրքիայի գործերին քաղաքական միջամտությունների մասին՝ վերջինիս ներկայացնելով որպես օսմանահպատակ հայերի իրավապաշտպան: Հողվածում մեծ դեր է հատկացվում Պողոս Նուբարի անձին, ում ջանքերով մեծ տերությունները մասնակցում էին այս հարցի լուծմանը: Իսկ ինչ վերաբերում է հայկական բարենորոգումների հարցին, հողվածագիրը տեղեկացնում է, որ մեծ վեզիրը և Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանատան գործերի տնօրենը համաձայնագիր են ստորագրել Արևելյան Անատոլիայի վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ: Բ. Պուռն արդեն որոշել է ներկայացնել բարենորոգումների նախագիծ և ուսումնասիրություն է իրականացնում խորհուրդներում փոքրամասնությունների ներկայացման, ընդհանուր քննիչների, օտարերկրյա խորհրդականների պարտականությունների հստակեցման ուղղությամբ: «Համաձայնագրի «հապճեպ» ստորագրման պատճառներից էին հայոց կաթողիկոսի՝ համաձայնագրի նկատմամբ հակվածությունը և ռուսական դեսպանատան ձգձգումներից հրաժարվելը, ու բոլորն էլ, կարծես թե, գոհ էին: Օսմանյան կառավարությունը որոշել է իրականացնել բարենորոգումների նախագիծը լավ մտադրությամբ և ժամանակի չափանիշներին համապատասխան, սակայն հայերը այդքան էլ չեն հավատում դրան»<sup>206</sup>, - նշում է թերթը:

<sup>205</sup> «Ալ-Թակադդում», 1914, № 498:

<sup>206</sup> Նույն տեղում:

Հողվածում նշվում է, որ հունվարի 26-ի համաձայնագրի ստորագրման պատճառներն էին հայոց կաթողիկոսի հակվածությունը և Ռուսաստանի շահագրգռվածությունը: Պետք է նշել, որ ոչ միայն կաթողիկոսը, այլև ամբողջ հայ ազգը հաստատակամորեն հանդես էր գալիս բարենորոգումների իրականացման օգտին, իսկ Ռուսաստանի շահագրգռվածությունը պայմանավորված էր իր իսկ պետական շահերով: Սակայն համաձայնագրի ստորագրման հարցում կային նաև այլ բարենպաստ պայմաններ: Դրանցից առաջինը Բալկանյան պատերազմի հետևանքով ստեղծված բարենպաստ իրադրությունն էր, երկրորդը՝ արևմտահայերի պահանջների օրինականությունը: Երրորդ պայմանը հայերի համախմբվածությունն էր, ովքեր միավորելով իրենց բոլոր ջանքերը պայքարեցին բարենորոգումների համար: Համաձայնագրի ստորագրման մեջ իր ուրույն տեղն ունի Պողոս Նուբարը, ով դիվանագիտական մեծ տաղանդով և հմտությամբ եռանդուն գործունեություն է ծավալել եվրոպական երկրներում:

«Ալ-Թակադդումն» իր համարներում անդրադարձել է նաև Պ. Նուբարի՝ տարբեր թերթերին տված հարցազրույցների լուսաբանմանը, և մասնավորապես 1914 թ. 475-րդ համարում ներկայացվում է Պողոս Նուբար փաշայի՝ «Թան» թերթին տված հարցազրույցը, որի ընթացքում Պողոս Նուբարը նշում է, որ որոշ մարդիկ մեղադրում են հայերին կայսրությունից առանձնանալու և անկախություն ձեռք բերելու մեջ: Եթե Բ. Դումն իրականացնի Բեռլինի 61-րդ հոդվածով պարտավորված բարենորոգումներն եվրոպական պետությունների խնամակալության ներքո, ապա հայերը հավատարիմ կմնան օսմանյան կառավարությանը: Բարձր Դուռը հավանություն էր տվել բարենորոգումների անցկացման նախագծի շատ կետերին: Այդ նախագիծը ենթադրում էր, որ հայերով բնակեցված վիլայեթները պետք է բաժանվեն երկու մասի, որոնք ղեկավարելու են եվրոպացի ընդհանուր քննիչ-

րոնց մեծ տերությունների առաջարկով պետք է նշանակի ուռը: Եվրոպացի ընդհանուր քննիչները պետք է անցկաց-  
ւ բարենորոգումները՝ Կ.Պոլսում մեծ տերությունների դես-  
պանների հսկողության ներքո: «Սակայն, կարծես Բ. Ղուռը չի  
ուզում ընդունել այս վերահսկողությունը: Նա ցանկանում է եվրո-  
պացի երկու ընդհանուր քննիչի փոխարեն նշանակել օսմանցի  
երկու պաշտոնյայի, որոնց կօգնեն Եվրոպայի խորհրդականնե-  
րը՝ ունենալով պակաս լիազորություններ»<sup>207</sup>, - նշում է Պողոս  
Նուբար փաշան: Ինչպես հայտնի է, խորհրդականների նշանա-  
կումը նոր երևույթ չէր Օսմանյան կայսրությունում, և այս անգամն  
էլ նրանց գործունեությունը նույնպես ոչ օգտակար կլիներ: Պ.  
Նուբարը հարցազրույցի ընթացքում նաև նշեց, որ հայերը հաս-  
տատակամորեն ուզում են մնալ՝ որպես «օսմանցիներ»՝ պայմա-  
նով, որ բարենորոգումները իրականություն դառնան, որը կօգնի  
նրանց առօրյա կյանքում՝ ապահովելով արդարություն և ան-  
վտանգություն<sup>208</sup>: Հայկական բարենորոգումները բխում էին ոչ  
միայն հայերի, այլև եվրոպացիների շահերից: Եվ այս ամենից հե-  
տո Եվրոպան հանգստություն ձեռք կբերեր քառսային իրավի-  
ճակներից, որոնք կապված էին Բալկաններում տարուց ավելի  
տեղի ունեցած պատերազմներից հետո: «Ակնհայտ է, որ անվ-  
տանգության հասնելու համար անհրաժեշտ է պահպանել Անա-  
տոլիայի ամբողջականությունը, ամրապնդել օսմանյան կառա-  
վարությունը, հաղթահարել ֆինանսական խնդիրները: Սրանց  
կարելի է հասնել միայն բարենորոգումների ճանապարհով, որին  
և մենք ձգտում ենք: Հայերի շահերից է բխում, որ եվրոպական  
պետությունները վարկ տրամադրեն, որից հետո հարցի լուծումը

<sup>207</sup> «Ալ-Թակադդում», 1914, № 475:

<sup>208</sup> Իհարկե, Պ. Նուբարի այս խոսքերը չպետք է ընդունել որպես համազգային  
կարծիք, քանի որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը ձգտում էր դուրս գալ  
թուրքական տիրապետությունից ու Ռուսաստանի հովանու տակ միավորվել իր  
արևելահայ եղբայրների հետ, այսինքն՝ պայմաններ ստեղծել ազգահավաքման  
համար:

կախված կլինի Բ. Դռան ցանկությունից: Օսմանյան կառավարության կողմից այս պայմանի ընդունումն իր իսկ շահի համար է, ինչպես նաև միևնույն ժամանակ կանհետանան այն բոլոր վտանգները, որոնք սպառնում են Եվրոպայի խաղաղությանը»<sup>209</sup>, - ավելացնում է Պոզոս Նուբար փաշան: Նույն համարում տեղ գտած մեկ այլ հոդվածում «Ալ-Թակադդում» թերթը հայկական բարենորոգումների հետ կապված նշում է, որ Մակեդոնիայում անցկացված բարենորոգումների անհաջողությունները, վատ արդյունքները վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է այն իրականացնել պետական մակարդակով, և սա էր պատճառներից մեկը, որ սահմանադրության ընդունումից հետո այն չեղյալ հայտարարվեց. «Ուստի հայկական բարենորոգումների անցկացումը պետք է իրականացվի պետական մակարդակով»<sup>210</sup>, - եզրակացնում է թերթը:

Բարենորոգումների հետ կապված վերջին՝ «Արևելյան վիլայեթների բարենորոգումները» վերնագրով հոդվածը լույս է տեսնում «Ալ-Թակադդում»-ի 1914 թ. 503-րդ համարում, ուր տեղեկացվում է, որ արևելյան վիլայեթների բարենորոգումները մտել են գործնական փուլ: «Հայերը չեն ցանկանում Օսմանյան կայսրության մասնատումը և այս նպատակի համար չեն օգտագործի հայերին՝ ռուս-օսմանյան համաձայնագրերով տրված երաշխավորագրերը: Սա է վկայում նաև Եվրոպայում լիազորված հայերի ներկայացուցիչ Պոզոս Նուբարի՝ «Թայմզ» թերթում տարածած այն հայտարարությունը, որ հայ ազգն ամեն ինչ կանի ամրապնդելու օսմանյան պետությունը՝ ավելացնելով, որ Ռուսաստանը նույնպես Օսմանյան կայսրության մասնատմանը հակված չէ»<sup>211</sup>, - եզրակացնում է թերթը: Այնուհետև հոդվածում նշվում էր, որ Ֆրանսիան հայաբնակ վիլայեթներում շատ առանձնաշնոր-

<sup>209</sup> «Ալ-Թակադդում», № 475:

<sup>210</sup> Նույն տեղում:

<sup>211</sup> Նույն տեղում, № 503:

հումներ ուներ, ուստի ցանկանում էր, որ օսմանյան պետությունը զարգանա և ամեն ինչ անում էր բարենորոգումների իրականացումը հեշտացնելու համար: Նա (Ֆրանսիան - Մ.Ե.) ցանկանում էր, որ ընդհանուր քննիչները նշանակվեին չեզոք երկրներից և նրանց պաշտոնավարման ժամկետը լիներ տասը տարի: «Ֆրանսիան մեծ շահ ունի այս բարենորոգումների խնդրի լուծման մեջ և մյուս պետություններից առավել շատ ջանքեր է թափում այն իրականության վերածելու համար: Ամեն ինչ արել է Ռուսաստանի և օսմանյան կառավարության միջև համաձայնագիր կնքվելու համար, և այդ համաձայնագիրը այն բազմաթիվ համաձայնագրերից մեկն էր, որ կնքվել էր մեծ տերությունների միջև»<sup>212</sup>, - եզրակացնում է թերթը:

Ֆրանսիայի՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու քաղաքականությունը թելադրված էր սեփական շահերով<sup>213</sup>: Ֆրանսիան Թուրքիայում ուներ մեծ տնտեսական շահեր և հսկայական գումարներ էր ներդրել այնտեղ, որոնք չէր ցանկանում կորցնել: Իսկ Հայկական հարցը օգտագործում էր թուրքական իշխանություններից նոր զիջումներ ստանալու, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում ռուսական ազդեցության դեմն առնելու համար:

1914 թ. կեսերին Ռուսաստանի ջանքերով կազմվում է հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների թեկնածուների անվանացուցակը, և 1914 թ. մարտի 24-ին այն ներկայացվում է Բ. Դռանը, որի ընտրությունն էլ 1914 թ. ապրիլի 2-ին կանգ է առնում հոլանդացի Վեստենենկի և նորվեգացի Հոֆֆի վրա<sup>214</sup>: Նրանք նոր էին անցել իրենց պարտականությունների կատար-

<sup>212</sup> Պետք է նշել, որ այդ ժամանակվա որոշ թերթեր այս համաձայնագրերի նպատակը համարում էին Օսմանյան կայսրության մասնատումը: Տես՝ «Թմակադդում», № 503:

<sup>213</sup> Բօնթանտոն Լ-տը, Հայկական հարցի վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913, էջ 46:

<sup>214</sup> Բոյաջյան Հ., նշվ. աշխ., էջ 180:

մանը, երբ սկսվեց առաջին աշխարհամարտը, և հայկական բարենորոգումները չիրականացվեցին:

Չնայած Պողոս Նուբար փառալուստի եռանդուն գործունեությանը՝ այս անգամ ևս հայկական բարենորոգումների իրականացումը մնաց միայն թղթի վրա: 20-րդ դարի սկզբին ստեղծված աշխարհաքաղաքական կացությունը, մեծ տերությունների միջև գոյություն ունեցող տարածայնությունները, ինչպես նաև Օսմանյան կայսրության որդեգրած քաղաքականությունը կրկին խափանեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդրի լուծումը:

Այսպիսով, «Ալ-Թակադդում» թերթն արաբախոս ընթերցողներին հայտնում է Թուրքիայի մերժողական քաղաքականությունը հայկական բարենորոգումների անցկացման հարցում, մերկացնում է այս հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումները: Բացի այդ՝ թերթը բացահայտում է թուրքական իշխանությունների՝ Ազգային պատվիրակության գործունեությունը խոչընդոտելու համար ձեռնարկած քայլերն ու բարենորոգումների իրականացման համար մղվող պայքարում մեծ կարևորություն տալիս Պողոս Նուբարի անձին:

### 2.3. Կիլիկիահայության 1909 թ. կոտորածի լուսաբանումը

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կողմից կատարվեց հեղաշրջում, որը ոգևորությամբ է ընդունվում կայսրության ոչ թուրք ժողովուրդների կողմից: Սակայն շուտով նրանք հուսախաբ եղան, քանի որ երիտթուրքերը շարունակեցին համիդյան բռնակալական ռեժիմի քաղաքականությունը: Նման վարքագծի ամբողջ էությունը բացահայտվեց 1909 թ. ապրիլին Կիլիկիայում՝ մասնավորապես Ադանայում և նրա

շրջակա գյուղերում կազմակերպված ջարդերի ընթացքում, որին զոհ գնաց մոտ 30000 հայ<sup>215</sup>:

Կիլիկիայի կոտորածների լուսաբանմանն անդրադարձավ նաև արաբական մամուլը: Դեպքերի ու իրադարձությունների լավագույնս արտացոլման գործում մամուլն արժեքավոր աղբյուրներից է: Կոտորածներից հետո Եգիպտոսի քրիստոնեական մամուլը՝ մասնավորապես Ալեքսանդրիայում ամերիկյան միսիոներական քարոզչություն իրականացնող «Մուրշիդ» ամսագիրը, հրատարակեց Կիլիկիայի ջարդերի մասին հոդվածներ, որոնցում ջարդերի գլխավոր պատճառ նշում է կրոնական գործունը<sup>216</sup>: Սակայն Եգիպտոսի մուսուլմանական հասարակությունն անմիջապես հերքեց այն. մասնավորապես Ազհարի շերիֆը Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ ֆեթվա (ուղերձ) հրապարակեց, որտեղ նշվեց, որ իսլամն անմեղ էր քրիստոնյաների արյունահեղության մեջ: Իսկ Եգիպտոսի չեզոք մամուլի կողմից («Ալ-Ահրամ», «Ալ-Կահիրե», «Ալ-Ջարիդա», «Ալ-Աֆքար», «Ալ-Նար») երկու հատուկ թղթակիցներ ուղարկվեցին Ադանա՝ իրականությունը պարզելու համար: Ուսումնասիրությունն ավարտելուց հետո նրանք մի քանի հոդված հրատարակեցին: Թղթակիցները նշում էին, որ իսլամն անպարտ է, և կոտորածների գլխավոր

---

<sup>215</sup> Կիլիկիան զտնվում էր Փոքր Ասիայի հարավ-արևելյան անկյունում՝ Միջերկրական ծովի ափին: Հայերը Կիլիկիայում բնակվել են անհիշելի ժամանակներից: Բնիկ տարրերը կազմում էին հայերը, հույները, քրդերը, իսկ թուրքմենները, թուրքերը այստեղ հաստատվել են 16-րդ դարում: Թուրքական 1892 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն, Կիլիկիայում հայերի թիվը շուրջ 150000 էր, իսկ Համբարձում Առաքելյանը Կիլիկիայի բնակչության թիվը 1896 թ. հաշվում էր 500000, իսկ հայությանը՝ 150000-200000: Տես՝ Առաքելյան Հ., Չեյթուն: Տեղեգրական, ազգագրական և վարչական պատմություն, Թիֆլիս, 1896, էջ 6-7: Ռ. Գասպարյանը Կիլիկիայում հայերի թիվը նշում է մոտ 400000, որից 22000-ը բնակվում էին Ադանա քաղաքում: Տես՝ Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Եր., 2005, էջ 55:

<sup>216</sup> محمد رفعت الامام, منليج ارضه أبريل 1909 وانرها في مصر, اريك, عدد 7, نوفمبر, قاهرة ص. 2.  
2010 Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, 1909 թ. ապրիլի կոտորածները և դրանց արձագանքը Եգիպտոսում, Արեգ, Կահիրե, 2010, նոյեմբեր, № 7, էջ 2:

պատճառն Ադանայում քաղաքական, տնտեսական ու հասարակական ոչ հայանպաստ գործունեներն են<sup>217</sup>:

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական ջարդերի ու կոտորածների՝ այդ թվում նաև Կիլիկիայի ջարդերի, պատճառների, դրան հաջորդած ամիսներին հայերի վիճակի, հայ որբերի խնդիրների և հայկական գաղթի լուսաբանմանն է անդրադարձել նաև սիրիական մամուլը՝ մասնավորապես Հալեպի «Ալ-Թակադդում» թերթը: Այն Կիլիկիայում տեղի ունեցած ջարդերի մասին գրում է. «Կիլիկիայի կոտորածների զոհերի թիվն անցնում է նույնիսկ 30000-ը: Տեղական և օտար թերթերը մեզ ներկայացնում են հայ կանանց կերպարների նկարագրությունները, ովքեր գերեզման էին նետվում կամովին, զույգ-զույգ երեխաները ծեռքներին, երբ իրենց աչքի առաջ մոթթում էին հարազատներին, և նրանք գետն էին նետվում իրենց անարատությունը պահելու համար: Նրանք (թուրքերը - Մ.Ե.) մաս-մաս կտրատում էին մարդկանց մարմինները և խորովում թեժ կրակի վրա, խլում նրանց հարստությունը և գերում կանանց, սպանում երեխաներին ու ստորացնում ծերերին»<sup>218</sup>: «Ալ-Թակադդում» թերթը նաև ընդգծում է, որ քրիստոնյաներն իրոք ենթարկվել են բռնությունների և «Ալ-Իթիզալ» թերթի նկարագրությունները քրիստոնյաների մասին թուրքերի նկատմամբ տածած թշնամության արդյունքը չէ, այլ իրականության արտահայտում: Այդ ամենի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ քրիստոնյաները ներգրավված չէին եղեռնագործ գործերի մեջ, այլապես ոճիրն այդ չափերը չէր ընդունի: Տղամարդիկ հավաքագրված էին, այնինչ անպաշտպան կանայք ու թույլ ծերերը չէին կարող համապատասխան դիմադրություն ցույց տալ. «Սա է իրողությունը, և եթե նույնիսկ ես լռեմ դրա մասին, դա կլուսաբանեն ուրիշ-

<sup>217</sup> محمد رفعت الإمام *Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ*, Նշվ. աշխ., էջ 2:

<sup>218</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 5:

ները»<sup>219</sup>, - նշում է հոդվածագիրը: Կիլիկիայի ջարդերի զոհերի թվաքանակի մասին որոշակի տեղեկություն է տալիս նաև «Ալ-Թակադդում» թերթի 24-րդ համարում հրատարակված «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» վերնագրով հոդվածը. «Ըստ ուսումնասիրող խմբի և պատերազմական գրասենյակի կատարած մանրամասն հետազոտությունների՝ Ադանայի իրադարձությունների արդյունքում զոհվեց 5680 մարդ, որից 1480-ը՝ մուսուլման, 4190-ը՝ քրիստոնյա: Իսկ ինչ վերաբերում է Ադանայում առկա օտարազգի զոհերի թվին, ապա անունների մատյաններում և գրապահոցներում բացակա լինելու կամ թերի գրանցված լինելու պատճառով թվերը մոտավոր են, նույնիսկ՝ խիստ սակավ, կարող են գերազանցել մինչև 15000-ի և ամբողջական թիվը կդառնա 20680»<sup>220</sup>:

Փաստերի կեղծման ու խեղաթյուրման մոլուցքով բռնված երիտթուրքերը տալիս էին իրարամերժ տեղեկություններ: Առաջինը զոհերի վերաբերյալ հանրությանը կեղծ փաստեր հաղորդեց Ադանայի նորանշանակ կուսակալ Բաբան զադե Մուարաֆա Զիհնի փաշան: Սակայն նրա հաղորդած նախնական տվյալները հեռու էին իրականությունից: Կառավարության «հանձնարարականով» նոր ստուգումներ և քննարկումներ եղան, որի արդյունքում զոհերի վերաբերյալ հրապարակվեցին հետևյալ թվերը՝ ջարդերի ամբողջ ընթացքում զոհվել է 5538 մարդ, որից քրիստոնյաները՝ 3502, իսկ մահմեդականները՝ 2036<sup>221</sup>: Փարիզում օսմանյան դեսպանությունը Կիլիկիայի եղեռնագործության մասին Ֆրանսիայի բոլոր թերթերին հաղորդել էր, որ «զոհերի ընդհանուր թիվը 20000 է, նույնիսկ 30000-ի մոտ է ներկայացվում: Եվ ինչպես վկայում են Մերսինի և Ատանայի մեջ քննություններ կատարող քրիստոնյա ժողովրդի հոգևոր պետերը,

<sup>219</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 5:

<sup>220</sup> Նույն տեղում, № 24:

<sup>221</sup> «Դոնիզոն», 1910, 23 մարտի, № 64:

հանցանքը երկուստեք էր»<sup>222</sup>: Միաժամանակ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան հայտարարեց, թե ինչպես կարող էր 30000 հայ սպանվել, եթե Կիլիկիայում հայկական բնակչությունը 40000-ից չէր անցնում և «այժմ, համաձայն մեր մարդահամարի, 25000-ը կենդանի են»<sup>223</sup>: Իսկ եվրոպական թղթակիցները դեռ ջարդի ընթացքում և դրանից հետո մամուլին ներկայացրել են բոլորովին ուրիշ թվեր: Նրանք գտնում էին, որ ապրիլի 1-15-ը Կիլիկիայում 30000-35000 մարդ է սպանվել: Եգիպտացի արաբ պատմաբան Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը նշում է, որ կոտորածների արդյունքում զոհվեց 28103 մարդ<sup>224</sup>: «Բյուզանդիոնը» նշում է, որ Կիլիկիայում հայերի կոտուստները կազմում են 20-30 հազար մարդ<sup>225</sup>:

Կիլիկիայի հայերի կոտորածների զոհերի վերաբերյալ թեև կոնկրետ թիվ չկա և դժվար էլ է որևէ կոնկրետ վերջնական թիվ նշել, քանի որ երիտթուրքական իշխանությունները շատ հաճախ թաքցնում էին դիակները (բացի դրանից սպանվածներից շատերի մարմիններն ընկած էին անտառների խորքերում, ջրիտորներում, կամ էլ գետերը տարել ու թափել էին ծովերը<sup>226</sup>), այնուհանդերձ ընդունված է համարել 30000-40000 մարդ:

«Ալ-Թակադդումը» իր համարներում հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայի ջարդերի պատճառների ուսումնասիրմանը, և մասնավորապես թերթի 26-րդ համարում նշվում է, որ Ադանայի մեծ կոտորածից հետո քաղաքի բնակիչները սկսեցին իրար մեջ որոնել դրա պատճառները և աղետին զոհ դարձած մահացածների թիվը: Նման պայմաններում այլևս անհնար եղավ

<sup>222</sup> Աշճեան Հ., Ատանայի եղեռնը և Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1956, էջ 40:

<sup>223</sup> Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 80:

<sup>224</sup> محمد رفعت الإمام Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, նշվ. աշխ., էջ 2:

<sup>225</sup> «Բյուզանդիոն», 1909, 10 մայիսի:

<sup>226</sup> Կային նաև այլ պատճառներ, որոնք թույլ չէին տալիս զոհերի թիվը կոնկրետացնել: Տես՝ Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009, էջ 204-205:

թաքցնել իսկական ճշմարտությունը: Խոսակցություն էր գնում այն մասին, որ հայերն են սկսել այս բռնությունները, իսկ ոմանք գտնում էին, որ թուրքերն են սանձազերծել կոտորածները: Եվ երբ օսմանյան կառավարությունը տեսավ, որ պատերազմի դիվանի հայտնած տեղեկությունները բավարար չեն իսկական ճշմարտությունը պարզելու համար, նոր հետազոտական խումբ ձևավորեց: Այդ կոտորածի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ժամանակի հայ մտավորականության իրավիճակը, որից հետո ճշմարտությունը պարզ է դառնում: Ադանայի հայերը, որոնք մասնակցել էին հեղափոխությանը, ձերբակալվում էին առևտրով զբաղվելու համար: «Հայերն իրենց ապրելակերպով, գիտելիքով, գրականությամբ և ուրիշ այլ բնագավառներում գերազանցում էին թուրքերին: Հայերը փոքրացվել, ստորացվել էին իշխանությունների կողմից, միաժամանակ ենթարկվելով բնակիչների հետապնդումներին, հատկապես 1895 թ. ջարդերից հետո»<sup>227</sup>, - նշում է հոդվածագիրը:

Մահմեդականները դժգոհ էին հայերի այս վիճակից և նախանձով էին վերաբերվում հայերի՝ գիտության ու արվեստի մեջ ունեցած հաջողություններին: Կառավարությունը նույնպես դժկամությամբ էր վերաբերվում հայերի հաջողություններին և ձգտում էր յուրացնել հայերի գումարները: Սակայն սահմանադրության ընդունումից հետո կապվեցին կառավարության ձեռքերը՝ չկարողանալով յուրացնել հայերի գումարները. «Փաստորեն և կառավարությունը, և բնակիչները ատելությամբ էին լցված հայերի նկատմամբ, բայց կարծես «ուրախության և հաղթանակի գինին» արբեցրել էր հայերին, նրանք անփույթ էին այդ թշնամանքի հանդեպ, թեթևամտությամբ կարծելով, որ սահմանադրությամբ իրենք անխոցելի են»<sup>228</sup>, - հաղորդում է հոդվածագիրը:

<sup>227</sup> «Ալ-Իձակադդում», 1909, № 26:

<sup>228</sup> Նույն տեղում:

«Ալ-Թակադդումը» Ադանայի կոտորածների պատճառների շարքին է դասում նաև օսմանյան կառավարության գործունեությունը՝ նշելով, որ սահմանադրական իշխանությունը, որը տեղյակ էր Ադանայի դեպքերին, սխալվեց՝ բռնապետության շրջանի պաշտոնյաներին թողնելով իրենց պաշտոններում՝ չփոխելով նրանց նոր մտածելակերպի մարդկանցով, և չիրականացնելով բավարար բարեփոխումներ: Հայերը իրենց հերթին սխալվեցին՝ հավատալով սահմանադրությանը՝ իրենց ճակատագիրը թողնելով բախտի քմահաճույքին, որը կարծես թե նրանց անվերջ տանում էր ցնորքի և երազանքների անիրական աշխարհ: «Եվ երբ բռնության ալիքը հասավ Ադանա, ու արյունահեղությունը միանգամից բորբոքվեց, կառավարությունն ի զորու էր կանխել կոտորածները, սակայն հակառակ դրան՝ ավելի բորբոքեց այն, և սա եղավ այն գլխավոր պատճառը, որ այս կոտորածը նման տեսք ստացավ՝ տալով մարդկային մեծ կորուստներ»<sup>229</sup>, - եզրակացնում է հոդվածագիրը: Մեկ այլ «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ ուսումնասիրող խումբը և պատերազմական գրասենյակը մանրամասն ուսումնասիրություններ անելուց հետո գալիս են այն եզրակացությանը, որ հայերի և թուրքերի միջև առկա թյուրիմացությունն ու փոխըմբռնման բացակայությունն է կոտորածների պատճառը: «Այս երկու ազգի միջև առկա էր թշնամանք, որը կառավարության միջամտության արդյունքում ավելի բորբոքվեց»<sup>230</sup>, - եզրակացնում է հոդվածագիրը: Թերթը Կիլիկիայի ջարդերի գլխավոր պատճառներից նշում է նաև հայերի տնտեսական վիճակը<sup>231</sup>: Բանն այն է, որ 1895-1896 թթ. ջարդերի ընթացքում կիլիկիահայերը կրել էին մարդկային և նյութական կորուստներ: Սակայն հետագա տարիների ընթացքում հայերն իրենց ջա-

<sup>229</sup> Նույն տեղում:

<sup>230</sup> Նույն տեղում, № 24:

<sup>231</sup> «Ալ-Թակադդում», № 26:

նասիրության ու աշխատանքի շնորհիվ վերականգնում են իրենց տնտեսությունները, լուրջ հաջողությունների հասնում առևտրի և արհեստների բնագավառում<sup>232</sup>: «Արդար քրտինքով ձեռք բերած տնտեսական աճն առաջացրել էր մահմեդական բնակիչների և իշխանությունների դժգոհությունը: Թուրքերը և քրդերը չէին կարողանում հանդուրժել, որ քրիստոնյան գտնվում է բարվոք վիճակում: Այս վերոնշյալ պատճառներն էին այն գլխավոր պայմանները, որոնք կոտորածների պատճառ հանդիսացան»<sup>233</sup>, եզրակացնում է թերթը:

Ադանայի կոտորածի գլխավոր պատճառներն ուսումնասիրելու համար նախ պետք է վերլուծել հայ-թուրքական հարաբերությունները: 1908 թ. հեղաշրջման հետևանքով սահմանադրության վերականգնումը դժգոհություն առաջացրեց թուրք-քրդական բնակչության շրջանում: Նրանք չէին կարող տանել, որ քրիստոնյաները՝ հատկապես հայերը, իրենց նման ունենալու են հավասար իրավունքներ: Եվ իրոք, 1908 թ. վերջին և 1909 թ. սկզբին հայ թուրքական հարաբերություններն այնքան էին սրվել, որ բուպե առ բուպե կարելի էր սպասել ջարդերի բռնկմանը: Կոտորածների պատճառներից էր նաև կրոնամոլությունը, որն օգտագործելով՝ սահմանադրության թշնամիներն առիթը բաց չէին թողնում քրիստոնյաների դեմ հանելու մահմեդական զանգվածին: Զարդարարներն Ադանա քաղաքում շփոթություն ու հուզում

---

<sup>232</sup> Կիլիկիայի պատմական տարածքները 1865 թ. Օսմանյան կայսրությունում կատարված վարչական բարեկարգումների արդյունքում մտնում էին Ադանայի վիլայեթի մեջ, իսկ նրա փոքր մասն ընդգրկված էր Հալեպի վիլայեթի մեջ: 20-րդ դարի սկզբին Ադանայի վիլայեթը համարվում էր Թուրքիայի համեմատաբար զարգացած շրջաններից մեկը, որտեղ կապիտալիստական արտադրանքային անհամեմատ ավելի արագ էր արմատավորում, քան կայսրության մյուս վայրերում: Հայերը կարևոր դեր էին կատարում նահանգի և ընդհանրապես Կիլիկիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով ներքին շուկայում ծավալվող առևտուրը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները և գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը:

<sup>233</sup> «Ալ-Մակադդում», № 26:

առաջացնելու նպատակով կեղծ լուրեր էին տարածում, թե իբր Հաճընի հայերն ապստամբություն են բարձրացրել, գրավել գինանոցը և հարձակվելու են Ադանայի վրա՝ թուրքերին կոտորելու համար: Սպանելով մի թլպատված հայ երիտասարդի՝ ջարդ սանձագերծողները նրան ներկայացնում են որպես հայերի ձեռքով սպանված մահմեդականի, տարածելով նաև, որ քաղաքի այգիներում հայերը տանջամահ են արել մի թրքուհու, կոտորել 5 անձից բաղկացած ընտանիք<sup>234</sup>: Կոտորածների պատճառներին պետք է դասել նաև հայ գաղթական գյուղացիների մի մասի վերադարձը: Բանն այն է, որ 1895-1896 թթ. զանգվածային ջարդերից հետո Կիլիկիայի հարյուրավոր գյուղեր դատարկվել էին ու դարձել թուրքերի, քրդերի սեփականություն: Եվ ահա հեղափոխությունից հետո հայերը սկսել էին վերադառնալ իրենց տները, ինչը հարուցել էր թուրքերի ու քրդերի դժգոհությունը<sup>235</sup>: Կիլիկիայի ջարդերի մեջ չարաղետ դեր խաղաց Ադանայում հրատարակվող «Ալ-Իթիդալ» (Չափավորություն) թերթը: Թերթն իր համարներում հայատյաց հողվածներ էր հրատարակում, որոնք Ադանայի ջարդերի 2-րդ փուլի պատճառներից մեկը հանդիսացան<sup>236</sup>: «Ալ-Իթիդալ» թերթի խմբագիր Իհսան Ֆիքրիի որոշ հոդվածներ լույս են տեսել «Ալ-Թակադդում» թերթի «Բաց գրություն մեծ վեզիրին» վերնագրով հոդվածում: Նրանցից մեկում Իհսանը նշում է. «Ես ի վիճակի եմ ծանրակշիռ ապացույցներ ներկայացնել, որ Ադանայի հայկական կոտորածը տեղի է ունեցել մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի գիտությամբ ու նրա հրամանով, և այն, ինչ գրել է «Ալ-Իթիդալ» թերթն ի վնաս հայերի՝ Ադանայի իշ-

<sup>234</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 27:

<sup>235</sup> Կիլիկիայի կոտորածների սանձագերծման գործում կային նաև երկրորդական պատճառներ: Տես՝ Սիմոնյան Բ., նշվ. աշխ., էջ 28-38:

<sup>236</sup> 1909 թ. ապրիլի 7-ի համարը սովորականից ավելի տպաքանակով լույս տեսավ և անվճար տարածվեց քաղաքում: Համարի էջերը լցված էին հակահայկական հոդվածներով ու նյութերով: Ջարդի ողջ պատասխանատվությունը թերթը բարդում էր հայերի վրա: Տես՝ Սիմոնյան Բ., նշվ. աշխ., էջ 70-72:

խանութան հրամանով է եղել: Իսկ Ադանայի մահմեդական հարուստ աղաները մեղավոր չէին ճանաչում մահմեդականներին, մինչդեռ կոտորածից հետո նրանցից մեկը վերադարձել է Կ. Պոլիս՝ իր հետ բերելով 15000 լիրա գումար: Հիմնական փաստաթղթերը, որոնք ուղարկվել են կառավարությանն այս թեմայով, պահվում են ինձ մոտ, և անհրաժեշտության դեպքում ես կարող եմ ցուցադրել դրանք, ինչպես նաև ապացույցներ, որ բազմաթիվ պաշտոնյաներ մեծ գումարներ են ստացել այս դեպքի առնչությամբ»<sup>237</sup>:

Այս հոդվածները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել և իրականացվել են իշխանությունների կողմից: Պետք է նշել, որ «Ալ-Թակադդումը» այս հարցում հետևողական չի եղել և տպագրել է իրարամերժ հոդվածներ: Մասնավորապես, թերթի «Ֆրանսիա և Թուրքիա» վերնագրով հոդվածը նշում է, որ «1896 թ. ջարդերի և Ադանայի կոտորածի միջև կա տարբերություն: Եթե 1896 թ. ջարդերի ժամանակ կառավարությունը հենց ինքն էր անմիջական կազմակերպիչը, և Աբդուլ Համիդն օգտագործում էր ամեն տեսակի միջոց՝ դրանք իրականացնելու համար, իսկ այստեղ այդպես չէ»<sup>238</sup>: Փաստորեն, հոդվածում անցկացվում է Ադանայի կոտորածների պետական մակարդակով նախօրոք ծրագրված չլինելու միտքը, այնինչ իրականում ոճիրը կանխամտածված, ծրագրված գործողություն էր, որի նպատակը Կիլիկիան լիովին հայաթափելն էր, հայերի հողերին, բնակավայրերին, հարստություններին տիրանալը: Այն 19-րդ դարի վերջերին սկսված ու մինչև 20-րդ դարի 20-ականների սկիզբը տևած ցեղասպանության շղթայի մի փուլն էր հանդիսանում:

<sup>237</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 52:

<sup>238</sup> Նույն տեղում, № 4:

Կոտորածներից անմիջապես հետո Ադանայի վիլայեթի տեղական կառավարությունը ստեղծեց քննիչ հանձնաժողով, որի գործունեությունը իսկական պատուհաս եղավ հայերի համար<sup>239</sup>: Նրա գործունեությունը երկար չտևեց. մեկ ամիս անց նրան փոխարինելու եկան Կ. Պոլսից ուղարկած հանձնախմբերը: Օսմանյան խորհրդարանն Ադանա ուղարկեց քննիչ հանձնախումբ, որի կազմում էր նաև հայազգի պատգամավոր Հ. Պապիկյանը: Սակայն վերջինիս կողմից Ադանայի կոտորածների վերաբերյալ կազմած տեղեկանքը չիրապարակվեց<sup>240</sup>: Կառավարությունն իր հերթին մի ուրիշ հանձնախումբ ուղարկեց, որը եթե սկզբում անկողմնակալ քննություններ էր կատարում, և նրանց ներկայացրած տեղեկությունների հիման վրա պատժվեցին որոշ մուսուլմաններ, ապա ժամանակի ընթացքում այս հանձնախումբը շեղվում է իր ընտրած ճանապարհից ու կոտորածների ամբողջ մեղքը բարդում քրիստոնյաների վրա: Կոտորածի որոշ մեղսակիցների ձերբակալման մասին վկայում է նաև Ադանայի բնակիչներից մեկի գրությունը, որում տեղեկացվում էր քաղաքի (Ադանայի-Մ.Ե.) բնակիչների, այդ թվում «Ալ-Իթիդալ» թերթի խմբագրի և գործքերի նախկին հրամանատարի ձերբակալման մասին: «Քսաներկու մարդ ուղարկվել է Բայաս ամրոց, որոնք դատապարտվելու են ցմահ բանտարկության: Ադանայի քաղաքացիական դիվանի ղեկավարներ Ալի Քուրդ Մուրադի և Ալի Բիք Ֆարինի դեմ, որոնք կասկածվում էին կոտորածի ժամանակ տեղի ունեցած ջարդերի, թալանի և կողոպուտի ակտիվ մասնակցության մեջ, հետաքննություն է սկսվել»<sup>241</sup>: 1910 թ. հունվարի սկզբին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղած նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքն այդ ձերբակալությունները անվանում է ծաղրա-

<sup>239</sup> Սիմոնյան Բ., նշվ. աշխ., էջ 255-256:

<sup>240</sup> Հ. Պապիկյանն իր օբյեկտիվ տեղեկանքի պատճառով սպանվեց Կ. Պոլսում անհայտ չարագործի ձեռքով: Տես՝ Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 306:

<sup>241</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 21:

կան պատիժներ<sup>242</sup>: Անկողմնակալ երևալու կեղծ կեցվածքով մի պահ իշխանությունները փակեցին «Ալ-Իթիդալ» թերթը, սակայն իրականում թերթն անպատիժ մնաց՝ սոսկ ձևի համար փակվեց և վերահրատարակվեց իբրև օրաթերթ: «Ալ-Թակադդումի» «Անթալիայի դեպքեր» վերնագրով հոդվածում տեղեկացվում է քաղաքացիական դիվանի կողմից կոտորածը իրահրելու և նրանում մեծ մասնակցություն ունենալու մեջ մեղադրվող Կուսեյրի Ջադահա Աբդ ալ Սամդ Ալայի ձերբակալման մասին. «Բանտարկվել են Օմար, Ամին, Քաուրշուկ Օսման բեյերը, որոնք թաքցրել են այն մարդկանց անունները, որոնք հարծակվել են պատսպարվող հայերի վրա և կոտորել նրանց»<sup>243</sup>:

Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչությունը 1909 թ. սեպտեմբերի 22-ին և նույն թվականի հոկտեմբերի 25-ին Ադանայի կոտորածների մեղսակիցներին դատապարտելու, Կիլիկիայի հայությանը օգնություն տրամադրելու մասին երկու նամակ ուղարկվեց կայսրության արդարադատության նախարարին: Թեև ի պատասխան այդ նամակների, օսմանյան կառավարությունը խոստացավ որոշ չափով բավարարել հայերի պահանջը (մասնավորապես կախաղան բարձրացվեցին կոտորածի 40 մուսուլման մեղսակիցներ, ազատ արձակվեցին դատապարտված մի քանի հայ հոգևորականներ), սակայն այդ խոստումը գործնական բնույթ չկրեց<sup>244</sup>:

Իր հերթին, ռազմական բարձրագույն իշխանությունն Ադանա ուղարկեց զինվորական սպաներից բաղկացած ռազմական ատյան, որը հենց սկզբից սկսեց խեղաթյուրել ճշմարտությունը, և ինչպես ընդունված էր Թուրքիայում՝ ջարդերի ամբողջ պատասխանատվությունն ու մեղքը ջարդարարները զցեցին զոհերի վրա: Կիլիկիայում սուտ վկայությունների հիման վրա ձերբակալ-

<sup>242</sup> ՀԱՍ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 108:

<sup>243</sup> Նույն տեղում:

<sup>244</sup> Նույն տեղում:

վեցին բազմաթիվ հայեր, ամբողջ թափով սկսեց գործել թուրքական «արդարադատության մեքենան»<sup>245</sup>: Ռազմական ատյանի վճռով Ադանայում կախաղան բարձրացվեցին ինը մուսուլման, իսկ նրանց կողքին վեց հայ, որոնցից երեքը եղբայրներ էին: Նման կերպ դատարանը փորձում էր հավասարակշռություն ստեղծել կողմերի միջև՝ պատժելով երկու կողմերի ներկայացուցիչներին: Կ. Պոլսի հայ մամուլը բողոքի ձայն բարձրացրեց հայերին անարդարացի պատժելու համար: «Ազատամարտը» ևս գրում էր, որ կախաղան բարձրացված հայերն անմեղ անձնավորություններ էին, որոնցից շատերը հարգված մարդիկ էին Ադանայում<sup>246</sup>:

Ուսումնասիրող հանձնաժողովների իրականացրած անարդար ձեռքակալությունների մերկացմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի «Տեղական իրադարձություններ» վերնագրով հոդվածը: Այստեղ նշվում է, որ Հաճնում հայ կաթոլիկների պատրիարքի տեղապահը շարունակում է բանտարկված մնալ Մարաշում, և հետաքննող հանձնաժողովները փոխանակ ուսումնասիրելու սպանություններն ու դատապարտելու իսկական մեղավորներին, դաժանությամբ հարցաքննում են հայերին: «Ջեթունցի մոտ 400 հայ սպանվել են Ադանայի արվարձաններում՝ թողնելով մեծ թվով այրիներ և որբեր: Իսկ Սուեդիայում հայ պատրիարքը նամակ է ուղարկել Բ. Ղռանը, որում խնդրում է ուշադրություն դարձնել Սուեդիայում հայ ազգի դժբախտություններին, և այս վիլայեթի վալի նշանակել այնպիսի մարդու, ով առավել հակված է առաջնորդվել սահմանադրության դրույթներով»<sup>247</sup>: Հոդվածում այնուհետև հաղորդվում է, որ Ալեքսանդրիայում գտնվող Ադանայի հայերի հոգևոր առաջնորդ Մուշեղ

<sup>245</sup> Խառատյան Ա., Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2009, № 1, էջ 6:

<sup>246</sup> «Ազատամարտ», 1909, 25 հուլիսի:

<sup>247</sup> «Ալ-Թակադդում», № 23:

եպիսկոպոսը հայկական թերթերից մեկում ներկայացրել է փաստեր, որոնք ապացուցում են նախկին վալիի և Ադանայի պաշտոնյաների մասնակցությունը տեղի ունեցած հանցագործություններին: Սույն համարում տեղ գտած մյուս կարևոր տեղեկությունը «Իթթիհադ վե թերաքքը» միության՝ «Հնչակյան» կուսակցությանն ուղարկած հրավերի մասին է՝ ներկա գտնվելու սահմանադրության օրվա առթիվ տեղի ունենալիք միջոցառմանը: «Հնչակյան» կուսակցությունը հրավերին պատասխանում է. «Պարոն Բեհաեդդին Շաքիր բեյ, այն վիճակը, որում մենք հայտնվել ենք Ադանայի դեպքերի հետ կապված, թույլ չի տալիս մեզ ներկա գտնվելու այդ երեկոյին»<sup>248</sup>:

Թուրքական «արդարադատությունը» բացի հայերին կոտորածների սկզբնապատճառ համարելուց, նրանց մեղավոր է ճանաչում նաև կատարված բոլոր իրողությունների մեջ: Իշխանությունները սկսում են բանտերը լցնել հայերով՝ շինծու մեղադրելով տարբեր հանցանքների մեջ: Մասնավորապես բանտարկվեցին Հաճնի առաջնորդական փոխանորդ Ներսես վարդապետը, Դեորթ-Յօլի առաջնորդական փոխանորդ Սահակ վարդապետը<sup>249</sup>: Իշխանությունները նույնիսկ բռնի ստորագրություններ էին հավաքում բանտարկված անմեղ հայերից, որտեղ նրանք «խոստովանում էին», որ իրենք են կոտորածների պատասխանատուները<sup>250</sup>:

Կ. Պոլսի հայոց ազգային իշխանությունները, հայկական տարբեր կազմակերպությունների ղեկավարները, մասնավոր անձինք ռազմական ատյանի որոշումներն ապօրինի համարեցին ու բազմաթիվ հեռագրեր հղեցին սուլթանին, մեծ վեզիրին, խորհրդարանի նախագահին, ներքին գործերի նախարարին,

<sup>248</sup> «Ալ-Թակադդում», № 23:

<sup>249</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, ք. 107:

<sup>250</sup> Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Գահիրե, 1909, էջ 4:

բայց այդ բոլոր բողոքները մնացին անպատասխան: 1911թ. նոյեմբերի 25-ին նիստում Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավոր Գ. Ջոհրապը, ելույթ ունենալով Կ. Պոլսի Ազգային Ընդհանուր ժողովում, նշեց, որ Ադանայի կոտորածից հետո օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները բազմաթիվ հարցեր ու դիմումներ բարձրացրեցին խորհրդարանում, որոնց արդյունքում օսմանյան խորհրդարանը Ջեմալ բեյին ուղարկեց էրզրում, Բեքիր Սամի բեյին՝ Վան, Իսմայիլ Հազը բեյին՝ Բաղեշ: «Ասոնց օրով այդ կողմի հայերը քիչ մը հանգստի օրեր ունեցան ու քիչ ժամանակի մեջ տնտեսական զգալի բարվոքում մը տեսնուեցավ»<sup>251</sup>: Նման քայլերով օսմանյան կառավարությունն ուղղակի փորձում էր հայերի ցասումն ու զայրույթը մեղմացնել, և հայերի «տնտեսական փոքր-ինչ վերելքը» խիստ ժամանակավոր էր:

«Ալ-Թակադդումը» իր համարներում անդրադարձել է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքի, Կիլիկիայի կաթողիկոսի բողոքներին, ուղերձներին, հուշագրերին: Թերթի 22-րդ համարում ներկայացվում է Կիլիկիայի կաթողիկոսի՝ օսմանյան խորհրդարանին ուղղած նամակը: Նամակում նշվում էր, որ «դարեր շարունակ հայ ժողովուրդն իր մեծ ներդրումն է ունեցել Օսմանյան կայսրության քաղաքակրթական, տնտեսական, սոցիալական վերելքի մեջ, և այս ամենի դիմաց պարզ և չի ստացել, այլ ցավ, տառապանք, սպանություն, գերեվարություն, ֆինանսների յուրացում և այլն: Հայ ազգը բազմաթիվ անարդարությունների միջոցով անցնելով, իր «նավի» ընթացքն ուղղեց արյունահեղությունից դեպի նոր կյանք և հասավ սահմանադրության «նավահանգիստ»՝ տալով մեծ կորուստներ»<sup>252</sup>: Եվ իրոք, հայ ազգը համոզված էր, որ սահմանադրությունը իրեն կազատի գերությունից, և Օսմանյան կայսրության մահմեդականների նման ինքը ևս կօգտ-

<sup>251</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 25 նոյեմբեր 1911, Կ. Պոլիս, 1911:

<sup>252</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 22:

վի անձի անձեռնմխելիության իրավունքից, սակայն հայերի հույսերը չիրականացան: Բռնությունները, հարձակումները հայերի, նրանց նյութական միջոցների նկատմամբ, դարձան մշտական: «Ղրա վառ ապացույցն Ադանայում տեղի ունեցած կոտորածն էր, որի ընթացքում թուրքերը ոչխարի նման մորթում էին քրիստոնյա քաղաքացիներին, յուրացնում նյութական միջոցները, հրդեհում տները, պատվազրկում աղջիկներին: Քաղաքները, գյուղերը, լեռները պատվել էին տասնյակ հազարավոր դիակներով, որոնք երկնային թռչունների համար սննդի աղբյուր էին դարձել: Նրանք (թուրքերը - Մ.Ե.) բռնաբարում էին հայ կանանց իրենց ամուսինների առաջ, հետո սպանում ամուսիններին կանանց աչքերի առաջ»<sup>253</sup>, - ցավով նշում է կաթողիկոսը: Ադանայի բնակչության 2/3-ի սպանոցից հետո վերջին 1/3-ը մնաց անօրևան, առանց անհրաժեշտ միջոցների: Մոտ 2500-3000 որբ, այրիներ իրենց սփոփում էին սահմանադրությամբ, սակայն հուսախաբ եղան: Նամակի վերջում կաթողիկոսն ասում է. «Եվ ես որպես մի ժողովուրդի հոգևոր հայր, որի մի մասն ազգայնականության զոհ դարձավ, իմ հայոց բողոքի նոտան եմ հղում օսմանյան խորհրդարանին՝ բողոքելով Ադանայի խնդրի անարդարացի դատավարության վերաբերյալ, և համառորեն պահանջում եմ օսմանյան սահմանադրական իշխանությունից, բանակից, յուրաքանչյուր մուսուլման և ոչ մուսուլման հայրենակցից՝ արդարադատություն իրականացնել ու պատժել մեղավորներին»<sup>254</sup>: «Ալ-Թակադդում»-ի մեկ այլ՝ «Բողոքի նոտա» վերնագրով հոդվածում ներկայացված է Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ պատերազմի և ներքին գործերի նախարարություններին հասցեագրված հեռագիրը: Պատրիարքը հայտարարում էր, որ պատերազմական դիվանը կողոպտում, քանդում էր հայերի տները, սպանում

<sup>253</sup> «Ալ-Թակադդում», № 22:

<sup>254</sup> Նույն տեղում:

հարուրավոր հայերի, այդ թվում հոգևորականներին, իսկ կենդանի մնացածները մահանում էին սովից, ծարավից ու թշվառություներից: «Արտակարգ քննող խմբերը չեն բացահայտել Հաճնի 3000 հայերի սպանողներին, սակայն դրա փոխարեն ի դիմաց 4 սպանված մահմեդականի, ձերբակալվեցին և բանտ նետվեցին 130 հայ՝ ենթարկվելով դաժան խոշտանգումների: Եվ քանի որ արդարադատության իրականացումն առանց կողմնապահության հնարավոր չէ, պահանջում են լուծարել արտակարգ քննող խմբերը»<sup>255</sup>: Իսկ մեկ այլ՝ «Գործեր և տխրություն» վերնագրով հոդվածում տեղեկացվում էր առևտրի և հասարակական աշխատանքների նախարար Գ. Նորատունկյանի և Կ.Պոլսի հայոց պատրիարք Դուրյանի հրաժարականների մասին<sup>256</sup>:

«Ալ-Թակադդումը» իր համարներում լուսաբանել է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ տարբեր թերթերին տված հարցազրույցները: Մասնավորապես «Հայոց պատրիարքի հայտարարությունները» վերնագրով հոդվածում ներկայացվում է Դուրյանի՝ թերթերից մեկին տված հարցազրույցը, ուր պատրիարքն իր դժգոհությունն է հայտնում օսմանյան կառավարությանը՝ Կիլիկիայի կոտորածների իսկական մեղսակիցներին չպատժելու համար: Կառավարությունը դատապարտել էր ոճրագործությանը մասնակից որոշ մահմեդականների, մինչդեռ պետք է ուսումնասիրեր և բացահայտեր եղեռնի իսկական մեղավորներին. «Եվ եթե կառավարությունը ցանկանում է ներողություն խնդրել, ապա նա պետք է ամենայն մանրամասնություններով ուսումնասիրի այն գործերը, որոնք ներկայացված են իմ որոշման մեջ և պատ-

<sup>255</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 26:

<sup>256</sup> Առաջինի հրաժարականի պատճառը տարածայնություններն էին «Թանին» թերթի խմբագիր Հուսեյն Ջիհադ բեյի հետ, իսկ Դուրյանի հրաժարականի պատճառը բացատրվում էր նրանով, որ նա բողոքել էր Ադանայում վեց հայերի կախաղան հանելու առթիվ: Տես՝ «Թակադդում», Հալեպ, 1909, № 33:

ժի գլխավոր մեղավորներին»<sup>257</sup>: Այնուհետև պատրիարքն ի պատասխան մեծ վեզիր Հիլմի փաշայի և ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի հայտարարությունների՝ ոչ մահմեդական համայնքների առանձնաշնորհումները չեղյալ հայտարարելու վերաբերյալ, ասում է. «Մինչև վերջ կայաքարենք սուլթան Մեհմեդ Մեծի կողմից մեզ շնորհված առանձնաշնորհումների համար»<sup>258</sup>: Թերթը հաղորդում է, որ Օսմանյան Թուրքիայում քրիստոնյաների գոյությունը կախված էր այս առանձնաշնորհումներից և սրանց չեղյալ հայտարարելը նշանակում էր կայսրությունում քրիստոնյաների բնաջնջման փորձ: Նույն համարում հրատարակված մեկ այլ՝ «Հայոց պատրիարքի բողոքն ու նրա հրաժարականը» վերնագրով հոդվածում ներկայացված է Կ Պոլսի հայոց պատրիարքի՝ մեծ վեզիրին ուղղած բողոքը: Պատրիարքը հայտնում է, որ երբ կառավարությունը տեղեկացավ Ադանայի ողբերգության մասին, հանձնարարեց պատերազմական դիվանին ուսումնասիրել ողբերգության պատճառները, սակայն հետագայում հետաքրքրություն չցուցաբերեց այս հարցում: Ավելին, կառավարությունն ընդունեց որոշումներ, որոնք հակասում էին արդարադատությանը, մարդու իրավունքներին. «Սա մեծ հիասթափություն էր հայերի համար, ովքեր օսմանյան ազգի մի մասնիկն են, ուստի ես ստիպված եմ ներկայացնել իմ հրաժարականը»<sup>259</sup>: «Ալ-Թակադդումը» իր մի քանի համարներում ներկայացնում է ողբերգությունից հետո Կիլիկիայում մնացած հայերի տխուր, անօգնական վիճակը: Մասնավորապես, 50-րդ համարում ներկայացվում է Կիլիկիայի կաթողիկոսի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղարկած նամակը, որում նկարագրվում է Անթիլիասի, Տարսուսի (Տարսոն - Մ.Ե.) բնակիչների տխուր իրավիճակը: Նամակում պատրիարքը պահանջում էր մինչև ձմեռ ան-

<sup>257</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 34:

<sup>258</sup> Նույն տեղում:

<sup>259</sup> Նույն տեղում:

հապաղ միջոցառումներ իրականացնել ժողովրդի տառապանքը թեթևացնելու համար<sup>260</sup>:

Սեկ այլ՝ «Հայերի վիճակը Մարաշում» հոդվածում ներկայացվում է տեղի հայերի առաջնորդի նամակը. «Մարաշում իրավիճակը շատ վատ է, և հայերը վախենում են, որ կոտորածները կարող են կրկնվել»<sup>261</sup>: «Հայկական պատրիարքությունը» վերնագրով հոդվածում էլ նշվում է, որ պատրիարքարանի ժամանակավոր խորհրդի անդամներից բաղկացած պատվիրակությունը, որի կազմում են եղել Հնայակ Իսաքոյանը, Արամ Հալաջյանը, գնացել է ներքին գործերի նախարարի մոտ, որն ասել է, որ արդեն կազմվել է հատուկ հանձնաժողով ուսումնասիրելու Ադանայի դեպքերի հետ կապված փաստաթղթերը: Դրանից հետո խորհրդի անդամները հավաքվել և որոշել են, որ խորհրդի նախագահ Ազարյանը հանդիպի մեծ վեզիրի հետ<sup>262</sup>:

Չնայած հայոց պատրիարքի կողմից ձեռնարկված բոլոր ջանքերին՝ չեղյալ հայտարարել կոտորածներն ուսումնասիրող հանձնախմբերի որոշումները և իրականացնել արդար հետաքննություն, կենտրոնական իշխանությունները որևէ ուշադրություն չդարձրեցին այդ պահանջին: 1909 թվականի հուլիսի 26-ի խորհրդարանի նիստից հետո իշխանությունները մեկընդմիջտ փակեցին Կիլիկիայի կոտորածների խնդիրը:

Կիլիկիայի կոտորածներից հետո Ադանայում և Կիլիկիայի հայկական մյուս բնակավայրերում բազմաթիվ այրիներ և որբեր էին մնացել: 1910 թ. հունվարի 13-ին Հայոց կաթողիկոսին ուղղած նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքը նշում է. «Ամենուրեք թշուառութիւն կը տիրէ: Կարօտեալներու թիւը 80.000 կը հասնի, 10.000 որբ ու այրի անպաշտպան կը մնան»<sup>263</sup>: Կիլիկիա-

<sup>260</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 50:

<sup>261</sup> Նույն տեղում, 1909, № 51:

<sup>262</sup> Նույն տեղում, 1909, № 55:

<sup>263</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, ք. 107:

յի աղետի հետևանքով հազարավոր հայեր որբեր ու այրիներ դարձան, որոնց հոգաժության համար մարդասիրական լուրջ ջանքեր էին պահանջվում: Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում, Կ. Պոլսում, Իզմիրում որբանոցներ հաստատելու ծրագրեր էին կազմվում: Սակայն նկատի ունենալով ներքին սուղ միջոցները՝ Կ. Պոլսի Ազգային ժողովը 1909 թ. մայիսի 8-ի նիստում առաջարկեց Ազգային վարչությանը դիմել օսմանյան կառավարությանը գումար հատկացնել որբանոցի պահպանման ծախսերը հոգալու համար<sup>264</sup>:

«Ալ-Թակադդումը» Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ համարներում մեծ տեղ է հատկացրել կոտորածի ժամանակ հայերի կրած նյութական կորուստների, կոտորածի հետևանքով անօթևան մնացած հայերի, որբերի, այրիների վիճակի նկարագրություններին: «Ալ-Թակադդում»-ի 1909 թ. 6-րդ համարում լույս տեսած «Սգո հավաքույթ Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ «պատրիարքարանը նամակ է ուղարկել Ադանայի եպիսկոպոսին, որում գրված էր, որ իրենց մոտ Ադանայից հանգրվանել են 600 ծնողազուրկ երեխաներ»<sup>265</sup>:

Նույն համարի մեկ այլ՝ «Հայերի պահանջները» վերնագրով հոդվածում տեղեկացվում է, որ Կ. Պոլսում հայկական տնտեսական խորհուրդը հատուկ նիստ գումարեց Ադանայում հայերի նյութական կորուստները ուսումնասիրելու համար: Մտքերի փոխանակումից հետո խորհուրդը որոշեց նամակ ուղարկել սուլթանին: Նամակը պարունակում էր 3 սկզբունքային կետ.

1. Կառավարությունը պետք է իր բոլոր ջանքերը գործադրի ավերված հայկական եկեղեցիները վերակառուցելու համար:

---

<sup>264</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 8 մայիս 1909, Կ. Պոլիս, 1909:  
<sup>265</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 6:

2. Պարզաբանել հայ հոգևորականների կրած տառապանքները, բռնաճնշումները, հալածանքները:
3. Անօգնական վիճակում հայտնված մարդկանց ուշադրություն դարձնել և հնարավոր օժանդակություն ցուցաբերել<sup>266</sup>:

Հայերի նյութական կորուստներն առիելի էին. թուրքերն ու քրդերը թալանել, կողոպտել, ավերել էին տները, խանութները, եկեղեցիները: Հայերի կրած նյութական վնասների իրական չափն իմանալն անհնար է՝ արժանահավատ և լիարժեք սկզբնաղբյուրների բացակայության պատճառով: Այս հարցի վերաբերյալ որոշակի տեղեկություն է պարունակում «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» հոդվածը. «Իսկ ինչ վերաբերում է այրված կամ քանդված եկեղեցիների, տների ու խանութների թվին, ապա այն հասնում է 4823-ի, որից 4437-ը քրիստոնյաների, 386-ը՝ մուսուլմանների սեփականության համարվող շենքեր: 30000 կանայք և երեխաներ, ովքեր ունեին սննդի, հագուստի և առաջնային անհրաժեշտության իրերի կարիք, անօթևան մնացին»<sup>267</sup>: Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը նշում է, որ կոտորածների արդյունքում ավերվեց 6460 տուն, 34 եկեղեցի, 43 հյուրանոցատիպ շենք, 19 դպրոց, ինչպես նաև 7904 հայ երեխա գաղթական դարձավ<sup>268</sup>: Ըստ Ա. Համբարյանի, Ադանայի վիլայեթում թուրք ջարդարարները կործանեցին 2333 տուն, 1429 ամառանոց, 1002 հյուղ, 500 խանութ, 24 եկեղեցի, 23 ջրաղաց, 16 դպրոց, 3 հյուրանոց, 2 գործարան և այլն: Օսմանյան բանկի ոչ լրիվ տեղեկություններով Ադանայի վիլայեթի հայերի նյութական վնասը կազմեց 5 մլն ոսկի<sup>269</sup>: Ս. Պարթևյանի տվյալներով

<sup>266</sup> «Ալ-Թակադդում», № 6:

<sup>267</sup> Նույն տեղում, № 24:

<sup>268</sup> محمد رفعت الامام Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, նշվ. աշխ., էջ 3:

<sup>269</sup> Համբարյան Ա., Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, Պատմաբանասիրական հանդես, Եր., 1988, № 4, էջ 27:

միայն Ադանա քաղաքում ավերվեց 1190 տուն, 5 դպրոց, 6 եկեղեցի, Տարսոնում՝ 800 տուն, Հասան-Բեյլիում՝ 416, Ինջիրլիքում՝ 145, Բեսաբում՝ 1500, Լափաշլիում՝ 120 տուն և այլն<sup>270</sup>:

Կ. Պոլսի Ազգային ժողովի 1909 թ. ապրիլի 24-ի նիստում պատգամավոր Ա. Գասպարյանը, ելույթ ունենալով կոտորածի արդյունքում հայերի կրած նյութական վնասների հարցի շուրջ, Ազգային ժողովին առաջարկեց խորհրդարանական մարմին ձևավորել Ադանայի հայերի անշարժ գույքի վերաբերյալ ապահովագրական ընկերությունների հետ բանակցելու համար<sup>271</sup>: Ազգային ժողովն ընդունեց այս առաջարկը և դիմեց Ազգային վարչությանը՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու: Պատրիարքարանի տվյալներով, Ադանայում հայերն առնվազն 100.000 ոսկուն համարժեք կալվածք և ապրանք ունեին՝ զանազան ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրված, որոնք սակայն մերժում էին փոխհատուցել հայերի կրած վնասները<sup>272</sup>:

Որբերի<sup>273</sup>, այրիների հոգածության խնդիրն ամբողջովին ընկած էր Կ. Պոլսի հայկական կազմակերպությունների, Հայկական բարեգործական ընդհանուր միության ուսերին, որոնց ջանքերով բացվեցին մի շարք որբանոցներ Կիլիկիայի հայկական բնակավայրերում: 1500 հայ որբեր իրենց ապաստանը գտան Միջագային Նպաստի և Կիլիկիայի որբախնամ հանձնաժողովների ջանքերով Հաճնում, Դեորթ-Յոլում, Այնթափում և Մերսինում բացված որբանոցներում<sup>274</sup>:

Կիլիկիայի կոտորածներից, ինչպես նաև դրան հաջորդած սովի և հիվանդությունների հետևանքով կիլիկիահայության թիվը

<sup>270</sup> Պարթևյան Ս., Կիլիկիոյ արհավիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 40:

<sup>271</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 24 ապրիլ 1909, Կ. Պոլիս, 1909:

<sup>272</sup> Նույն տեղում:

<sup>273</sup> Նրանց թիվը հաշվվում է 10000, որոնցից 2000 միայն Ադանա քաղաքում: Տես՝ Սինոնյան Հ., նշվ. աշխ., էջ 322-325:

<sup>274</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 107:

պակասեց 30-35 հազարով: Սակայն հայերի ողբերգությունը դրանով չսահմանափակվեց. կոտորածներին հաջորդեց գաղթը: Դեռևս Ադանայի առաջին ջարդից հետո (1909 թ. ապրիլի 1-3) հայության մի մասը, երկյուղելով նոր ջարդերի սպառնալիքից, բռնեց գաղթի ճանապարհը՝ փրկություն որոնելով Եգիպտոսում, Կիպրոսում, Մերսինում և այլուր: Միայն Ադանա և Տարսոն քաղաքներից Կիպրոս գաղթածների թիվն անցնում էր 2000-ից: Սակայն նահանգային իշխանությունը շուտով արգելեց գաղթը՝ կարծես վախենալով, թե «երկրորդ ջարդին ենթարկվելիք մարդ մը չը պիտի մնա»<sup>275</sup>: Ապրիլի երկրորդ կեսին եվրոպական նավերով միայն Բեյրութ էր փախել 5000 հոգի, նույնքան հայ էլ՝ դեպի Կիպրոս, մոտ 3000 փախստական հանգրվանել էր Եգիպտոսում: «Ալ-Թակադդումը» Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ մնացած համարներում իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է կոտորածի հետևանքով առաջացած հայկական գաղթի նկարագրություններին: «Հայերի գաղթը» վերնագրով հոդվածում նշվում է, որ Ամերիկայի, Եգիպտոսի հայ հարուստների մի խումբ հատկացրել է մեկ միլիոն լիրա օսմանյան կայսրությունից դեպի օտար երկրներ՝ հատկապես Արգենտինա գաղթած հայերին օգնություն տրամադրելու համար<sup>276</sup>: Մեկ այլ՝ «Իրավիճակն Ադանայում» հոդվածում տեղեկացվում է, որ 26000 հայ գտնվում է խղճուկ վիճակում և օգնության կարիք ունի: Նրանցից 6000 այրի են, իսկ Գոզանում 400 ընտանիք կացարան չունի: Նույն վիճակն է Քեսաբում (1000 ընտանիք), Դեորթ Յօլում (500 ընտանիք), Բադիջահում (800 ընտանիք). «Վերջին երեք ամիսներում ավելացել է մահացածների թիվը, շարունակվում է արտագաղթը, և մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում 4000 մարդ արտագաղթել է դեպի արևմտյան պետություններ: Պատրիարքարա-

---

<sup>275</sup> Աշճեան Հ., նշվ. աշխ., էջ 23:

<sup>276</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 20:

ընդ եզրիպտոսից նամակ է ստացել Կահիրեում ու Ալեքսանդրիայում Ադանայից մոտ 900 գաղթական գտնվելու մասին, և նրանք չեն համարձակվում վերադառնալ Ադանա: Միաժամանակ իրավիճակն Ադանայում վատթարանում է. արդեն տարածվում են մի շարք հիվանդություններ, և անհրաժեշտ է անհապաղ հիվանդանոցներ կառուցել ու ժողովրդին օգնություն ցուցաբերել»<sup>277</sup>:

Պետք է նշել, որ օսմանյան իշխանությունները որոշ մահմեդականների «պատժելուց» բացի որոշակի օգնություն՝ մոտ 20000 ոսկի տրամադրեցին Կիլիկիայի բնակչությանը՝ նրա կյանքը բարելավելու համար: Սակայն այդ օգնության գումարները բաշխվում էին շատ անարդար. մեծ մասը հատկացվում էր ապանված մահմեդականների ընտանիքներին, ինչպես նաև օգնության բաժանման ընթացքում կատարվում էին լայնածավալ զեղծումներ<sup>278</sup>: Կոտորածներին հաջորդած ամիսների ընթացքում Կիլիկիայում հայերը շարունակում էին գտնվել ծանր պայմաններում, ինչը վկայում են նաև «Ալ-Թակադդում» թերթի հոդվածները: «Իրավիճակն Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ Ադանայում իրավիճակը չի բարելավվել, խոստացված բարենորոգումները չեն իրականացվել: Բանտարկված հայերը շարունակում են մնալ բանտերում՝ ենթարկվելով տարբեր տեսակ զրկանքների: Ադանայի նախկին վալի Ջևադ բեյը և նախկին գորահրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան, ովքեր մասնակցություն ունեն Ադանայի ողբերգության մեջ, անհոգ թափառում են: «Ինչ վերաբերում է քանդված, ավերված տներին, ապա հարյուրավոր տներ քանդված են մնում, իսկ հարյուրավոր մարդիկ՝ անօթևան»<sup>279</sup>: Մեկ այլ հոդվածում ասվում է, որ «հայերի գաղթը շարունակվում է, և չկա մի հուսադրող բան, որը հետ կանգնեցնի բնակիչներին հայրենիքը լքելու մտքից:

<sup>277</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 29:

<sup>278</sup> «Դաշիմք», Իզմիր, 10 ապրիլի, 1910:

<sup>279</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 37:

Յուրաքանչյուր օր մեծ թվով հայ երիտասարդներ Մերսինից մեկնում են դեպի Ամերիկա»<sup>280</sup>: 49-րդ համարում ներկայացվում է Կ.Պոլսի հայոց պատրիարքի այցն Իսթենդերուն, Անթալիա, Ադանա, ուր ամենուրեք բնակիչները բողոքում էին, որ օգնություն չեն ստացել: «Ամենաժանր դրությունն Իսթենդերունում է, ուր օգնության տրամադրումը դադարեցվել է, և վիճակն ավելի է բարդացել»<sup>281</sup>:

Կիլիկիայի ջարդերի վերաբերյալ վերջին՝ «Հալեպի ու Ադանայի կոտորածների պատճառով բանտարկվածների համաներումը» վերնագրով հոդվածը «Ալ-Թակադդում» թերթում տպագրվում է 1910 թ. 209-րդ համարում, որում տեղեկացվում է Ադանայի և Հալեպի վիլայեթների կոտորածների կապակցությամբ պատերազմական ատյանի կողմից ցմահ և 15 տարվա ազատազրկման դատապարտված 36 անձանց համաներման մասին<sup>282</sup>: Ինչպես նշեցինք, Կիլիկիայի կոտորածները հետաքննող խմբերի ներկայացրած օսմանյան տվյալների հիման վրա պատժվեցին որոշ մուսուլմաններ, սակայն ջարդարարների մեծ մասը մնաց ազատության մեջ. դատապարտվեց ընդամենը 200 մարդ, որոնց մեծ մասին շուտով ներում շնորհվեց, իսկ բանտերում մնացածները, ինչպես նշվում է հոդվածում, ազատվեցին 1910 թ. դեկտեմբերի 20-ի ընդհանուր համաներմամբ:

Փաստորեն, Կիլիկիայի 1909 թ. ապրիլյան կոտորածի հեղինակները մնացին անպատիժ:

Այսպիսով, «Ալ-Թակադդում» թերթը հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածների հետ կապված տարբեր խնդիրների լուսաբանմանը: Ճիշտ է, թերթը որպես կոտորածների գլխավոր պատճառ նշում է տնտեսական գործոնը, սակայն միաժամանակ հայտնում է, որ

<sup>280</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 47:

<sup>281</sup> Նույն տեղում, № 49:

<sup>282</sup> Նույն տեղում, 1910, № 209:

կոտորածների հրահրման գործում առաջնային դեր են ունեցել օսմանյան իշխանությունները: Կարծում ենք, որ Կիլիկիայի հայերի կոտորածն իր հիմքում ուներ քաղաքական հին պատճառը՝ հայերին բնաջնջելը, որպես Օսմանյան կայսրության ամբողջականության ապահովման հրեշավոր փաստարկ և պետական քաղաքականություն: Տնտեսական պատճառն այստեղ ուներ երկրորդական, գայթակղիչ և հրահրող նշանակություն:

Կիլիկիայի 1909 թ. կոտորածները ևս մեկ անգամ ապացուցեցին, որ թուրք էթնոսի մոտ՝ անկախ նրա պետական կառավարման ձևից, լինի միապետություն, կամ իթթիհադական, կամ հանրապետական վարչակարգ, մնում է այլազգիների ու այլակրոնների նկատմամբ թուրքերի գերակայության զգացումը, ինչը ժամանակի ընթացքում կարող է բերել նոր կազմակերպված կոտորածների:

Կիլիկիայի կոտորածը խոր հետք թողեց արևմտահայերի հասարակական գիտակցության վրա: Այս կոտորածից հետո ձևավորվում է հանրային կարծիք երիտթուրքերից սպասվելիք աղետների և հայերի դեմ իշխանության առավել լայնածավալ գործողությունների մասին: Սակայն ազգի ներքին պառակտումների պայմաններում ամեն ինչ չարվեց աղետին դիմակայելու համար:

## 2.4. Հայ-քրդական հարաբերությունների լուսաբանումը (1910-1913 թթ.)

Հայ և քուրդ ժողովուրդների պատմական կապերն ու առընչությունները դարերի պատմություն ունեն: Ապրելով մերձավոր հարևանությամբ՝ այս երկու ժողովուրդները պատմական զարգացման ընթացքում ունեցել են բազմաթիվ ընդհանրություններ: Նախ երկու ժողովուրդներն էլ դարեր շարունակ զուրկ են եղել պետականությունից և կրել են միևնույն օտար՝ պարսկական,

բյուզանդական, արաբական, սելջուկյան, մոնղոլական, օսմանյան լուծը: Բացի այդ՝ Արևմտյան Հայաստանը և քրդաբնակ շրջաններն իրենց աշխարհագրական դիրքի պատճառով մշտապես գտնվել են ավերիչ արշավանքների, պատերազմների թատերաբեմում:

Արևմտյան Հայաստանում քրդերը սկսել են հաստատվել 7-րդ դարում արաբական արշավանքների ժամանակ<sup>283</sup>: Աղբյուրների վկայությամբ 11-13-րդ դարերում՝ սելջուկյան և մոնղոլական արշավանքների ժամանակ, քրդական ավազանու մի մասը, ծառայության մեջ մտնելով նրանց մոտ, Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում հողային տիրույթներ ստացավ, որտեղ հետագայում ստեղծվեցին քրդական ցեղային կիսանկախ միավորներ, որոնցից էին Բիթլիսի, Սասունի, Ախլաթի և այլ ցեղային միավորումներ: Հայաստանի տարածքում քրդերը սկսել են մեծ թափով հաստատվել 15-16-րդ դարերում թուրք-պարսկական պատերազմների հետևանքով<sup>284</sup>:

Օսմանյան պետության տիրապետության տակ հայ և քուրդ ժողովուրդները կողք կողքի ապրեցին ավելի քան հինգ դար, որն եղավ նրանց պատմության ամենամռայլ էջերից մեկը: Հայտնի է, որ օսմանյան պետության քաղաքականության անկյունաքարը եղել է իր տարածքում բնակվող ժողովուրդների հրահրումը միմյանց դեմ: Քրդական ցեղերը, օսմանյան կառավարությունից ստանալով «կանաչ» լույս, անխնա բռնությունների էին ենթարկում հայ ժողովրդին՝ տիրանալով նրանց տիրույթներին և ունեցվածքին: Քրդական վայրագությունների լուսաբանմանն անդրադարձել է նաև «Ալ-Թակադդում» թերթն իր բազմաթիվ

<sup>283</sup> Իհարկե չի բացառվում, որ մինչ այդ եղել են Հայաստանի տարածքում քրդական ցեղեր Տես՝ Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Турции, т. 1, ч. 1, СПб, 1888, с. 78-82.

<sup>284</sup> Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, էջ 11-25:

համարներում: Հայ-քրդական խնդիրների լուսաբանման մասին է «Ալ-Թակադդում»-ի «Հայկական հարցը» վերնագրով հոդվածը, որում ներկայացվում է «Ժեռն Թուրք» թերթի քաղաքական խմբագիր և տնօրեն Զալալ Նուրի բեյի՝ թերթի վերջին համարներից մեկում տված հարցազրույցը հայ-քրդական խնդիրների մասին: Հոդվածը պարունակում է օգտակար բազմազան տեղեկություններ այս խնդրի վերաբերյալ: Հայերի նախասահմանադրական վիճակը նկարագրելուց հետո հոդվածագիրը նշում է, որ հայկական տուժած համայնքը նախորդ դարից մինչև ապրիլի 14-ի դեպքերը՝ Ադանայի կոտորածը, իրավունք ուներ վայելելու հովանավորություն, հարգանք ու հոգատարություն կառավարության կողմից, սակայն սուլթան Աբդուլ Համիդն իր բիրտ քաղաքականությամբ բաժանում էր հայերին կայսրության մյուս ազգերից: «Մենք չենք ցանկանում դիտարկել պատմությունը այս հոդվածով, դա պատմաբանի աշխատանքն է: Բայց խնդրի բուլոր կողմերին ծանոթանալու համար անհրաժեշտ է ներկայացնել համիդեական գործիչների գործելակերպը վերոնշյալ ժամանակահատվածում»<sup>285</sup>, - նշում է հոդվածագիրը: 20-րդ դարի սկզբին հայերը դիտարկվում էին հակակառավարական լուրջ զանգված, որն աշխույժ էր ու գործունյա: Հայերին ծանր վիճակում դնելով՝ իշխանությունը խախտում է հասարակական կարգն ու կանոնը: Մի վայրից մյուսը տեղափոխվող հայ ճանաչված գործիչներին հետևում էին մի խումբ լրտեսներ, իսկ հասարակ բնակչության ներկայացուցիչներին վերահսկում էր ոստիկանությունը: Նրանք գամվում էին հողին՝ որպես ծառա: «Եթե հայերը ցանկանում էին ճանապարհորդել կամ ժամանակավորապես տեղափոխվել Եվրոպա կամ Ամերիկա, ապա պարտավոր էին դիմում ներկայացնել, որ այլևս չէին վերադառնալու Օսմանյան կայսրություն և ստիպված պետք է խզեին հարաբերություններն ու լուծարեին

<sup>285</sup> «Ալ-Թակադդում», 1911, № 219:

բոլոր գործարքները: Եթե դիմումը չէր լինում, ապա դժբախտների ունեցվածքը խլվում էր առանց դատ ու դատաստանի: Նմանատիպ կոպիտ վարվելակերպը նպատակ ունեւր օսմանահպատակ ժողովուրդներից մեկին վերացնել խաղաղ ճանապարհով: Նույնիսկ եթե Նյու Յորքում ապրող կամ ժամանակավորապես տեղափոխված հայը հոգում էր ընտանիքի օրավարձի ապրուստը, ապա Վանում կամ Բիթլիսում նրա ունեցվածքը ենթարկվում էր յուրացման կամ կողոպուտի: Տունն իր հողով ու գույքով տրվում էր կովկասցի փախստականներին՝ քրդերին, չերքեզներին, ովքեր հայկական վիլայեթներ էին տեղափոխվում օսմանյան կառավարության ցանկությամբ»<sup>286</sup>, - նշում է հողվածագիրը:

Սեօ աշխատանք էին կատարում քրդական բեյներն ու սպաները, ովքեր անկանոն կերպով հարձակումներ էին իրականացնում հայկական գյուղերի վրա և թալանում դրանք: Մի շարք վայրերում քուրդ աղաները հայ գյուղացիներին վերաբերվում էին որպես ճորտերի: Նրանք հայ գյուղացիներին լծում էին սահնակներին կամ սայլերին, իսկ իրենք, բազմելով դրանց վրա, քշում էին: Չմռանը ստիպում էին գյուղացիներին հեռավոր լեռներից իրենց անասունների համար շալակած խոտ բերել<sup>287</sup>: Այդ երևույթը գլխավորապես տարածված էր հայերով և քրդերով բնակեցված երգրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ ու Սեբաստիա նահանգներում: Նրանց իրականացրած մշտական թալանն ուղեկցվում էր պետական գանձարան մտնող եկամուտների նվազմամբ, քանի որ հայ գյուղացիները չէին մշակում իրենց բարեբեր հողերը՝ վախենալով, որ դրանց բերքը դառնալու էր քրդական համիդիե գնդերի ավարը: Այսպիսի քաղաքականություն էր իրականացնում կարմիր սուլթանն Արևմտյան Հայաստանի նահանգներում: Այս առնչությամբ հողվածագիրն ընդ-

<sup>286</sup> Նույն տեղում:

<sup>287</sup> Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, Եր., 1991, էջ 177:

գծում է, որ կառավարությունը բազմաթիվ գործերի և զանազան խնդիրների առկայության պայմաններում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձներ այս հարցի վրա և «հարվածեր համիդիեականների ձեռքերին»: Նոր Թուրքիայի համար վայել չէր նմանատիպ վայրագությունը, քանի որ այն որդեգրել էր հավասարության, եղբայրության և ազատության սկզբունքները: Սակայն թշնամանքը գալիս էր պատմության խորքից և նոր շրջանում եղբայրության հասնելը առաջ էր քաշում միջնադարյան՝ համեմատաբար նորմալ իրավիճակի վերականգնման անհրաժեշտության հարցը: Գանձարանի ձեղքվածքները փակելու և օտար պետությունների ուշադրությունը չհրավիրելու համար կառավարությունը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեր իր իսկ բարօրության համար: «Այդ տարածքում կարգուկանոնի և անվտանգության հաստատումը պետք է համապատասխաներ ժամանակի և երկրի պահանջներին: Դրանց բախտը չպետք է տրվեր համիդիե ջոկատների քմահաճույքին: Հետևաբար մենք պետք է ամեն ինչ անենք հայկական համայնքի բարօրության համար, քանի որ այն, ինչպես նշեցինք, արժանի է հարգանքի ու հատուկ վերաբերմունքով հովանավորության: Ինձ համարելով թուրք օսմանցի՝ պարտավոր եմ համարում ասել ճշմարտությունն այնպես, ինչպես կա: Կառավարությունը պետք է հատուցի իր կատարած սխալների համար»<sup>288</sup>, - ավելացնում է Ջալալ Նուրի բեյը:

1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցին վերջ տալու նպատակով Օսմանյան սուլթանը Հայաստան անունն որոշեց ընդհանրապես չօգտագործել պաշտոնական փաստաթղթերում՝ այն անվանելով Քուրդիստան: Ինչպես նաև ցույց տալու համար, որ Արևմտյան Հայաստանի տարածքում, իբր, հայերը ոչ մի վայրում մեծամասնություն չեն կազմում, սուլ-

<sup>288</sup> «Ալ-Թակադդում», № 219:

թանը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո երկրի վարչական կառուցվածքը ենթարկեց էական փոփոխության, որի նպատակն էր ցույց տալ մահմեդական բնակչության գերակայությունը հայերի նկատմամբ<sup>289</sup>: Դրանով ավելի սրվեցին հայքրդական հարաբերությունները: Այդ քաղաքականության ազդեցության պատճառով է, որ «Ալ-Թակադդում» թերթն իր համարներում հայերով բնակեցված վայրերը՝ այսինքն Արևմտյան Հայաստանը, անվանում է Արևելյան Անատոլիա, երբեմն էլ Քուրդիստան: Այսպես, «Տեղեկություն Անատոլիայից» վերնագրով հոդվածում նշվում է, որ Քուրդիստանում երեք ազգ է ապրում. «Նրանք են քրդերը, ովքեր թվաքանակով ամենամեծն են, թուրքերը, ովքեր քիչ թվաքանակ են կազմում և հայերը, ովքեր իրենց թվաքանակով երկրորդն են քրդերից հետո: Նրանցից ամենաքաղաքակիրթը հայերն են, ովքեր հնուց ի վեր զբաղվում էին գիտությամբ, հմուտ էին առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: Այս բնագավառում քրդերը զիջում էին հայերին»<sup>290</sup>: Իսկ «Հայերը» վերնագրով հոդվածում խոսվում է հայի արժանիքների մասին: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ հայերեն լեզուն չէ, որ պաշտպանում է հայերին և ապահովում վերջիններիս գոյությունը, այլ նրա ազգային գիտակցությունը: «Առաջինը, որ հայը սովորեցնում է իր որդուն՝ հայոց լեզուն է, որն ուսուցանվում է ամենայն մանրամասնությամբ՝ դրա համար չխնայելով ոչ մի արժեքավոր բան կամ հարստություն, և այս առումով հայերը դիտվում են Հալեպի բնակիչներից ամենաընտրյալները: Այս քաղաքի ամենահայտնի բժիշկները, ամենահմուտ նկարիչները, դերձակները, ոսկերիչները և արհեստավորներն այսօր հայերն են»<sup>291</sup>, - հիացմունքով նկատում է հոդվածագիրը: Այնուհետև թերթն ավելացնում է, որ հայերը հաջողություններ են

<sup>289</sup> Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 129:

<sup>290</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 118:

<sup>291</sup> Նույն տեղում, 1911, № 219:

ունենում գիտության տարբեր բնագավառում: Այդ է պատճառը, որ նրանք համարվում են կրթության և գիտության մեջ առաջատար դիրք զբաղեցնող ժողովուրդ և իրենց բնատուր ձիրքի շնորհիվ արժանիորեն պատվավոր տեղ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության հպատակների մեջ: Հայերն առանձնանում էին իրենց խելքով և աշխուժությամբ: Նրանց առանձնահատկություններից են քաջությունը, արիությունը, առաջադիմությունը, համբերությունը: Համիդյան շրջանում իրենց դեմ ցուցաբերված վատ վերաբերմունքին ի պատասխան՝ հայերը հիմնում են հեղափոխական խմբակներ և մասնակցություն ունենում օսմանյան մեծ հեղափոխությանը: «Հայերը մշտապես գնում են պարբերականներ ու թերթեր, ակտիվորեն մասնակցություն ունենում դրանց աշխատանքի մեջ: Հազիվ թե գտնվի մի հայ, որը թերթ կարդացած չլինի, ինչպիսին էլ լինի նրա կարգավիճակը: Եվ եթե այս նահանգի արաբներն էլ նմանապես կարդային թերթեր ու ամսագրեր, ինչպես հայերը, Հալեպում կտպագրվեին թերթեր»<sup>292</sup>, - նկատում է հոդվածագիրը:

Թերթը հաճախ է անդրադարձել հայ-քրդական հարաբերությունների լուսաբանմանը: Մասնավորապես, «Հայերը և քրդերը» վերնագրով հոդվածում տեղեկացվում է, որ երկու ազգերի միջև թշնամություն գոյություն ունի հնուց ի վեր, և հայերի վերջին կոտորածներին՝ 1890-ական թվականներին և 1909 թ., քրդերը նույնպես ակտիվ մասնակցություն են ունեցել: «Անընդհատ լուրեր ենք ստանում հայ-քրդական բախումների մասին, և օսմանյան կառավարությունը պետք է իր բոլոր ջանքերը գործադրի այս երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող թշնամության և ատելության պատճառները, հատկապես կրոնական անհանդուրժողականությունը վերացնելու համար»<sup>293</sup>, - գրում է թերթը:

---

<sup>292</sup> «Ալ-Թակադդում», № 219 :

<sup>293</sup> Նույն տեղում, № 220:

Հայ-քրդական հարաբերություններն ավելի սուր բնույթ ստացան Աբդուլ Համիդի կառավարման տարիներին, որը քրդերի միջոցով իրականացնում էր հայահալած քաղաքականություն<sup>294</sup>: Հայերի գլխին իսկական պատուհաս դարձան 1891 թ. ստեղծված համիդիե գնդերը, որոնք ծառայում էին օսմանյան պետության ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին քաղաքական խնդիրների համար: Այդ գնդերը կազմվեցին բացարձակապես քրդերից, որոնց համար ատելի էր կանոնավոր բանակում ծառայելը, բացի դրանից, նրանք այժմ ծառայելու էին իրենց հարազատ վայրերում ու օգտվելու էին մի շարք արտոնություններից<sup>295</sup>: Օսմանյան զորքերը համիդիե գնդերի մասնակցությամբ մինչև 1908 թ. կոտորում և կողոպտում էին հայերին, որի գագաթնակետը եղան 1895-1896 թթ. հայերի զանգվածային ջարդերը, որին զոհ գնաց ավելի քան 300000 հայ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և 1876 թ. սահմանադրության վերականգնումը մեծ հույսեր արթնացրեց բռնատիրության լուծը ճաշակած ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի շրջանում: Արևմտահայությունը սկսեց մտածել, որ հայ-քրդական, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունները մտնում են որակական նոր փուլ: Դրան նպաստեցին երիտթուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումները: Նախ, կառավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց քուրդ ավատատերերի դիրքը թուլացնելու նպատակով: Այնուհետև 1908 թ. սեպտեմբերին հրաման արձակեց համիդիե գնդերի զինաթափման և ցրման համար, ինչպես նաև ընդունվեց օրենք ոչ մահմեդականների զինակոչման մասին<sup>296</sup>: Երիտթուրքական կառավա-

<sup>294</sup> Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989, էջ 160-220:

<sup>295</sup> Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Եր., 1999, էջ 376-377:

<sup>296</sup> Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 262:

րությունը չեղյալ հայտարարեց նաև քաֆիրության (ոչ մահմեդականների) տուրքը և քուրդ ավատատերերի օգտին կատարվող անվճար աշխատանքը<sup>297</sup>: Այս միջոցառումները դժկամությամբ ընդունվեցին քուրդ ավատատերերի կողմից, և խռովությունների պատճառ հանդիսացան: Արդյունքում քրդական որոշ ցեղեր մեկնեցին Իրան և սկսեցին փնտրել Ռուսաստանի հովանավորությունը, ինչը ստիպեց երիտթուրքական կառավարությանը՝ դիմել զիջումների. դադարեցվեց համիդիե զնդերի զինաթափումը, երիտթուրքերը սկսեցին սիրաշահել քրդական վերնախավին: Հայ ժողովուրդը նոր էր սկսել վերականգնել իր տնտեսությունը, երբ նորից կանգնեց հուսահատության եզրին և համոզվեց, որ երիտթուրքերը շարունակում են Աբդուլ Համիդի գործը՝ հատկապես 1909 թ. ապրիլին կիլիկիահայոց կոտորածներից հետո:

Իրանից վերադառնալով՝ քրդերն ավելի դաժան հալածանքների են ենթարկում հայերին 1910-1912 թթ.: Թուրքական իշխանությունները համարյա ամենուրեք նորից սկսեցին հրահրել քրդերին հայերի դեմ՝ քարոզելով, որ հայերը ձգտում են «ոտնատակ անել» շարիաթը, բռնագրավել մահմեդականների ունեցվածքը<sup>298</sup>: «Ալ-Թակադդումն» իր համարներում մեծ տեղ է հատկացրել այս շրջանում քրդերի՝ հայերի նկատմամբ իրականացրած վայրագությունների լուսաբանմանը: Մասնավորապես «Հայերը բողոքում են և պահանջում իրենց բռնագրավված ունեցվածքը» հոդվածում ներկայացվում է, որ Շեր սանջակից Կ.Պոլիս պատվիրականություն է մեկնել՝ կառավարությանը բողոքելու, թե ինչպես են գավառի բեյերն ու աղաները կողոպտում և թալանում իրենց ունեցվածքը: Այս սանջակում կար 60-ից ավելի գյուղ՝ 25000 բնակչությամբ, որոնց մեծամասնությունը հայեր էին: Այս-

<sup>297</sup> Ճիշտ է, երիտթուրքական կառավարությունը պաշտոնապես վերացրեց քաֆիրությունը, բայց գործնական քայլեր չկատարեց այն կենսագործելու ուղղությամբ:

<sup>298</sup> Պողոսյան Ս. Կ., նշվ. աշխ., էջ 180:

տեղ նրանք զբաղվում էին գյուղատնտեսությամբ. մշակում էին իրենց հողերը, կառուցում տներ, ջրաղացներ և այլն: 19-րդ դարի վերջերին այս սանջակ եկան երկու քուրդ աղա՝ Օմարը և Հուսեյնը՝ իրենց հետ բերելով մինչև աստամները զինված մեծ թվով հետևորդների, որոնք իսկական պատուհաս դարձան տեղի հայ բնակչության համար: Քուրդ աղաները սպառնալիքի ու վախի պայմաններում շահագործում էին հայերին, բռնազավթում նրանց հարստությունները, ենթարկում բռնությունների՝ օգտվելով կառավարության բարձիթողի վիճակից: Այս շրջանում աղաները հայերի հետ վարվում էին այնպես, ինչպես ցանկանում էին: «Այս աղաները մինչև սահմանադրության ընդունումը հայերին վերաբերվում էին ստրուկի նման՝ նրանց բռնի աշխատացնելով այն հողերում, որոնք պատկանում էին հայերին (մարաբայի ինստիտուտը-Մ.Ե.), և հայերը բողոքելու բառ անգամ չէին կարող ասել: Իսկ եթե փորձում էին բողոքել, ապա ենթարկվում էին դաժան խոշտանգումների»<sup>299</sup>, - նշում է հողվածագիրը: Այսպիսով, այս աղաները ստրկության շղթա էին փաթաթել հայերի վզին՝ աջակցություն ստանալով կառավարության պաշտոնյաներից: Սահմանադրության ընդունումից հետո որոշ հույսեր արթնացան, որ արդարություն կհաստատվի երկրամասում, և մեղավորները կպատժվեն: Հայերը սահմանադրության ընդունումից հետո որոշեցին պահանջել իրենց ունեանալիքի իրավունքների վերականգնումը՝ իրենց ծեռքերում ունենալով բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում էին այդ հողերի, դաշտերի, տների, ջրաղացների՝ իրենց պատկանելու փաստը: «Տարօրինակ էր, որ մինչև հիմա հայերը վճարում են ամիրական (տեղական) հարկը: Եվ երբ հայերը պահանջում էին հարգել իրենց իրավունքը, քուրդ աղաներն ավելի էին ուժեղացնում ճնշումները՝ պաշտպանություն ստանալով Կոստանդնուպոլսից (այս աղաները պաշտպա-

<sup>299</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 122:

նություն էին ստանում նույնիսկ օսմանյան խորհրդարանի որոշ պատգամավորներից)<sup>300</sup>: Չբավարարվելով սրանով՝ խորհրդարանը (պառլամենտը) որոշումներ էր հրապարակում, որոնցում օրինականացնում էր աղաների իրավունքները հայկական հողերի և մյուս ունեցվածքների նկատմամբ՝ հայերին ստիպելով երեխաների հետ հեռանալ իրենց իսկ կառուցած տներից»<sup>301</sup>, հաղորդում է թերթը: Եվ ահա այս տխուր վիճակն էր (որի պայմաններում ապրում էին 25000 մարդ) ստիպել հայերին գնալ Կոստանդնուպոլիս՝ կառավարությունից պահանջելով արդարություն հաստատել այդ շրջանում: Հոգվածը նաև հաղորդում է, որ անարդարություն կատարելու, ժողովրդին ճնշման ենթարկելու մեջ առավել շատ աչքի էին ընկնում Օսման, Արսազան, Շարիֆ, Ահմադ բեյերը, որոնցից յուրաքանչյուրը տասնհինգ տարի ազատազրկման էին ենթարկվել Աբդուլ Համիդի կառավարության ժամանակ՝ տարբեր հանցագործություններ կատարելու համար և ազատ արձակվել մեկ տարի առաջ համաներման արդյունքում: Եվ եթե կառավարությունը հայերի նկատմամբ բարեգուրվարվեր, ապա այս աղաներն էլ այդպես կվարվեին ու չէին շարունակի անարդարություն գործել՝ հենվելով Կոստանդնուպոլսում ազդեցություն ունեցող իրենց հետևորդների վրա. «Եվ այժմ մենք եկել ենք այստեղ մեր ծայնը բարձրացնելու, սակայն մեկը չկա, որ լսի մեզ, օգնության գա տխուր վիճակում գտնվող մարդկանց, որոնք մեծ հույս են կապում սահմանադրական կառավարության հետ: Մի քանի օր առաջ մենք մեր բողոքը գրավոր ձևով ներկայացրել ենք մեծն սուլթանին և ներքին գործերի նախարարին»<sup>302</sup>:

---

<sup>300</sup> Նրանք սկսում էին դաժանորեն ճնշել հայերին, նույնիսկ արգելելով հացահատիկ մշակել իրենց հողերում:

<sup>301</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 122:

<sup>302</sup> Նույն տեղում:

Քրդական վայրագություններին վերջ տալու համար հայոց պատրիարքարանը, Արևմտյան Հայաստանի նահանգների հոգևոր առաջնորդները բազմիցս նամակներ, պատվիրակություններ են ուղարկել Բ. Դուռ՝ օսմանյան կառավարությունից պահանջելով վերջ դնել քուրդ ելուզակների հարձակումներին: «Ալ-Թակադդում» թերթն իր համարներում անդրադարձել է նաև հայերի՝ քրդերի հարձակումները կանխելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի լուսաբանմանը: Մասնավորապես, թերթի համարներից մեկում նշվում է, որ հայկական պատվիրակությունը, որի կազմում էին Գ. Բաստրմաջյանը (էրզրում), Մեծն Մուրադը (Ադանա), Վ. Փափազյանը (Վան), Գեղամը (Մուշ) և Գ. Ջոհրապը (Կ. Պոլիս), գնացել է Բ. Դուռ: Նրանք բանակցել են մեծ վեզիրի և ներքին գործերի նախարարի հետ Արևմտահայաստանի հայերի խնդրի հարցով, որոնց նյութական ունեցվածքները բռնազավթվել են և վաճառվել չնչին գներով<sup>303</sup>: «Հայկական պատվիրակությունն առաջարկել է հանձնաժողով ուղարկել այդ շրջաններ՝ ուսումնասիրելու այդ խնդիրը և հողերը իսկական տերերին վերադարձնելու համար: Երկար քննարկվում էր այն հարցը, թե ինչպես կարելի է լուծել այդ խնդիրը և փրկել այդ շրջանների բնակիչներին թշվառությունից: Ուստի հնարավոր է, որ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան անձամբ գնա այդ վիլայեթներ և զբաղվի հողային խնդիրների լուծմամբ»<sup>304</sup>: Իսկ «Հայերը և քրդերը» վերնագրով հոդվածում տեղեկացվում է, որ հայոց պատրիարքարանը կառավարությանը փոխանցել է այն շինությունների ցուցակը, որոնք քրդերը խլել են հայերից. «Դրա մեջ մտնում են 27 եկեղեցի, 12 գերեզմանոց, 18 կրոնական շինություն, 6000 բնակելի տուն, որոնց պատկանելության վերաբերյալ փաստաթղթերը գտնվում են հայերի մոտ, որոնք վկայում են այդ

<sup>303</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 26 նոյեմբեր 1910, Կ. Պոլիս, 1911:

<sup>304</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 123:

շինությունների՝ հայերի սեփականություն լինելը»<sup>305</sup>: Մեկ այլ հոդվածում հաղորդվում է, որ «հայ պատրիարքարանի խորհուրդը նիստ է գումարել, որում որոշվել է կառավարության ուշադրությունը բեռել այն հարցի վրա, թե ինչպես են քրդերը վատ վերաբերվում հայերին, որի հետևանքով վերջիններս ստիպված մտնում են ճշմարիտ հավատի (մահմեդականության) մեջ»<sup>306</sup>: «Մուշում» վերնագրով հոդվածում էլ ներկայացվում է տեղի հայերի հոգևոր առաջնորդի՝ Կ. Պուլսի հայոց պատրիարքին հասցեագրած նամակը, որում ասվում է. «Մեր վիլայեթում բացակայում է անվտանգությունն ու կարգուկանոնը: Քրդերն այս շաբաթ մեկ հայ են սպանել Խուաթ գյուղում, և մի հայի էլ՝ Իսսա Քաունում: Այս քառասյին իրավիճակը բնակիչներին սարսափեցնում է: Ցանկանում ենք, որ Ղուք դիմեք բարձր ատյաններին՝ այս վիլայեթում անվտանգություն հաստատելու համար»<sup>307</sup>:

Կառավարության գիտությամբ քրդերը կոտորում, կողոպտում էին հայերին: Որոշ դեպքերում օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականները ենթարկվում էին բռնի կրոնափոխության, որի մերկացմանն է ուղղված «Ալ-Թակադդում» թերթի «Քրիստոնյա զինվորների իսլամացումը» վերնագրով հոդվածը: Հոդվածում տեղեկացվում է, որ հայ պատրիարքը բողոքի նոտա է ուղարկել պատերազմի նախարարությանը՝ բողոքելով, որ որոշ հայ զինվորականներ իրենց զինվորական ծառայության ընթացքում ենթարկվում են կրոնափոխության: Ի պատասխան հայ պատրիարքի բողոքի՝ «պատերազմի (ռազմական) նախարարն ուսումնասիրություն իրականացնելուց հետո գրություն ուղարկեց հայ պատրիարքին՝ հայտնելով, որ նա մինչ այդ պահին իրենց

<sup>305</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 118:

<sup>306</sup> Նույն տեղում, 1911, № 228:

<sup>307</sup> Նույն տեղում, № 233:

զինվորական ծառայության ընթացքում ոչ մուսուլմանի իսլամացման որևէ դեպքի ականատես չի եղել»<sup>308</sup>:

Իթթիհադականներն առանձնակի թշնամությամբ էին լցված դեպի հայ ազատագրական շարժումը՝ այն դիտելով որպես կայսրության դեմ ուղղված առավել վտանգավոր սպառնալիքներից մեկը: Նրանք քաջալերում էին քուրդ, թուրք, չերքեզ ելուզակներին, հափշտակիչներին, որոնք անպատիժ շարունակում էին հայ ժողովրդի թալանն ու ջարդը<sup>309</sup>: Երիտթուրքական կառավարությունն այդ ոգով համապատասխան հրահանգներ էր տալիս Արևմտյան Հայաստանում իր նահանգային իշխանություններին: Դրա խոստուն օրինակը չորրորդ ռազմական շրջանի մուշիր, չորրորդ բանակային կորպուսի հրամանատար և արևելյան վիլայեթների նահանգապետ Օսման փաշայի՝ Մուշի սանջակի Իսազյուղում արտասանած ճառն է, որի նպատակը հայ-քրդական հարաբերությունների սրումն էր: Այս խնդրի լուսաբանմանն է նվիրված «Ալ-Թակադդում»-ի «Զորավար Օսման փաշան և հայերը» վերնագրով հոդվածը: Հոդվածում նշվում է, որ «Օսման փաշային դիմավորել են երեք հայ հոգևորական և խնդրել են, որպեսզի այդ շրջաններում վերականգնի հանգստությունն ու անվտանգությունը: Նրանց միջև գրույցն ընթացել է այդ շրջաններում մի քանի հարյուր քրդերի, թուրքերի և այլ ազգերի բնակվելու հարցի շուրջ, որից հետո նա հանդես է եկել ճառով»<sup>310</sup>: Օսման փաշայի ճառը լայն արձագանք գտավ մամուլում. այդ ճառը ներկայացրել են հայկական թերթերը, Կ. Պոլսի թուրքական որոշ թերթեր, նաև մեծ աղմուկ է բարձրացվել եվրոպական մամուլում: Մինչև ճառը ներկայացնելը, հոդվածագիրը նախ խոսում է մարշալ Օսման փաշայի մասին: Օսման փաշան 19-րդ դարում եղել է

<sup>308</sup> «Ալ-Թակադդում», 1910, № 201:

<sup>309</sup> Իզմիրյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պեյրութ, 1964, էջ 153:

<sup>310</sup> «Ալ-Թակադդում», 1911, № 222:

սահմանադրության ամենաընդդիմադիր գործիչներից մեկը և վայելել է Աբդուլ Համիդի վստահությունը՝ կատարելով նրա ամենակարևոր հանձնարարությունները: Նրան բազմիցս հրահանգել են սահմանադրության կողմնակիցներին ճնշումների ենթարկել: «Նա հարձակվել է Ջանայի վրա, ուր գտնվում էին Նիյազի և Անուրի ազատության ջատագովները՝ վերջիններիս ձեռքակալելու նպատակով: Սակայն Նիյազին և Անուրը իրենց մարդկանցով ձեռքակալում են Օսման փաշային, կապում աչքերը և տանում լեռները»<sup>311</sup>: Սահմանադրության ընդունումից հետո Օսման փաշան զոջում է իր արարքների համար և ազատ է արձակվում, որից հետո զբաղեցնում է վերոհիշյալ կարևոր պաշտոնը Օսմանյան պետությունում: Այնուհետև հողվածում ներկայացվում է նրա ճառը. «Դուք՝ հայերդ,- ասում էր Օսման փաշան,- դավաճանում եք մեր երկրին և իրավունք չունեք բողոք ներկայացնել քրդերի դեմ: Քրդերը չեն զավթել ձեր հողերը և չեն հարձակվել ձեզ վրա, և այն, ինչ դուք ասում եք, դատարկ, անհիմն քարոզչություն է և կեղծ մեղադրանք: Այո, այս հողերը եղել են ձերը, սակայն մենք՝ օսմանցիներս, եկանք այստեղ մի քանի հարյուր մարդկանցով, պատերազմեցինք ձեզ հետ և թրերի օգնությամբ վերցրեցին ձեր վանքերը ու բնակիչներին կրոնափոխ արեցինք: Եթե դուք իսկապես տղամարդ էիք, կռվեիք և հետ վերցնեիք ձեր վանքերը»<sup>312</sup>: Օսման փաշան իր ճառում նշում է, որ հայերը խելացի ժողովուրդ են և միշտ պաշտպանել են իրենց իրավունքները, իսկ ինչ վերաբերում է քրդական տարրին, ապա նրանք միշտ տգետ են եղել և միայն զենքով են կարողացել պաշտպանել իրենց իրավունքները: Հայկական պետականության կործանման համար Օսման փաշան մեղադրում է հայերին՝ հայտարարելով, որ հայերն են լքել իրենց երկիրը և մեկնել օտար

---

<sup>311</sup> «Ալ-Թակադդում», 1911, № 222:

<sup>312</sup> Նույն տեղում:

երկրներ՝ պատճառաբանելով, թե իրենք ենթարկվում են քուրդ հրոսակախմբերի հարձակումներին. «Դուք ստում եք և դրանով մեղք եք գործում: Դուք վնասակար ազգ եք, և քրդերը ձեզ վնաս չեն պառճառի, եթե հանգիստ մնաք ձեր տեղերում: Դուք պահանջում եք լուծարել համիդիե գնդերը, որպեսզի ուզենաք անել, ինչ ուզում եք, սակայն իմացեք, որ նրանք մշտապես կմնան՝ ձերբակալելու ձեր առաջնորդներին: Դուք սովոր եք ձեր դպրոցների կառավարումը հանձնել օտարներին, և դրանով դավաճանում եք ազգին, ուստի կառավարությունն անհրաժեշտ չսփոփվ կդաստիարակի ձեզ: Չնայած կառավարության որոշ պաշտոնյաներ վախենում են ձեզանից, սակայն ես այստեղ ևս մեկ անգամ հայտարարում եմ, որ ձեզանից չեմ վախենում»<sup>313</sup>: Ահա սա էր «Իթթիհադ վե Թերաքքը» միության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի կարծիքը հայերի մասին: Հողվածագիրը ցավով ու ափսոսանքով նշում է, որ Օսմանյան պետության մեջ կան նման գաղափարների տեր մարդիկ, և թե ինչպես կարելի է Օսման փաշային, ով նախկինում ղեկավարել է բռնապետական ուժերը, թույլ տալ մտնել «Իթթիհադ վե Թերաքքը» միության շարքերը և նրան հանձնել սահմանադրական զորքերի ղեկավարությունը: «Ջարմանալ կարելի է այս հարցի նկատմամբ իշխանության անուշադրությունից: Կառավարության ամենակարևոր պարտականություններից է շտապ ուսումնասիրել այս հարցը և քայլեր ձեռնարկել»<sup>314</sup>, - ասում է հողվածագիրը:

Վերն ասվեց, որ Օսման փաշայի ճառը մեծ աղմուկ բարձրացրեց տեղական և օտար մամուլում: Դրան էր նվիրված նաև «Ժեոն Թուրք» թերթի քաղաքական խմբագիր և տնօրեն Ջալալ Նուրի բեյի հողվածը, որում ներկայացված է մայրաքաղաքի թերթերի արձագանքն այս ճառի վերաբերյալ: Մասնավորապես,

<sup>313</sup> «Ալ-Թակադդում», № 222:

<sup>314</sup> Նույն տեղում:

նրանում ասվում է. «Մենք չենք ուզում մեկնաբանել կամ վերլուծել զորավար Օսման փաշայի ճառը, որը վատ նպատակներ է հետապնդում: Նրան ոչ ոք թույլ չէր տվել հանդես գալ նման ճառով՝ պախարակելով օսմանյան ազգի մի մասնիկը: Կառավարությունը պետք է շտապ մանրամասն բացատրություններ ու պարզաբանումներ տա այս դեպքի հետ կապված, որը մեծ աղմուկ է բարձրացրել հայկական շրջանակներում՝ հատկապես մամուլում: Ինչպես նաև կառավարությունը պետք է հարցաքննի զորավարին իր ճառի հետ կապված, որը ստեղծված քառսային դրության գլխավոր պատճառն է»<sup>315</sup>:

Օսման փաշայի ճառից հետո Կ. Պոլսի Ազգային ժողովը հանձնարարում է Ազգային վարչությանը պատգամավորության միջոցով դիմում ուղարկել օսմանյան կառավարությանը և պաշտպանության նախարար Մահմուդ Շեվքեթ փաշային՝ Օսման փաշայի ճառը դատապարտելու համար<sup>316</sup>:

1912 թ. սկզբներին քուրդ ավազակները շարունակում էին կողոպտել ու թալանել հայ ժողովրդին, և օսմանյան իշխանությունները, ինչպես միշտ ոչինչ չէին անում: Քուրդ ավազակների վայրագությունների նկատմամբ օսմանյան իշխանությունների անտարբերության մերկացմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի «Իրավիճակն Անատոլիայում» վերնագրով հոդվածը: Այստեղ ներկայացվում է, որ հայերը հատկապես Վանում և Բիթլիսում, ենթարկվում են բռնությունների, հարձակումների, և որ իրադրությունը հասել է կրիտիկական աստիճանի. «Վանի հայ եպիսկոպոսը հայտնում է, որ մեկ ամսվա ընթացքում քսանից ավելի հանցագործությունների ականատեսն է եղել: Քուրդ ավազակները հարձակվել են հայկական մի քանի գյուղերի վրա և գողացել ոչխարներ ու այլ անասուններ, ներխուժել են երկու գյուղ և կո-

<sup>315</sup> «Ալ-Թակադդում», № 223:

<sup>316</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 22 հուլիս 1911, Կ. Պոլիս, 1911:

ղոպտել ու թալանել բնակիչների ունեցվածքը: Հայկական գյուղերի բնակիչների մեջ տիրում են վախն ու քառուք. նրանք վախենում են դուրս գալ իրենց տներից, զբաղվել գյուղատնտեսությամբ, օրվա հացը վաստակել»<sup>317</sup>: Նույն իրավիճակն էր նաև Բիթլիսում: Հարձակումները, բռնությունները, բռնաբարությունները դարձել էին հայ ժողովրդի առօրյա կյանքի անբաժանելի մասը, ճանապարհներն էլ անվտանգ չէին, և չկար ռազմական բավականաչափ ուժ վերջ դնելու այս քաոսային իրավիճակին: «Եվ եթե կառավարությունը շտապ միջոցներ չկիրառի, դրությունն ավելի կվատթարանա, դժբախտությունն ավելի կսաստկանա»<sup>318</sup>, - եզրակացնում է թերթը: Այս դեպքերի առնչությամբ հայկական ազգային հայրենասիրական միությունը նիստ գումարեց, որի ընթացքում արձանագրություն ընդունվեց (որի տակ ստորագրել էին երկու հազարից ավելի մարդ)՝ պահանջելով կառավարությունից պաշտպանել հայերին քրդական հարձակումներից, հակառակ պարագայում կփակվեն եկեղեցիներն ու դպրոցները: Թեժ քննարկումներից հետո որոշվեց սպասել մեկ շաբաթ, և եթե այդ ընթացքում վիճակը չփոխվեր, ապա հայկական միությունները կփակեին եկեղեցիները, դպրոցները և կսկսեին համարժեք գործողություններ իրականացնել քրդերի դեմ<sup>319</sup>:

1911 թ. երիտթուրքական վարչակարգը մխրճվեց ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամի մեջ: 1911 թ. սեպտեմբերին սկսված իտալա-թուրքական պատերազմը նոր փորձություն եղավ իթթիհադականների համար: Պարտություն կրելով՝ վերջիններս հայտնվեցին քաղաքական ծանր պայմաններում: Նրանց հետ համագործակցությունը շարունակելու համար Ռաշնակցություն կուսակցությունը ներկայացրեց իր պահանջները, որի լուսաբանմանն անդրադարձել է նաև «Ալ-Թակադդումը»:

<sup>317</sup> «Ալ-Թակադդում», 1912, № 270:

<sup>318</sup> Նույն տեղում:

<sup>319</sup> Նույն տեղում, № 270:

Մասնավորապես, «Հայերի պայմանները» վերնագրով հոդվածը տեղեկացնում է, որ «հայերը (Ղաշնակցություն կուսակցությունը) պայման են դրել «Իթթիհադ վե Թերաքքը» միության վրա, որի բավարարումից հետո հայերը կկանգնեն նրանց կողքին»<sup>320</sup>: Այդ պայմաններն էին՝

1. Իրականացնել Արևելյան Անատոլիայի վիլայեթներում 1890 թ. ի վեր հայերից բռնագրավված տարածքների խնդրի ուսումնասիրությունը, վերադարձնել այդ տարածքները, դրանց լիակատար իշխելու իրավունքն իրենց իսկական տերերին, ինչպես եղել է մինչև 1890 թ.: Եվ այդ ամենը իրականացնել հին պետական փաստաթղթերը, որոնք հաստատում են հայերի իրավունքները, վերջիններիս ներկայացնելուց հետո:

2. Մուսուլման գաղթականներին տրվող դրամական հատկացումները տրամադրել նաև նախկին վարչակարգի ճիրաններից օտար երկրներ ապաստան գտած, այնուհետև սահմանադրության ընդունումից հետո Օսմանյան կայսրություն վերադարձած հայերին (մուսուլման գաղթականներն ազատված էին պետական հարկերից - *Մ.Ե.*):

3. 1890 թ. ի վեր հայկական տարածքներում բնակվող մուսուլման գաղթականներին տեղափոխել ուրիշ ազատ վայրեր և բնակեցնել կայսրության այլ վայրերում (օր.՝ Հյուսիսային Աֆրիկա): Ոչ մի ազատ հող չպետք է մնա. գյուղին պատկանող անտառները, թփուտները, վարելահողերը պետք է մշակվեն առանց արգելքների:

4. Հեռացնել պարտքի դիմաց կամ այլ պատճառներով հայկական գյուղերը բռնագավթած մարդկանց այդ գյուղերից, և ստեղծել հանձնաժողով՝ ուսումնասիրելու նրանց պահանջներն ու դրանց օրինականության աստիճանը դատարաններում:

---

<sup>320</sup> «Ալ-Թակադդում», 1912, № 282:

5. Լուծում տալ հողային պահանջներին, որոնք բռնագավթել են քուրդ աղաները 1890 թ. ի վեր: Քրդերին և հայերին, որոնք մնացել են առանց հողի, պետք է հողակտորներ հատկացվեն պետական ազատ հողերից: Եվ այդ հատկացումները այնպես պետք է իրականացվեն, որ քրդերին տրվեն այն հողերը, որոնք նախկին բնակության վայրից գտնվում են առնվազն ութ ժամվա հեռավորության վրա:

6. Հեռացնել այն պաշտոնյաններին, ովքեր ինչ-որ չափով կապ են ունեցել տեղի բնակիչների հետ և նրանց տեղերում նշանակել նրանց, ովքեր ոչ մի կապ չունեն այդ կողմերի հետ, ինչպես նաև աստիճանաբար ավելացնել հայ պաշտոնյաների թիվը, մինչև որ նրանց թվաքանակն ուղիղ հարաբերական լինի տեղաբնիկ հայերի թվին<sup>321</sup>:

Օգտվելով իտալա-թուրքական պատերազմում իթթիհադականների կրած պարտությունից՝ 1912 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում իշխանության ղեկն անցավ իթթիյաֆականներին («Հյուրիեթ վե Իթթիյաֆ»): Մի պահ կրկին թվաց, թե հայերի համար նպաստավոր իրավիճակ է ստեղծվել, և վերջ կդրվի հայքրդական բախումներին: Դա պայմանավորված էր նրանով, որ նոր կառավարությունը հայտնեց, որ լուծելու է հողային վեճերը հայերի և քրդերի միջև ու վերջ է տալու Արևմտյան Հայաստանում անօրինականություններին: 1912 թ. սեպտեմբերին իթթիյաֆական կառավարությունն որոշեց գնել այսպես կոչված «վիճելի» հողերը և դրանք անվարձահատույց բաշխել հողագուրկ հայ գյուղացիությանը<sup>322</sup>: Դա առաջ բերեց քրդերի դժգոհությունը, և իթթիյաֆական կառավարությունն ևս քայլ առ քայլ զիջեց իր դիրքերը՝ վախենալով, որ քրդական ելույթները կարող են վերածվել հակակառավարական համընդհանուր շարժման, ուստի

<sup>321</sup> Նույն տեղում:

<sup>322</sup> Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989, էջ 276-277:

1912 թ. վերջին հրաժարվեց այդ ծրագրից: Սակայն շուտով՝ 1913 թ. հունվարի 10-ին, օգտվելով Բալկանյան պատերազմում հրթրյաֆական կառավարության կրած պարտությունից, երիտթուրքերը վերականգնեցին իրենց իշխանությունը: Թուրքիայում հաստատվեց երիտթուրքական եռապետության՝ Էնվերի, Թալեաթի, Ջեմալի ռազմական դիկտատուրան: Դաշնակցություն կուսակցությունն այս անգամ ևս մտադիր էր շարունակել համագործակցությունը հրթրհաղականների հետ և նորից արաջ քաշեց իր պայմանները: Այս խնդրի լուսաբանմանը «Ալ-Թակադդում» թերթն անդրադարձել է «Դաշնակցություն կուսակցության պահանջները» վերնագրով հոդվածում, որում ներկայացված է հայկական Դաշնակցություն կուսակցության ղեկավարներից Սաֆարյանի՝ օտարերկրյա թերթերից մեկին տված հարցազրույցը: Այդ հարցազրույցի ընթացքում Սաֆարյանը նշում է, որ Դաշնակցություն կուսակցությունն Արևելյան Անատոլիայի համար պահանջում է ոչ կենտրոնամետ վարչական լայն իշխանություն, և որ այդ շրջանների հարցը պետք է լուծվի օրենքի շրջանակներում: Իսկ հողային հարցերի հետ կապված՝ Սաֆարյանն ասում է, որ այն պետք է ուսումնասիրվի քաղաքական, տնտեսական, հասարակական տեսանկյուններից: Հայերը պահանջում են հողային օրենսգրքի միայն մեկ կետի իրականացումը, այն է՝ եթե մարդը ստիպված լքում է իր երկիրը և տասը կամ քսան տարի հետո վերադառնում է, ապա իր հողերը պետք է վերադարձվեն իրեն: «Այս օրենքը պետք է վերաբերի միայն հայերին, քանի որ քրդերը, թուրքերը և մյուս ազգերն այս հարցում որոշակի կանոնադրություն ունեն: Բացի այդ՝ հայկական գյուղերը հավասար վիճակում չեն՝ քրդական և թուրքական գյուղերի հետ համեմատած»<sup>323</sup>: Հասարակական տեսանկյունից էլ Սաֆարյանը նշում է, որ հայկական գյուղերի բնակիչները ճնշված են զգում իրենց և

---

<sup>323</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 391:

ցանկանում են, որ բռնություններ կատարողները ձերբակալվեն: Այդ ժամանակաշրջանում Արևելյան Անատոլիայի վիլայեթներում տեղի ունեցած սպանությունների ճնշող մեծամասնությունը կատարվել էր հողային խնդիրների և Վանի ու Բիթլիսի վալիների պաշտոնական որոշումների պատճառով: Սաֆարյանը հարցազրույցի ժամանակ անդրադարձավ նաև լեզվի, դպրոցների խնդրին՝ պահանջելով, որ հայերենն ու քրդերենն օգտագործվեն դատավարություններ իրականացնելիս, ինչպես նաև ազգային դպրոցները պետք է վայելեն լիակատար ազատություն, մինչդեռ կառավարությունը միջամտում է դպրոցների գործերին՝ կապված առողջապահական, երեխաների դաստիարակության խնդիրների հետ: Խոսվեց նաև օտարերկրյա հովանավորության մասին, որի առնչությամբ Սաֆարյանը նշեց, որ «հայերը չեն աշխատում ի շահ նրանց, այլ աշխատում են հենց իրենց՝ հայերի համար, ուստի օսմանյան կառավարությունը պետք է իրականացնի պահանջվող բարեփոխումները, որպեսզի վերջ տրվի օտարերկրյա հովանավորության մասին լուրերին»<sup>324</sup>:

Իթթիհադականները, սակայն, մտադիր չէին իրականացնել հայերի պահանջները, և Ղաշնակցություն կուսակցությունը, վախենալով, որ արևմտահայության շրջանում իսպառ կկորցնի իր ազդեցությունը, 1913 թ. օգոստոսի 17-ին տեղի ունեցած կուսակցության 7-րդ համագումարում որոշեց խզել կապերն իթթիհադականների հետ:

Բալկանյան պատերազմում կրած ծանր պարտությունից հետո թուրքական կառավարող շրջաններում տիրապետող մտայնություն դարձավ «Անատոլիան վտանգի մեջ է» կարգախոսը<sup>325</sup>: Այդ ժամանակ ասպարեզ իջած հայկական բարենորոգումները երիտթուրքերի կարծիքով ռուսական իմպերիալիզմի հերթական

<sup>324</sup> «Ալ-Թակադդում», № 391:

<sup>325</sup> «Բյուզանդիոն», 1912, № 907:

հարվածն էր: Այդ առիթով Ջեմալն իր մոտ էր կանչել դաշնակցական Սերանգուլյանին և ասել. «Եթե դուք պնդեք եվրոպական վերահսկողության վրա, ապա արդյունքն այն կլինի, որ վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչությունը ոտքի կկանգնի, ու 300000-400000 հայեր կկոտորվեն: Եվ հավանական էր, որ ռուսները, օգտվելով այդ առիթից, կգան ու կգրավեն այդ վիլայեթները»<sup>325</sup>: Միաժամանակ երիտթուրքական կառավարությունը չէր բացառում, որ Արևմտյան Հայաստանում հայկական բարենորոգումների իրականացման հետևանքով կարող է հող նախապատրաստվել հայ-քրդական դաշնակցության համար: Ուստի թուրքական կառավարությունն առաջ քաշեց նաև այն թեզը, որ հայերի պահանջներն ուղղակի սպառնալիք են քրդերի շահերին<sup>327</sup>: Ինչպես նաև հայկական բարենորոգումները ձախողելու նպատակով երիտթուրքական կառավարության դրդմամբ օսմանյան խորհրդարանի քուրդ պատգամավոր Աբդուլ Ղադերը ներկայացրեց «Ինքնավար Քրդստանի» մի նախագիծ<sup>328</sup>: Իրենց հերթին բազմաթիվ հայ գործիչներ աշխատում էին համոզել քրդերին, որ հայկական բարենորոգումները բարիք կհանդիսանան նաև քուրդ ժողովուրդի համար: Պետք է նշել, որ այս հարցում քրդերը միասնական ընդհանուր տեսակետ չունեին, սակայն նրանց մեծ մասը այն կարծիքին էր, որ հայկական բարենորոգումների իրագործումը սպառնալիք կարող է հանդիսանալ «քրդական դատի համար»<sup>329</sup>: Սակայն հայկական բարենորո-

<sup>326</sup> Տես՝ Պողոսյան Ս. Կ., նշվ. աշխ., էջ 209:

<sup>327</sup> Հայ-քրդական հարաբերությունների վատթարացմանը նոր խթան հաղորդելու համար գործի դրվեցին բոլոր միջոցները: Այդ գործում ակտիվորեն ներգրավվեցին թուրք մտավորականության ազգայնամոլ տարրերը, որոնք գործում էին Բ. Ղառանջյանի ղեկավարությամբ: Մանրամասն տես՝ Պողոսյան Ս. Կ., նշվ. աշխ., էջ 211-213:

<sup>328</sup> «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Քրդագիտություն, Եր., 1975, № 7, էջ 44:

<sup>329</sup> Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989, էջ 294-301:

գումները չիրականացվեցին առաջին համաշխարհային պատերազմի պատճառով:

1913 թ. ընթացքում շարունակվեցին հայ-քրդական հարաբերությունների վատթարացումը, քրդերի կողմից իրականացվող բռնությունները և թալանը: «Ալ-Թակադդում» հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ իր մնացած հոդվածներում ողջ ուշադրությունը կենտրոնացնում է 1913 թ. հայոց պատրիարքության ձեռնարկած քայլերի, հայ պատրիարքի՝ օսմանյան կառավարությանն ուղղած հուշագրերի լուսաբանման վրա: Մասնավորապես, «Հայկական պատվիրակությունը մեծ վեզիրի մոտ» վերնագրով հոդվածում ներկայացվում է, որ հայկական պատվիրակությունը պատրիարք Հ. Արշարունիի գլխավորությամբ մեկնել է Բ. Դուռ: Պատվիրակության կազմում էին արքեպիսկոպոսներ Հմայակ Դիմաքսյանը և Միհրան Գարագաւոյանը կրոնական (հոգևոր) խորհրդից, Ստեփան Գարայանն ու Արղանյանը՝ քաղաքական խորհրդից: Պատվիրակությանն ընդունել է Մահմուդ Շեվքեթ փաշան՝ մեծ վեզիրը, և հանդիպումը տևել է մոտ երկու ժամ<sup>330</sup>: Ջրույցը սկսել է պատրիարքը. «Կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի հայերի նկատմամբ իրականացվող անարդարությունները կանխելու համար: Սակայն այս ուղղությամբ կառավարության պաշտոնյանները ոչինչ չեն անում, այլ քաջալերում են բռնություն կատարողներին շարունակել հարձակումներեն ու բռնությունները, և այսօր հայ ժողովուրդը կանգնած է բնաջնջվելու վտանգի առաջ»<sup>331</sup>: Իր խոսքի վերջում հայ պատրիարքը մեծ վեզիրից պահանջել է անհապաղ քայլեր ձեռնարկել այս քաոսային իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Այնուհետև հանդես է եկել քաղաքական խորհրդի նախագահ Գարայանը, ով հակիրճ ներկայացրել է այն հանցագոր-

<sup>330</sup> Պետք է նշել, որ հանդիպմանը ներկա չէին կառավարության ոչ մի բարձրաստիճան պաշտոնյա, ոչ էլ նախարարներից որևէ մեկը:

<sup>331</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 396:

ծությունները, որոնք իրականացրել են քրդերը հայերի նկատմամբ, անարդարությունները, որոնց ենթարկվել են հայերը: Գարայանը նույնպես կառավարությունից պահանջել է անհապաղ քայլեր ձեռնարկել հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու ուղղությամբ<sup>332</sup>: Հայ ազգը հույսով էր, որ սահմանադրության ընդունումից հետո հայերի նկատմամբ զանազան հանցագործություններին և ջարդերին վերջ էր դրվելու, ինչպես նաև իրականացվելու էին խոստացված բարենորոգումները: Օսմանյան սահմանադրության ընդունումից սկսած հայերը Բայազետից, Ալաշկերտից, Մուշից, Խնուսից և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից իրենց նկատմամբ իրականացվող բռնությունների և ջարդերի մասին բազմաթիվ հեռագրեր և նամակներ էին հղում Կ. Պոլսի Ազգային Ընդհանուր ժողովին<sup>333</sup>:

Մեկ այլ՝ «Հայոց պատրիարքի հուշագրությունը» վերնագրով հոդվածում լուսաբանվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ մեծ վեզիրին ուղղած հուշագիրը: Այստեղ ներկայացվում էր հայերի ծանր ու տխուր վիճակը՝ շարունակաբար սահմանադրական կառավարությանը հիշեցնելով բռնությունների մասին, որոնց ենթարկվում էին հայերը. «Հայ ազգը մեծ հույսեր էր կապում սահմանադրական կառավարության հետ, սակայն այս տարիների ընթացքում հայերի հույսերը չարդարացան, այլ հակառակը՝ այդ բռնությունների շարավիզը օրեցօր ավելի է մեծանում: Մենք պահանջում ենք ձեզանից, արդարադատության և ներքին գործերի նախարարություններից երևան հանել այս անարդարությունները, որի մասին տեղյակ է կառավարությունը: Ներկա ժամանակներում դաժան անարդարություններ են տեղի ունենում Վանի, Բիթլիսի, Ադանայի, Դիարբեքիի վիլայեթներում, և խնդրում ենք ձեր ուշադրությունն ուղղել այս ոչ սովորա-

<sup>332</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 396:

<sup>333</sup> ՀՀ ԳԱԹ, Ատենագրություն Ազգային ժողովոյ, 29 ապրիլ 1911, Կ. Պոլիս, 1911:

կան իրադրությունների ուղղությամբ»<sup>334</sup>: Պատրիարքն իր հուշագրում նաև տեղեկացնում էր, որ Անատոլիայի որոշ բնակիչներ օսմանյան գործերի կրած անհաջողությունները վերջին պատերազմներում վերագրում են քրիստոնյաներին, ինչպես նաև խոսվում էր կայսրության սահմաններում հայկական տարրի բնաջնջման մասին, քանի որ դրանով կվերանային օտար պետությունների միջամտությունները Օսմանյան կայսրության ներքին գործերին քրիստոնյաների պաշտպանության պատրվակով, ինչպես տեղի ունեցավ Թուրքիայի եվրոպական մասում: Այդ պատճառով անհրաժեշտ էր պահպանել թուրքական տիրույթները ասիական մասում՝ օտարների ոտնձգություններից: «Սա, ինչպես նաև կառավարության անտարբերությունը՝ ուղղելու այս աղավաղված լուրերը Երզնկայում, իրականում տեղի ունեցածի պատճառն են: Գրությունները, որոնք տարածվեցին այս իրադարձությունից հետո, կրկնապատկեցին մարդկանց ատելությունը հայերի նկատմամբ: Մենք տեսնում ենք, որ այս լուրերը դիտավորյալ են արված, և կառավարության կողմից չենք տեսնում ոչ մի փորձ՝ դրանք վերացնելու ուղղությամբ: Եվ եթե կենտրոնական իշխանությունը հարցնում է այդ վիլայետների պաշտոնյաներին հայերի բողոքների մասին, ապա նրանք ընդհանուր կանոնի համաձայն թաքցնում են ճշմարտությունը՝ վախենալով աշխատանքից ազատվելու վտանգից»<sup>335</sup>: Հայերի վիճակն այս շրջանում ավելի ծանր էր, քան Աբդուլ Համիդի կառավարման տարիներին: Կառավարությունն այս ուղղությամբ ոչ մի քայլ չէր կատարում, նույնիսկ Ադանայի կոտորածի մեղավորները չէին պատժվել: Տեղական մամուլը հողվածներ էր հրատարակում այն մասին, թե ինչը դրդեց քրդերին հանդես գալ հայերի դեմ: Եվ այս բոլորից հետո կառավարությունը կրկին ոչ մի քայլ չէր անում: «Ադանայի ողբերգության կապակցությամբ դատա-

<sup>334</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 400:

<sup>335</sup> Նույն տեղում:

պարտված մարդիկ հաճախ այցելում են Ադանայի վիլայեթի վալիին, իսկ այն մարդիկ, որոնք բանտարկվել էին Վան քաղաքում՝ հայ ուսուցչի և հոգևորականի սպանելու մեղադրանքով, ազատ են արձակվել նույն վալիի հրամանով, մինչդեռ հայերից շատերը շարունակում են բանտարկված մնալ»<sup>336</sup>: Ադանայի վիլայեթի հայ բնակչության մեծ մասը փախել էր լեռներ՝ ձերբազատվելու անարդարություններից: Այս նույն ժամանակահատվածում (1910-1913 թթ.) հարյուրավոր հայեր էին սպանվել Բիթլիսի վիլայեթում, իսկ մեղավորներն ազատորեն շրջում էին շուկաներում: Քրդերն իրենց հերթին մշտապես զինվում էին և հափշտակում հայերի ունեցվածքը. «Ադանայի և Բիթլիսի վիլայեթների մուսուլման բնակիչների մեջ այնքան էր մեծացել թշնամանքը քրիստոնյաների նկատմամբ, որ նրանք արդեն երեք տարի է՝ արգելել էին եկեղեցիների գանգերը հնչեցնել, իսկ բազմաթիվ հայեր, ովքեր բնակվում էին մշտական սպառնալիքի տակ, թողել են իրենց ունեցվածքը և մեկնել այլ երկրներ»<sup>337</sup>, - եզրակացնում է թերթը:

Այսպիսով, 1910-1913 թթ. «Ալ-Թակադդում» թերթը արաբախոս ընթերցողներին հայտնում էր, որ երիտթուրքերը շարունակում են օսմանյան սուլթանների քաղաքականությունը՝ երկրի տարածքում բնակվող ժողովուրդներին հրահրելով միմյանց դեմ: Թուրքական տիրապետող շրջանները, քուրդ ժողովրդի մեջ մտապես «սպանելով» ազգային ինքնագիտակցության զգացումը և իսլամն օգտագործելով որպես լծակ, քրդերին օգտագործել են որպես գործիք՝ հայերին կոտորելու ու թալանելու համար:

Հնարավոր է՝ ապագայում ևս հայ և քուրդ ժողովուրդների ճակատագրերը կրկին անխուսափելիորեն խաչաձևվեն, ուստի այս երկու ժողովուրդները պետք է պատրաստ լինեն դրան և թույլ չտան անցյալի ցավալի սխալների կրկնությունը:

<sup>336</sup> «Ալ-Թակադդում», 1913, № 400:

<sup>337</sup> Նույն տեղում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օսմանյան կայսրության պատմության անբաժանելի մասն են կազմում ազգային պետական գաղափարախոսական համակարգերը, որոնք պայմանավորեցին կայսրության ներքին ու արտաքին քաղաքականությունը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանց որդեգրած դիրքորոշումը: Այս առումով ուշադրության է արժանի պանիսլամիզմի գաղափարախոսության, որը սուլթան Աբդուլ Համիդ երկրորդի օրոք բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի: Հպատակ ազգերի, այդ թվում և հայերի կոտորածներով Աբդուլ Համիդը ձգտում էր կասեցնել նրանց ազգային ազատագրական պայքարը: Երիտթուրքերի իշխանության գալուց հետո վերջիններս ծավալեցին պանթուրքիզմը՝ այն դարձնելով իրենց ներքին և արտաքին քաղաքականության գաղափարական առանցքը, որի հիմքում թուրքալեզու ժողովուրդների մեկ ազգ լինելու և բոլորին մեկ պետության մեջ միավորելու գաղափարն է: Եվ այս գաղափարախոսությունը դարձավ երիտթուրքերի նվաճողական քաղաքականության հիմնական գաղափարական զենքը:

Թուրքացման պետական քաղաքականությանը դիմակայելու ընդհանուր խնդիրը դարձավ այն կարևոր հենարանը, որի վրա կառուցվեց հայ-արաբական բարեկամությունը: Այս բարեկամական հարաբերությունները էլ ավելի ամրապնդվեցին Մեծ Եղեռնից հետո, արաբական երկրներում հայ տարագիրների փրկության և օթևան գտնելուց հետո:

Օսմանյան կայսրության տարածքում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս անցանկալի տեղեկատվության տարածման դեմ օսմանյան իշխանությունների իրականացրած առաջին քայլը կայսրության տարածքում գրաքննության հաստատումն էր, որն իր ամբողջ ուժով ուղղվեց գրքի գրաքննության հետ մամուլի

դեմ: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերը մի կողմ դնելով հեղափոխության ընթացքում իրենց հետ համագործակցած ազգերի ներկայացուցիչներին տված խոստումները, իրենց ուշադրությունը կենտրոնացրին երկրում խոսքի ազատության սահմանափակման վրա: 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածներից հետո երիտթուրքական իշխանություններն էլ ավելի ուժեղացրին մամուլի նկատմամբ հետապնդումները: Կայսրությունում հրատարակվող բոլոր պարբերականները դրվեցին գրաքննության կապանքների մեջ: Մամուլի նկատմամբ հետապնդումները նոր թափ ստացան Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո, և 1914 թ. սկզբից փակվեցին բազմաթիվ պարբերականներ:

Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ջարդարարական քաղաքականությունը զբաղեցրել և այժմ էլ զբաղեցնում է ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային հանրությանը՝ շատ պետությունների կողմից որակվելով իբրև ցեղասպանություն: Միջազգային հանրությունը, հայ և օտարերկրյա պատմագիտական միտքը շարունակում են լուրջ ուշադրություն դարձնել ցեղասպանության պատմությանը, որ կազմում է նույնական հարցի ամենաողբերգական էջը: Բուն Հայկական հարցի վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ փաստաթղթեր և նյութեր կարիք ունեն խորը և համակողմանի ուսումնասիրության, որի արդյունքների գիտական շրջանառությունը նոր լույս կսփռի հայության պատմության այս տարիների բազում մութ ծալքերի վրա: Հայկական հարցի իրողությունների լուսաբանման և դրա նկատմամբ Սիրիայի արաբների վերաբերմունքը գնահատելու տեսակետից իրենց առանձնահատուկ դերն ունեն 1908-1914 թթ. Սիրիայի արաբալեզու մամուլի նյութերը:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին օսմանյան իշխանությունների կողմից իրականացված հայկական կոտորածների ու գաղթի, երիտթուրքական իշխանությունների՝ օսմա-

նահպատակ ազգերին իրար դեմ հրահրելու քաղաքականությունը իր յուրահատուկ արձագանքն է գտել Սիրիայի խոշոր քաղաքներում՝ Դամասկոսում և Հալեպում, լույս տեսած արաբական պարբերական մամուլի էջերում: Այս վերջինս, 1908-1914 թթ. ժամանակահատվածի շրջանակներում դարձել է սույն ուսումնասիրության առարկան: Աշխատության մեջ փորձ է արվում ներկայացնել 20-րդ դարի սկզբին Հայկական հարցի վերաբերյալ մի շարք նոր հայանպաստ փաստեր և նյութեր:

Խնդրո առարկա հիմնահարցի քննությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները.

- Սիրիայի արաբալեզու մամուլը 1877-1914 թթ. իր էջերում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական կոտորածների, գաղթի, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների, ելույթների, ճառերի ու նամակների մասին:
- Սիրիայի արաբալեզու մամուլում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս ցույց են տալիս 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների անցկացման հարցում Թուրքիայի մերժողական քաղաքականությունը:
- 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների պատմությանն առնչվող տարբեր հիմնահարցերի մեկնաբանությունը Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ տեղիք է տվել բուռն բանավեճերի և տարակարծությունների: Դրանցից կարևորագույններից է կոտորածների պատասխանատուների բացահայտման խնդիրը: Այս խնդրի առնչությամբ Սիրիայի արաբալեզու մամուլում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս ապացուցում են, որ կոտորածների հրահրման մեջ առաջնային դեր է խաղացել երիտթուրքական կառավարությունը: Մասնավորապես, «Ալ-Թակադդում» թերթը հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածների հետ կապված տարբեր խնդիրներ:

րի լուսաբանմանը: Ճիշտ է, թերթը որպես կոտորածների գլխավոր պատճառ նշում է տնտեսական գործոնը, սակայն միաժամանակ հայտնում է, որ կոտորածները կազմակերպել են օսմանյան իշխանությունները: Կարծում ենք, որ Կիլիկիայի հայերի կոտորածն իր հիմքում ուներ քաղաքական հին պատճառը՝ հայերին բնաջնջելը, որպես Օսմանյան կայսրության ամբողջականության ապահովման գառանցական փաստարկ և պետական քաղաքականություն: Տնտեսական պատճառն այստեղ ուներ երկրորդական, գայթակղիչ և հրահրող նշանակություն:

- Սույն աշխատությունը հատկապես օգտակար կլինի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Սիրիական մամուլը՝ մասնավորապես «Ալ-Թակադդում» թերթը, ուշաժրպ տվյալներ է հաղորդում հայերի զոհերի քանակի վերաբերյալ, որոնք օգտակար կլինեն հայ պատմաբանների համար 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների ընթացքում սպանված հայերի ընդհանուր թիվը ճշտելու գործում: Այս հարցն էական է, քանի որ հայ և օտարազգի պատմաբաններն այս առնչությամբ առաջադրել են իրարամերժ տեսակետներ. զոհերի թիվն, ըստ նրանց հաշվարկների, տատանվում է հիմնականում 20000-ից 30000-ի միջև: Մեր կողմից ուսումնասիրվող Սիրիայի արաբալեզու մամուլի էջերում նշվում է, որ զոհերի ընդհանուր թիվը գերազանցում է 30000-ը:
- Հայոց ցեղասպանության պատմության մեջ կարևոր հարցերից է նաև 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների ժամանակ հայերի կրած նյութական վնասների հարցը, որի շուրջ պատմաբանների գերակշռող մասը սպառնիչ տեսակետներ չի հայտնել արժանահավատ և լիարժեք սկզբնաղբյուրների բացակայության պատճառով: Սիրիայի արաբալեզու մամուլի հաղորդած տեղեկությունները օգտակար կլինեն նաև վե-

րոնշյալ խնդրի լուծման համար: Մասնավորապես Կիլիկիայում այրված կամ քանդված եկեղեցիների, տների ու խանութների թվի մասին հաղորդվում է, որ այն հասնում է 4823-ի, որից 4437-ը հայերի, 386-ը՝ մուսուլմանների սեփականություն համարվող շենքերն են:

- «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները մերկացնում են երիտթուրքական իշխանությունների՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդներին իրար դեմ հրահրելու քաղաքականությունը: Թուրքական տիրապետող շրջանները, քուրդ ժողովրդի մեջ մշտապես «սպանելով» ազգային ինքնագիտակցության զգացումը և իսլամն օգտագործելով որպես լծակ, քրդերին օգտագործել են որպես գործիք հայերին կոտորելու ու թալանելու համար:
- «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս ապացուցում են, որ երիտթուրքական վարչակարգն աբդուլհամիդյան բռնակալական վարչակարգի հետևորդն էր: Բացի այդ՝ թերթը մերկացնում է 1908 թ. հեղաշրջումից հետո կայսրությունում տիրող իրավիճակը:

Թեև 1908-1914 թթ. Սիրիայի արաբալեզու պարբերական մամուլում Հայկական հարցի վերաբերյալ լրատվության հոսքն այնքան էլ կանոնավոր չէր՝ պայմանավորված թուրքական իշխանությունների կողմից լրատվության դեմ կիրառվող զանազան արգելքների ու նյութական դժվարությունների հետ, այնուամենայնիվ, ուսումնասիրելով դրանցում տպագրված նյութերը, կարելի է որոշակի պատկերացում կազմել 1908-1914 թթ. թուրքական իշխանությունների կողմից իրականացված հայահալած քաղաքականության վերաբերյալ:

## **THE ARMENIAN QUESTION IN THE ARAB MEDIA OF SYRIA 1908-1914**

The massacre perpetration policy of the Ottoman Empire in late 19th and early 20th centuries has been involving and continues to involve both the Armenian and the international community, being qualified by many nations as genocide. The international community, the Armenian and foreign historiography continue paying serious attention to the history of the Genocide that makes the most tragic page in the Armenian Issue. A myriad of documents and materials about the Armenian Genocide itself need to be deeply and comprehensively studied; the scientific circulation of the results of such studies will shed a new light on the many dark folds of the Armenian history of those years. From the standpoint of coverage of the realities of the Armenian Issue and assessing the attitude of Syrian Arabs to it, the materials published by the Syrian Arab media during 1908-1912 have their special roles to play.

The policy of the Ottoman authorities of massacres and deportation in late 19th and early 20th centuries and the policy of the Young Turks government to provoke different nations under the Ottoman rule against each other have found their unique reflection in the Syrian Arab media. The paper attempts to present a number of new facts and materials of the beginning of the 20<sup>th</sup> century about the Armenian Issue.

Exploring the issue under consideration allows drawing the following conclusions:

- The Syrian Arab media provides valuable information about the Armenian massacres and deportation rallies in 1907-1914.
- The articles published in the Syrian Arab media indicate once again the Turkish denial politics in conducting Armenian reforms in 1912-1914.

- The articles published in the Syrian Arab media once again prove that the Young Turks government played an important role in perpetration of massacres of Armenians in Cilicia in 1909.
- The Syrian media, in particular the *Al-Takaddum* newspaper reports remarkable data on the number of Armenian victims, which will be useful for Armenian historians in identifying the total number of killed Armenians during the massacres of 1909 in Cilicia.
- The information reported by the Syrian Arab media is also useful for calculating the material losses of Armenians during the massacres.
- The articles published in *Al-Takaddum* newspaper once again prove that the Young Turks regime was the follower of the dictatorial regime of Abdul Hamid. In addition, the newspaper sharply criticizes the situation in the empire after the upheaval of 1909.

Although the news flow on the Armenian Issue in the Syrian Arab media of 1908-1914 was not very regular conditioned by various obstacles and financial difficulties used by the Turkish authorities against media, nonetheless, studying the materials published, we can get definite insight about the anti-Armenian policy.

اصداء القضية الأرمنية في الصحافة العربية السورية 1908-1914

إهتمّ ولا يزال يهتمّ المجتمع الأرمني والعالمي بسياسة المذابح التي قامت بها الإمبراطورية العثمانية في أواخر القرن التاسع عشر وأوائل القرن العشرين والتي وصفت كمجزرة /جينوسيد/ من قبل دول عديدة. إن تاريخ المجزرة الأرمنية لا يزال في إنتباه المجتمع الدولي والفكرة التاريخية الأرمنية والأجنبية كصفحة أكثر مأساوية في تاريخ المجازر. تحتاج الكثير من وثائق ودراسات القضية الأرمنية بحثًا عميقًا سيسلط تداولها العلمي لنتائجه ضوءًا جديدًا على الصفحات المختلفة لتاريخ الأرمن. في هذا الصدد ومن حيث تقدير وجهة نظر العرب السوريين في الصحافة العربية السورية (1908-1914) دور مميز. مذابح وهجرة الأرمن المنظمة من قبل السلطات العثمانية وتركيا الفتاة في أواخر القرن التاسع عشر وأوائل القرن العشرين وجدت اصداء واسعة في الدوريات السورية.

وبعد دراسة وتحليل المواد تضمّ الدوريات العربية السورية مواضيع دراستنا يمكن القول أن

. أفادت الصحف العربية السورية (1877-1914) معلومات قيمة عن مذابح وهجرة الأرمن.

. أشارت مقالات عديدة الى سياسة الرفض في شأن تحقيق الإصلاحات الارمنية (1912-1914)

. تدلّ المقالات في الدوريات السورية العربية بان لحكومة تركيا الفتات دور بارز في تحقيق المذابح أرمنية في قيليقيا في سنة 1909.

. تأتي الصحافة السورية وخاصة جريدة "التقدم" بمعلومات جديدة عن عدد الضحايا الارمن التي سوف تساعد المؤرخين في تصحيح عدد الارمن ذهبت قتلا للمذابح في قيليقيا. تساعد المعلومات المشار اليها في تبين الخسائر المذبة التي اصيبت بها الارمن خلال المذابح.

. تدلّ مقالات جريدة "التقدم" الى ان ادارة تركيا الفتات هي خليف حقيقي للادارة التركية السابقة المستعبدة.

. تظهر جريدة "التقدم" اوضاع الامبراطورية بعد انقلاب 1908.

. جملة القول بعد تحليل المقالات عن الأرمن تمت نشرها في الصحف السورية العربية (1908- 1914) يتصور لنا سياسة الحكومة التركية الممارسة بنسبة الارمن في الإمبراطورية العثمانية.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբդ ալ Քարիմ Ուաֆիկ 12, 39  
Աբդ առ-Ուահման ալ-Քաուաքիբի  
34, 35  
Աբդուլ Համիդ երկրորդ 3, 4, 27, 31,  
54, 55, 67, 99, 117, 122, 123, 125,  
129, 140, 142  
Աբդուլ Ղադեր 137  
Աբու Ֆախր Ա. 12  
Ադիբ Իսհակ 26  
Ազատյան Թ. 12  
Ազարյան 108  
Ազեզեան Հ. 13  
Ալի Բիբ Ֆարին 100  
Ալի Քեմալ (բեյ) 57, 58, 59  
Ալի Քուրդ Մուրադ 100  
Ալիան ալ-Մաշուտի Մ. 12  
Ալիև Գ. 14  
ալ-Մուդաուար Մ. 12  
ալ-Քարիմ Ուաֆիկ Աբդ 12  
Ահմադ բեյ 125  
Ահմադ Քուրդ Ալի 46  
Ամին 101  
Անուր 129  
Աշճեան Հ. 13  
Առաքելյան Հ. 13  
Ասլանյանի Գ. 12  
Արամ Հալաջյան 108  
Արիսյան Ն. 13  
Արղանյան 138  
Արշարունի Հ. 85, 138  
Արսազան 125  
  
Բաբան զադե Մուարաֆա Ջիհնի  
փաշա 93  
Բաբգէն վարդապետ 15

Բաբիլ Ն. 13  
Բայբուրդյան Վ. 14  
Բաստրնաջյան Գ. 126  
Բեհաեդդին Շաքիր բեյ 103  
Բեքիր Սամի բեյ 104  
Բոյաջյան Հ. 15  
Բութրուս ալ-Բուսթանի 26  
  
Գասպարյան Ա. 111  
Գասպարյան Ռ. 14  
Գարագաշյան Սիիրան 138  
Գարայան Ստեփան 138  
Գեղամ 126  
Գևորգ Ե. Կաթողիկոս 74  
Գուլկնիչ Կ. 84  
Գրիգոր Չոհրապ 39, 40, 47, 65,  
84, 104, 126  
  
Ղայա ժ. 12  
Ղանիֆ 72, 73  
դը Լակրուան 82  
Ղիմաքսյան Հմայակ 138  
Ղուրյան 106  
  
Էնվեր փաշա 39, 135  
Էվզաֆի բեյ 70  
  
Թալեաթ բեյ 64, 107, 135 Թալեաթ  
փաշա 84, 126  
Թերզեան Յ. 13  
  
Ժան Ղայան 35  
Ժուզեֆ Իլիաս (Իլիաս ժ.) 12, 49,  
50

Իայո ադ Դին Բիք 50  
Իբրահիմ ալ-Յալիջի 26  
Իզմիրլեան Կ. 14  
Իհսան Ֆիքրի 98  
Իսմայիլ Հազ բեյ 104  
Իսմայիլ Հաքք (բեյ) 51, 52

Լոկա Ի. 12

Խալիլ Ռիֆաթ 50  
Խառատյան Ա. 14  
Խուդուր Ա. 12

Կիրակոսյան Զ. 15  
Կոլյուբակին Ա. Ս. 15  
Կոտլով Լ. 13  
Կուսեյրի Ջադահա Աբդ ալ Սամդ  
Ալայ 101

Հալաձեան Պ. 84, 65  
Համբարյան Ա. 14, 110  
Հաջի Ադիլ բեյ 70, 76  
Հաքի փաշա 47  
Հմայակ Իսաքրոյան 108  
Հովհաննիսյան Ն. 13  
Հուսեյն 124  
Հուսեյն Հիլմի 98, 107  
Հոֆֆ 89

Մալազի Ա. 12  
Մահմուդ Ալիան Մաշուտ 29, 30  
Մահմուդ Շեվքեթ փաշա 70, 131,  
138  
Մանդելշտամ Ա. 77, 78  
Մանուկ Ազատյան 69  
Մարուա Ա. 12  
Մեծն Մուրադ 126

Մեհմեդ Մեծ 107  
Միդհատ Շյուքրի 64  
Մուա Խ. 12  
Մուհամմադ Ալի 17, 23  
Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ 14,  
94, 110  
Մուհամմադ Քուրդ Ալի 12-13, 36,  
37, 44, 45  
Մուշեղ եպիսկոպոս 13, 102  
Մուսլի Ս. 12  
Մուստաֆա Ռենգի փաշա 113  
Մուստաֆա Վասեֆ 35

Յաֆի Ն. 12  
Յեյդ Խեյրի 40  
Յոհան 81

Նազըմ Բեյ 36  
Նաջարյան Ե. 13, 33  
Նասուհ Բաբիլ 41  
Ներսես վարդապետ 103  
Նիյազ 129  
Նովիչև Ա. 15  
Նորա Արիսյան 11  
Նորատունկյան Գ. 106  
Շարիֆ 125  
Շուքրի Քանիդր 49

Պապիկյան Հ. 100  
Պարթևյան Ա. 13, 110  
Պողոս Նուբար փաշա 75, 76, 79,  
80, 82, 83, 85-88, 90  
Պողոսյան Ա. 14, 15

Ջալալ Նուրի բեյ 117, 119, 130  
Ջենալ (փաշա) 36, 37, 135, 137  
Ջենալ բեյ 70, 104

Ջևադ բեյ 113

Ռիզկալլա Հասուն 33

Սալլահ ադ-Ղին ալ Կասամ38

Սահակ վարդապետ 103

Սահել Մալազի 32-34

Սայիդ Հալիմ 78, 84

Սայիդ փաշա 68, 69

Սաֆարյան 135, 136

Սիմոնյան Հ. 14

Վարդգես (Սերանգուլյան) 39, 40,  
41, 47, 64, 137

Վեստենենկ 89

Տարազի Ֆ. 12

Փափազյան Վ. 126

Քաուրշուկ Օսման բեյ 101

Քոնթանսոն L. 15

Քուանար Ուստրու 81

Օմար 101,124

Օսման 125

Օսման փաշա 128-131

Օսմանի Հ. 12

Օտյան Ե. 15

Ֆախր ադ-Ղին 2-րդ Սաանի 18

Ֆեյսալ 34

Ֆերիդ փաշա 94

Abdul Hamid 149

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղանա 41, 42, 45, 47, 48, 54, 56, 69, 90, 92-105, 107-114, 117, 126, 139-141

Ազհար 91

Ալաշկերտ 139

Ալբանիա 70

Ալեքսանդրիա 36, 91, 102, 113

Ալժիր 46, 57

Ախլաթ 116

Ամերիկա (ԱՄՆ) 19, 112, 114, 117

Ամասիա 51

Այնթափ 111

Անատոլիա 42, 45, 72, 75, 87, 139

Անգլիա 19, 50

Անթալիա 114

Անթակիա 46

Անթիլիաս 107

Անտիոք 54

Ասիա 71

Ավստրիա 72

Ավստրո-Հունգարիա 74

Ատանա 93

Արաբական Արևելք 18

Արաբական թերակղզի 3

Արաբիա 22

Արարատ լեռ 72

Արգենտինա 112

Արևելյան Անատոլիա 44, 68, 81, 84, 85, 120, 133, 135, 136

Արևելյան Եփրատ 116

Արևելք 3, 18, 56, 73

Արևմուտք 18, 19

Արևմտահայաստան 84, 126

Արևմտյան Հայաստան 43, 63, 68, 69, 70, 73-75, 79, 81, 89, 90, 109,

116, 118, 119, 120, 126, 128, 134, 137, 139

Բալկանյան թերակղի 3

Բալկանյան պետություններ 73

Բալկաններ 67, 76, 87

Բաղեշ 104

Բաղիջահ 112

Բայազետ 139

Բայաս ամրոց 100

Բեյրութ 24, 25, 112

Բեռլին 43, 67, 72, 73, 82, 86, 119

Բիթլիս 68, 75, 76, 116, 118, 131, 132, 136, 139, 141

Բուլղարիա 3, 72, 73

Գարայան 139

Գերմանիա 73, 74, 77, 78

Գոգան 112

Դամասկոս 5, 11, 30, 35, 45, 46, 50, 144

Դեորթ-Յօլ 103, 111, 112

Դիարբեքիր 68, 75, 76, 118, 139

Եգիպտոս 3, 15-17, 22, 23, 24, 45, 57, 91, 112, 113

Եմեն 3, 56

Եմի-Ջոյ 78

Եվրոպա 3, 18, 23, 41, 44, 58, 74,  
75, 76, 82, 83, 85, 87, 88, 117  
Երզնկա 140

Ջեյթուն 45

Էջմիածին 85  
Էրզրում 68, 75, 77, 104, 118, 126

Թարաբլուս 58

Թունիս 57

Թուրքիա (օսմանյան) 5, 39, 47, 54,  
66, 67, 68, 70, 71-75, 78, 80, 82-85,  
89, 90, 99, 101, 107, 119, 135, 140,  
144

Իզմիր 45, 109

Ինջիրլիք 111

Իսա գյուղ 128

Իսսա Քաուն 127

Իսքենդերուն 114

Իտալիա 74

Իրան 123

Իրաք 3, 22, 46, 57

Լափաշլի 111

Լեռնալիբանան 72

Լիբանան 16-18, 21, 22, 24, 25, 40,  
43, 71, 72

Լոնդոն 26, 75, 82

Խարբերդ 68, 75, 76, 118

Խնուս 139

Խուաթ գյուղ 127

Կ. Պոլիս (Կոստանդնուպոլիս) 8,  
50, 54, 61, 63, 65, 67, 69, 75-79, 80,  
81, 85, 87, 99-109, 111, 114, 123,  
124, 125, 126-128, 131, 139

Կահիրե 113

Կարին 64, 65

Կարս 35

Կիլիկիա 2, 6, 8, 10, 14, 41, 50, 90-  
94, 96, 98, 99, 101, 104, 106-108,  
111-115, 143-146

Կիպրոս 47, 112

124, 125

Հալեպ 11, 28, 30, 32-35, 49, 92,  
114, 120, 144

Հաճըն 98, 102, 103, 106, 111

Հայաստան 11, 72, 116, 119

Հասան-Բեյլի 111

Հյուսիսային Աֆրիկա 133

Հունաստան 3

Մակեդոնիա 70, 88

Մարաշ 102, 108

Մերձավոր Արևելք 15, 16, 74

Մերսին 93, 112, 114

Միջին Արևելք 15

Միջրկրական ծով 23

Մուշ 45, 126, 128, 139

Նյու Յորք 118

Շամի երկիր 3

Շեր սանջակ 123

Պաղեստին 17

Պարսից ծոց 68

Պետերբուրգ 82

- Ողոս 58  
Ումիինիա 3  
Ուսաստան 3, 35, 67, 68, 72, 73-75, 77-79, 85, 86, 88, 89, 123
- Սան-Ստեֆանո 67  
Սասուն 45, 67, 116  
Սեբաստիա 68, 75, 77, 118  
Սերբիա 3  
Սիս 8  
Սիրիա 5-7, 11, 17-19, 21-26, 28, 31, 32, 35, 36, 39, 43, 46, 57, 143, 144  
Սոտերիա 102  
Սվաա 77  
Ստամբուլ 25, 33
- Վան 64, 65, 68, 75, 76, 104, 118, 126, 131, 136, 139, 141  
Վանա լիճ 116  
Վիեննա 82
- Տարսուն (Տարսուս) 107, 111, 112
- Փարիզ 25, 26, 79, 82, 83, 93  
Փոքր Ասիա 67
- Քեսաբ 111, 112  
Քուրդիստան 119, 120
- Օսմանյան կայսրության 3-5, 18, 24, 27, 28, 31, 32, 35, 36, 37, 41, 45, 47, 49, 52, 54-57, 59, 60-62, 66, 70, 72-74, 76, 81, 8387, 88, 90, 94, 92, 104, 115, 117, 121, 133, 134, 140, 142, 143, 145, 146  
Օսմանյան պետության 3, 58, 61, 116, 129, 130
- Ֆրանսիա 19, 71, 74, 88, 89, 93, 99
- Cilicia 149  
Ottoman Empire 148
- الإمبراطورية العثمانية 150  
قبليقيا 150

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## *Սկզբնաղբյուրներ*

### *Արխիվային նյութեր*

1. Հայաստանի Ազգային Արխիվ /ՀԱԱ/
2. ֆ. 57, ց. 5, գգ. 14,49:
3. Հայաստանի Հանրապետության Ե. Չարենցի անվան Գրականության և Արվեստի Թանգարան /ՀՀԳԱԹ/
4. Թ. Ազատյանի ֆ., գգ. 6420, 7231, 7500:
5. Գ. Ավանյանի ֆ., 5279, 5280, 5281, 5282, 5283, 5285:

## *Աշխատություններ*

### *ա) հայերեն*

1. Ազեգեան Հ., Արաբական գարթօնքը և հայ գործիչները, Հալեպ, 2008:
2. Առաքելյան Հ., Ձեյթուն: Տեղեկագրական, ազգագրական և վարչական պատմություն. Թիֆլիս, 1896:
3. Աշճեան Հ., Ատանայի եղեռնը և Գոնիայի յուշեր, Նւվ Եորք, 1956:
4. Բարզէն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուպար փաշան, Վաղարշապատ, 1914:
5. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989:
6. Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008:
7. Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Եր., 2010:

8. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Եր., 2005:
9. Թերզյան Հ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912:
10. Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրուս, 1964:
11. Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր., 1965:
12. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Եր., 1999:
13. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 2, Եր., 2004:
14. Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Գահիրէ, 1909:
15. Նաջարյան Ե., Արաբական մշակութային զարթոնքը, Եր., 1988:
16. Պարթևյան Ս., Կիլիկիոյ արիավիրքը, Կ. Պոլիս, 1909:
17. Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, Եր., 1991:
18. Պողոսյան Ս., Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Եր., 2004:
19. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Եր., 1996:
20. Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009:
21. Բօնթանսոն Լ-տը, Հայկական հարցի վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913:
22. Օտեան Ե., Պօղոս Նուպար փաշա (կենսագրական նյութեր), Կ. Պոլիս, 1913:

*բ) ոռուսերեն*

1. Алиев Г.З., Турция в период правления младотурок (1908-1918гг.), М., 1972.

2. Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975.
3. Котлов Л., Становление национально-освободительного движение в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986.
4. Новичев А., Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937.

*գ) արաբերեն*

1. نورا اريسيان, أصداء الأرمنية في الصحافة السورية (1877-1930), دمشق 2004. Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության լուսաբանումը սիրիական մամուլում (1877-1930 թթ.), Դամասկոս, 2004:
2. عدنان أبو فخر: الصحافة السورية بين النظرية والتطبيق, دمشق 1985. Աբու Ֆախր Ա., Սիրիական մամուլը տեսության և պրակտիկայի միջև, Դամասկոս, 1985:
3. نصح بابل, صحافة وسياسة سورية في القرن العشرين, لندن 1987. Սիրիայի մամուլը և քաղաքականությունը 20-րդ դարում, Լոնդոն, 1987:
4. أيوب حضور, الصحافة السورية, نشأتها تطورها واقعاها الراهن, دمشق 1972. Իսուդուր Ա., Սիրիական մամուլը. հիմնումը, զարգացումը և ժամանակակից փուլը, Դամասկոս, 1972:
5. جان داية, صحافة الكواكبي, بيروت 1984. Ալ Բաուաքիբիի մամուլը, Բեյրութ, 1984:
6. عبد الكريم راقق, العرب والعثمانيون 1516-1916, دمشق 1993, ալ-Քարիմ, Արաբները և օսմանցիները 1516-1916 թթ., Դամասկոս, 1993:
7. صالح زهر الدين, سياسة الحكومة العثمانية في ارمينيا الغربية, بيروت 1996. Ջահր ադ Դին Սալեհ, «Օսմանյան կառավարության քաղաքա-կանությունն Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում», Բեյրութ, 1994, էջ 173:

8. Swarraqh F., دي طرازي تاريخ الصحافة العربية الجزء الثاني, بيروت 1913. Արաբական մամուլի պատմություն, երկրորդ մաս, Բեյրութ, 1913:
9. هاشم عثمان , الصحافة السورية ماضيها وحاضرها 1877-1970م, دمشق 1997. Օսման Հ., Սիրիական մամուլի անցյալը և ներկան 1877-1970 թթ., Դամասկոս, 1997:
10. محمد كرد علي ,منكرات, الجزء الخامس, دمشق 1951. Ալի Մուհամմադ, Հուշեր, 5-րդ մաս, Դամասկոս, 1951:
13. اسكندر لوقا, الحركة الادبية في دمشق 1800-1918, دمشق 1976. Գրական շարժումը Դամասկոսում 1800-1918 թթ., Դամասկոս, 1976:
14. مروان المدور, الأرمين عبر التاريخ, بيروت 1982. Ալ-Մուդաուար Մրվան, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982:
15. أديب مروه الصحافة العربية نشأتها وتطورها, بيروت 1961. Արաբական մամուլ. հիմնումը և զարգացումը, Բեյրութ, 1961:
16. محمود عليان المشوط, تاريخ الصحافة السورية و العربية, دمشق 1986. Ալիան ալ-Մաշուտ, Սիրիական և արաբական մամուլի պատմությունը, Դամասկոս, 1986:
17. سهيل الملازي, الطباعة والصحافة في حلب, دمشق 1996. Հրատարակությունը և մամուլը Հալեպում, Դամասկոս, 1996:
18. منذر موصلي, الصحافة العربية ومؤسساتها, دمشق 1991. Արաբական մամուլը և նրա հիմնադիրները, Դամասկոս, 1991:
19. الياس, تطور الصحافة السورية خلال مائة عام (1865-1965), الجزء الاول (1865-1865), بيروت 1983. جوزيف Իլիաս Ժ., Սիրիական մամուլի զարգացումը հարյուր տարում (1865-1965), առաջին մաս (1865-1918), Բեյրութ, 1983:
20. نعيم اليافي, خليل الموى, نضال الارمن والعرب ضد الاستعمار العثماني, بيروت 1989. Յաֆի Ն., Մուա Խ., Արաբների և հայերի պայքարը օսմանյան զաղութացման դեմ, Բեյրութ, 1989:

## *Պարբերական մամուլ*

### *ա) հայերեն*

1. «Ազատամարտ», 1909:
2. «Բյուզանդիոն», 1909:
3. «Դաշինք», 1910:
4. «Հորիզոն», 1910:
5. «Հուսաբեր», 1913:

### *բ) արաբերեն*

1. "التقدم" «Ալ-Թակադդում», Հալեպ, 1908-1914:
2. "الشهية" «Ալ-Շահիբա», Հալեպ, 1877-1878:
3. "الشمس" «Ալ-Շամ», Դամասկոս, 1896:
4. "المعتب" «Ալ-Մուքթաբաս», Դամասկոս, 1908-1914:
5. "الامة" «Ալ-Ումմա», Դամասկոս, 1909-1910:

## *Հոդվածներ*

### *ա) հայերեն*

1. Խառատյան Ա., Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2009, № 1:
2. Համբարյան Ա., Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1988, № 4:
3. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Բրդազիտություն, Եր., 1975, № 7:

### *բ) արաբերեն*

1. محمد رفعت الامام, مذيح أضنه أبريل 1909 وأثرها في مصر, اريك, عدد 7, نوفمبر, 2010  
Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, 1909 թ. ապրիլի կոտորածները և դրանց արձագանքը Եգիպտոսում, Արեգ, Կահիրե, 2010, նոյեմբեր, № 7:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ ԱՈՍԱԶԻՆ	
ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԼԵԶՈՒ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1877-1914 թթ.)	
1.1. Արաբական ազգային մշակութային կյանքի զարթոնքն ու Սիրիայի արաբական մամուլը .....	16
1.2. Հայերի դրության, գաղթի, կոտորածների լուսաբանումը .....	31
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ «ԱԼ-ԹԱԿԱԴՂՈՒՄ» ԹԵՐԹՈՒՄ (1908-1914 թթ.)	
2.1. 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության իրավիճակի ու խորհրդարանական ընտրությունների մասին անդրադարձը .....	49
2.2. Հայկական բարենորոգումների լուսաբանումը (1912-1914 թթ.) .....	66
2.3. Կիլիկիահայության 1909 թ. կոտորածի լուսաբանումը .....	90
2.4. Հայ-քրդական հարաբերությունների լուսաբանումը (1910-1913 թթ.) .....	115
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	142
THE ARMENIAN QUESTION IN THE ARAB MEDIA OF SYRIA 1908-1914 .....	147
149 .....1914 -1908 <i>مياستیک یسویان</i> <i>أصداء القضية الأرمنية في الصحافة العربية السورية</i>	
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ .....	150
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....	153
ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԱՂՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	156

ԵՍՈՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ ՄԻՐԻԱՅԻ  
ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՍՈՒԼՈՒՄ  
1908-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

MYASNIK ESOYAN

THE ARMENIAN QUESTION IN THE ARAB  
MEDIA OF SYRIA 1908-1914

مياسنيك يسويان

أصداء القضية الأرمنية في الصحافة العربية السورية 1908-1914

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 26.02.2015 թ.  
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
RA, 0019, Երևան, пр. Маршала Баграмяна 24/4  
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>





[2000 ր.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0389667

A 8  
101318